



370.1  

---

P-71

370

1876-FL

370.1

453

15 MAR 2013

F-7108

ՄՏԱԻՈՐ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

# Ի Ն Ք Ն Ա Կ Ր Թ Ո Ւ Թ Ե Ա Ն

## Մ Ե Ա Ի Ն

Խորհուրդներն աչն Երևտասարգներին, որոնք կեանքի ասպարէզը մտնում և ցանկանում են կանոնաւորապէս պատրաստուիլ ուսումնական և Հասարակական գործունէութեան Համայնքին:

1003  
1977



ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՋՈՆ ԱՏԻԱՐՏ ԲԼԵՎԿԻՆ**

**Էղինբուրգի Համալսարանի յունարէն լեզուի և գրականութեան պրոֆէսորի:**

Handwritten notes in purple ink, including the word "Կարգ" (Order) and other illegible characters.

Ռուսերէնից Պարզմանեց

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉ՝

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԳԱՂԵԱՆՅ

ՏՓԻՌՍ

Ի Տպարանի Յովհանէսի Մարտիրոսեանց:

1881

0 5 MAR 2013

45.121

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԱՅԵՐԱՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ԵՐԱՅԵՐԱՆ

Տպագրված է Երևանի «Գրական տպարան»-ում  
1880 թ. հունիսի 11-ին

Дозволено Цензурою. Тифлисъ, 11-го Юля 1880 г.

Тип. И. Мартиросянца. на Орбелія. улицѣ д. № 5.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.**

	Երես.
Մտաւոր կրթութեան մասին . . . . .	1.
Ֆիզիքական կրթութեան մասին . . . . .	35.
Բարոյական կրթութեան մասին . . . . .	48.

ԻՒՐ ԲԱԶՄԵՐԱԽՏ ԲԱՐԵՐԱՐ

ՏՓԻՒՍՈՒ ՎԱՆԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ

ՏԷՏ-ՊՕՂՕՍԵԱՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻՆ՝

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Փարսիսի

ԲԱՐԵՐԱՐ

1

2  
3  
4

## ՄՏԱԽՈՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մե բան ղետեալ, երբէք աւելորդ չէ:

ԳեՅԹԵ.

I Նոր ժամանակումն երիտասարդները զխաւորապէս  
գրչեղն են ուսանում: Գրքերն անկասկած գիտութիւն ձեռք  
բերելու ամենօգտակար միջոցներն են, և մի որոշեալ չա-  
փով կարող են նպաստել նոյնպէս իբրև առաջնորդ գործ-  
նական պարագմութեան ժամանակ. բայց նոքա ոչ մի  
ժամանակ զարգացման բուն և բնական աղբիւրները չեն,  
և իմ կարծիքով նոցա աւելի մեծ նշանակութիւն են տա-  
լիս մինչև անգամ գիտութեան այն ճիւղերում, ուր նոցա  
կարևորութիւնը անհերքելի է: Ո՛չ մէկ զիպուածում նոքա  
չեն կարող անուանուիլ ~~արտաբնական~~ ոյժեր. նոքա լոկ միայն  
օժանդակ միջոցներ են, զէնքեր են, գործիքներ. այն ևս  
արհեստական գործիքներ. որոնք միայն լրացնում են խնա-  
մատար բնութիւնից մեզ պարգեւած ձիրքերը ուժեղացնելու  
ինչպէս որ գիտականներն ու խոշորացոյցներն են անում, որոնք  
պէսպէս հետազոտութիւնների ժամանակ բացում են մեր  
առաջ դեռ ևս անծանօթ հրաշալիքները. սակայն նոցա  
գործածութիւնը մեզ չը պիտի այն ծայրայեղութեան հաս-  
ցնէ, որ բարձի թողի առնենք մեր սեփական, բնատուր աչքի

վարժութիւնը: Գիտութեան սկզբնական ու բնական աղբիւրները ոչ թէ գրքերն են, — այլ հետնալը, փորձը, «եփանքան հասածողութիւնը, ներքին դժուարողութիւնը և անհասկան գործունէութիւնը»: Եթէ այսպէս սկսենք մեր կրթութիւնը. այն ժամանակ ՚ի հարկէ, գրքերով կարող են լրանալ շատ պակասութիւններ. ուղղուիլ շատ անձշտութիւններ, կատարելագործուել շատ թերութիւններ. իսկ եթէ մարդս աշխատում է առանց կենդանի փորձի, այն ժամանակ գրքերը նորա համար նոյն են, ինչ որ անձրևը և արեգակը անմշակ երկրի համար:

«Հին մագաղաթից չե բղխում այն սուրբ ցողը,  
 Որ ջերմ սրտի ծաղաւը անուշ դուլացնում է.  
 Եթէ մեր սրտի խորքից չե ծագում,  
 Արտաբուստ նա մեզ չե լուսաւորէ:»

(ԳԵՕՔԷԻ, ՖԱՌԻՍՏ. Մ. I.)

Այս ի հարկէ, փոքր ինչ բանաստեղծօրէն է արտայայտուած, բայց այնուամենայնիւ իւր մէջ պարունակում է մի մեծ, ընդհանուր ձշմարտութիւն: Ինչպէս որ հանքաբանութեան մասին դատողութիւնները իսկապէս չեն կարող ուսումնական հասկացողութիւն տալ այն մարդուն, որը երբէք հանք չի տեսել, այնպէս էլ գրական և բանաստեղծական հեղինակութիւնները չեն կարող կրթել այն աշակերտին, որը ծանօթ չէ կեանքի հետ. կամ երաժրշտութեան մասին դասախօսութիւններն անօգուտ են նորան, ով որ անձամբ չէ զգացել նուազի գայլայիկը. կամ քարոզներն ապարդիւն են այն մարդուն, որի հոգին չի ձգտում դէպի բարին, որի կեանքը ընկղմած է ախտերում: Ամենայն գիտութիւն «անմշակ» գրքերից չէ հաս-

նում մեզ, այլ մտածողութեան և դատողութեան միջնորդութեամբ: ձշմարտ գիտութիւնը աճում է մտածող հոգու մէջ եղած կենդանի արմատից, և ինչ որ հոգին արտաբուստ ընդունում է, այն ամենը կենդանի գործարանի մէջ մարմին և արիւն է դառնում, և չէ թէ լոկ միայն փոխանակվում և ամբարվում է անշահ:

II Այս պատճառաւ էլ ես անկեղծօրէն խորհուրդեմ տալիս երիտասարդներին գիտութեանց ուսումնասիրելը որքան կարելի է, փաստերի անմշակէ՞ս Բիւլետեն սիւնը և ոչ թէ գրքերից գիտնական եզրակացութիւններ սերտելով: Չեմ յիշում թէ ո՞վ հրատարակեց այս վերնագրով մի ձեռնարկ, թէ «Ինչպէ՞ս Բիւլետեն»: Թող այս երկուխօսքը ղեկավարեն մեզ իբրև նշանաբան մեր ինքնակրթութեան ամենանշանաւոր մասի մէջ, որը գժբադտաբար կատարելապէս բարձի թողէ է առնուած: Բոլոր բնական գիտութիւնները առանձնապէս պէտք է գնահատուին, ոչ թէ միայն այն պատճառով, որ մեր հոգուն ամենահարուստ, բազմակողմանի և անհրաժեշտ նիւթն են մատակարարում, այլ և նորա համար, որ սովորեցնում են մեզ ամենօգտակար արհեստներից մէկը, — այն է՝ աչքի գործածութիւնը: ձշմարտ շատ ողբալի է, թէ ինչպէս մենք ամենքս մանկեք գալիս աչքներս բաց, բայց և այնպէս ոչինչ չենք տեսնում: Այս նորանիցն է որ տեսողութեան գործարանը, ինչպէս նա և միւս գործարանները, զարգանալու կարօտ են. իսկ զարգացման պակասութեամբ և գրքերի ստրուկ լինելով, նա բթանում է, թուլանում և վերջապէս ընդունակութիւնը կորցնում իր բնական պաշտօնը կատարելու: Այս պատճառաւ էլ ցանկալի է, որ թէ ուսումնարանում և թէ համալսարանում բնական գիտութիւնները նախապատիւ տեղը բռնէին, որովհետև դժբա սովորեցնում են երիտասարդներին ճանա-

չէլ այն ինչ որ Գրեգորիոս էն, և տեսնել այն, ինչ որ ուրիշ կերպ չէր յաջողի նրանց տեսնել: Ամենաօգտակար առարկաներին պատկանում են՝ Բուսաբանութիւնը, Կենդանաբանութիւնը, Հանքաբանութիւնը, Ներկրաբանութիւնը, Քիմիան, Ճարտարապետութիւնը, Նկարչութիւնը և առհասարակ գեղարուեստները: Քանի՞ ճանապարհորդութիւններ մեր լերներում, (Շօտլանդիայում) և քանի՞ը ներպայտում գրեթէ անօգուտ անցան լոկ միայն գրքերով կերակրուած պատանիների համար այն պատճառաւ միայն, որ նոցա յայտնի չէին յիշեալ գննական դիտութիւնների տարրական տեղեկութիւնները:

III Դիտողութիւնը լաւ բան է, իսկ ճիշտ դիտողութիւնը աւելի լաւ: Բայց մեր դիտողական ընդունակութիւնը բոլորովին կը ճնշէին և կը խառնաշփոթէին աշխարհումս եղած չափազանց բազմատեսակ առարկաները, եթէ մենք մի յուսալի միջոց չունենայինք առարկաների այս բազմութիւնը որոշ, կանոնաւորող սկզբունքի ենթակելու և մեր հոգու հաշուետեսութեան տակ պահելու: Այս կանոնաւորող սկզբունքն է գասակարգութիւնը և կարող է մարդկային բանականութեամբ գտնուիլ, որովհետեւ յայտնի կերպով կայ աշխարհիս ամեն տեղերում և ատուածային բանականութեան առաջ չի ծածկվում: Այս գասակարգութիւնը հիմնուած է այն միջոցով որով մեր նմանութեան յատկութիւններումն է կայանում, որոնք երևում են մինչև անգամ ըստ երևութի իրարից բոլորովին տարբեր առարկաների մէջ: Նւ ահա նմանութեան այս յատկութիւնները, որոնց լաւ բնութեան է դիտող աչքը, միջոց են տալիս մեզ իրերի չափազանց բազմազանութիւնը կարգաւորել մեծ կամ փոքր յայտնի, խրմ-

բերի, որոնք սեռ և տեսակ անուններն են կրում, և որոնք համեմատող և զանազանող հոգւոյ հաշուետեսութեանն են ենթարկվում: Այս պատճառաւ էլ ուսանողի առաջին գործն է որ ամեն բանում, ինչ որ տեսնում է, լաւ նկատէ նմանութիւնները և սոցա հետ միասին աւելի աչքի ընկնող զանազանութիւնները. որովհետեւ նմանութիւնները այնպիսի սերտ կապ ունին զանազանութեանց հետ, ինչպէս լոյսը խաւարի հետ, և թէպէտ նոքա ինքն ըստ ինքեան չեն կաղճում մէկ իր, բայց այնուամենայնիւ որոշում են «էսը է-ից և մի և նոյն սեռի տեսակները միմեանցից: Դասակարգութիւնը կամ կարգը, որը ամեն իրերում պէտք է որոնել, իրերի Բնական կարգն է. իսկ արհեստական դասաւորութիւնը, ինչպէս օրինակ բառգրքում բառերի դասաւորելը այբուբենական կարգով, կամ բոյսերի դասաւորելը Լիննէյի եղանակով, օգտակար միջոցներ կարող են լինել ստորին դասատան աշակերտաց համար, բայց բացառապէս գործածելով, ամենեւին չեն նպաստում ճշմարիտ դիտութեան, այլ աւելի խանգարում են նորան: Նրիտասարգը նախ և առաջ պէտք է ձգտի ընդունակութիւն ստանալ իրերը իրենց բնական ցեղակցութեան համեմատ կապակցելու. բայց այս կարելի է միայն այն ժամանակ, երբ ընդհանուր երևոյթների մասին լայն հայացք ունենալով՝ կարող է ևս մասնաւոր յատկութիւնները ճշտիւ դիտել: Բոյսերի ժողովրդական անունները, առանց որ և է գանազանութեան, վայրիվերոյ համեմատելու օրինակն են ներկայացնում մեզ օրինակ՝ անունս «վայրի խաշխաշ» ըստ երևութի պատկանում է խաշխաշի տեսակների մէկին. այն ինչ իսկապէս ժողովրդի մէջ այս անունով յայտնի բոյսը, այսինքն Althea officinalis, բոլորովին տարբեր է խաշխաշի տեսակից և մոլոշաղգի (malvacé, ծաի հաց,

ճնճղպաշար) տունկերի կարգը պիտի դասել: Այս ամենին յայտնի է, ով բուսաբանութիւնը բոյսերի վերայ է ուսումնասիրել, և կարելի է հիմնաւոր փաստերով հաստատել: Արդէս զի մեր մեքենաների դարում աւելի յաջողութեամբ հնարաւոր լինի նպաստել դիտողական ընդունակութեան զարգացման, եւ խորհուրդ կը տայի երիտասարդներին յաճախակի այցելել Գեղարքունիք, ուր և երբ որ այս կարելի է. իսկ թանգարան այցելելով, նոքա պիտի ամեն անգամ իրանց ուշադրութիւնը կենտրոնացնեն զլիւաւորապէս այն բաների վերայ, ինչ որ աւելի յատուկ է մի մասնաւոր գաւառին: Իսկ միանգամից ամենայն բան և ամենայն հանգամանք զննելու ցանկութեան ժամանակ՝ արդիւնքն այն է լինում, որ յիշողութեան մէջ ոչինչ չէ մնում:

IV. Լաւ զննած և քննած փաստերի հիման վերայ մեր հանձնարը աւելի ճարտար շէնք է սկսում կառուցանել այն գործողութեան միջնորդութեամբ, որ Գաղաթիւն է կոչվում: Մենք ցանկանում ենք իմանալ ո՞չ միայն այն թէ այս ինչ առարկաները գոյութիւն ունեն, այլ և այն թէ ինչպէ՞ս նոքա գոյութիւն ունեն և ի՞նչ նպատակի համար: Եւ որովհետեւ աստուածային ստեղծողական հանձնարը մի է, ուրեմն այն գործողութիւններն էլ միշտ մի և նոյն պէտք է լինին, որով իրերի գոյութիւնն ու աճեցողութիւնը ապահոված է. նոյնպէս և նոցա տիպարը մի պէտք է լինի՝ թէ և նոքա յայտնի են իւրեանց բաղմատեսակ ցեղերով և տեսակներով. իսկ այս երկու դիպուածումն էլ աստուածադրոշմ միութեան հետազոտելը զրգում է մեզ նոյն իսկ մեր հոգու միութիւնը: Մեր բանականութիւնը միշտ զբաղուած է միութեան գաղափարի քննութեամբ, կամ ուրիշ խօսքերով ասելով. մեր

ամենօրեայ սովորական կեանքի խոհեմագոյն խորհուրդը գտնելու համար: Այդպէս մենք ինքներս, բնականաբար, ձգտում ենք որոնել աշխարհիս բոլոր երևոյթների մէջ միութիւն, խորհուրդ և հարկաւոր կապակցութիւն, և այս ամենը, ինչպէս բաւականին յաջողակ նկատեց Ստեօրլինգը, արգարև գոյութիւն ունի միայն «բանականութեան մէջ, բանականութեան շնորհիւ և բանականութեան համար»: Հոգեոյ այս յատկութիւնը, Ֆրենսօլոզները (հոգեխօսները) պատճառականութեան զգացումն են կոչում (\*), որովհետեւ մի բանի պատճառը, ժողովրդական հասկացողութեամբ, միայն այն կէտն է՝ Աստուածանից ստեղծած և հարկաւորապէս միմեանց յաջորդող յոյժերի մէջ, որ անմիջապէս նոյն բանին է նախորդում: Հազիւ թէ շատ լինին այնպիսի սահմանափակ և վայրախոհ մարդիկ, որ սովորաբար գոհ լինէին բոլորովին չը բացատրուած փաստեր զխանալով և թերի դիտութիւն ունենալով, ընդհակառակն, ամենօրեայ փորձը ցոյց է տալիս մեզ, որ մեծաւ մասամբ մարդիկ այս կամ այն փաստի պատճառը բացատրելու համար շատ շտապովի եզրակացութիւններ են անում, միայն թէ առանց որևէ մեկնութեան չը մնայ այն փաստը: Արդե՞օք այս պարզ ապացոյց չէ, որ պատճառներ որոնելը իւրաքանչիւր ողջախոհ մարդու յատկանիշն է:—Նրիտասարդները պէտք է զլիւաւորապէս զգու-

\*) Ֆրենսօլոզի (հոգեխօսութիւն) ծագում է յունարէն *prein* բառէց, որ նշանակում է ոգի, բանականութիւն, խելք և *lego*՝ խօսում եմ՝ գոյտօր Գալլէսի վարդապետութիւնն է, որի նպատակն էր մարդու և կենդանիների գանգի մէջ եղած խղճուրդութեանց միջնորդութեամբ որոշել ուղեղում գտնուած առանձին հոգեկան ընդունակութիւնները: Այս վարդապետութեան հետևողները Ֆրենսօլոզներ (հոգեխօսներ) են կոչվում:

շանան մի սխալից, որ գործին վայրի վերոյ նայելով է յառաջանում, այն է՝ այն սխալը, որով մի պատահական հետեանք կամ մի պարագայ իրական պատճառի տեղ է ընդունվում: Ի հարկէ, դժուար չէ հասկանալ, թէ Անդրլայի արեւմտեան ափում եկող յորդ անձրեւները Ատլանդեան ովկիանոսի մերձաւորութիւնից են յառաջանում: Հէնց այդպէս շատ դժուար չէ իմանալ, թէ ինչո՞ւ Օբանի մեղմ ձմեռները Էդինբուրգի կամ Եբէրդէնի հետ համեմատելով, Միքսիքական ծոցի տաք ջրի լայն հոսանքից են յառաջանում: Բայց բարոյականութեան և քաղաքագիտութեան ասպարիզում, ուր մեծ մասամբ փաստերն աւելի բարդեն, և ուր միևնոյն ժամանակ կրքերը սովորաբար մեծ դեր են խաղում, մենք միշտ դատողութեան այնպիսի օրինակներ ենք գտնում, երբ մի բան հաստատվում է այնպիսի փաստերի պատճառական կապակցութեամբ, որ բնաւ չէ ստուգուած: Ես լսեցի միանգամ մի նշանաւոր ժողովրդական կուսակցութեան առաջնորդի քաղաքական ճառը, որի մէջ հրապարակախօսը ճառի բնաբանը տեսակ տեսակ փոփոխելով և զանազան օրինակներով լուսաբանելով, այն եզրակացութեանը եկաւ, թէ մեր երկրի բոլոր թշուառութիւնները միայն և եթ նորանից են յառաջանում, որ այնտեղ կառավարութեան եղանակը միապետական—ազնուապետական է, և թէ այդ թշուառութիւնները միանգամից կարող էին ոչնչանալ, իբր դիւթական զօրութեամբ, եթէ որ մենք սոսկ ռամկապետական եղանակը մտցնէինք մեր մէջ: Այդ տեսակ ապացոյցը ակնյայտնի սխալ է. որովհետեւ ընկերական թշուառութիւնների միակ պատճառը և այդ թշուառութեանց առաջն առնելու միակ միջոցը՝ երկուսն էլ երեւակայութեան ծնունդ են: Կանոնաւոր դատել սովորելու համար, ես խորհուրդ կը տայի

երիտասարդներին նախ և առաջ հետեւիլ ծերունի Պատօնի պատուէրին և ենթարկել իրեն մի քանի ժամանակ մալեմաթիկայի խիստ կանոնաւոր ուսումնասիրութեան. (\*): Դա կ'ամրացնէր հոգւոյ կապակցող ոյժը, որը անհրաժեշտ է ամեն դատողութեան ժամանակ, և անփորձին կը սովորեցնէր հասկանալ թէ ի՞նչ է նշանակում իսկապէս հարկաւոր կախումն, անհրաժեշտ հետեանք կամ ճիշտ պատճառականութիւն: Բայց միայն սորանով չը պէտք է սահմանափակուիլ: Որովհետեւ մաթեմատիքայում բոլոր եզրակացութիւնները տեսական դրութիւնների և պայմանների վերայ են հիմնվում, որոնք եթէ մի անգամ առաջադրած են այլ ևս չեն կարող փոխվիլ և քակուիլ. այդ պատճառաւ լոկ մաթեմատիքական դատողութիւնները բնաւ չեն կարող իբր բաւականին նախապատրաստութիւն համալուիլ մի ընդարձակ և ամենանշանաւոր կարգի եզրակացութիւնների համար, որոնք հիմնուած են զարմանալի կերպով ներգործող և ընդդիմադրող փաստերի և ոյժերի բարդուած շղթայի վերայ. և որ մի և նոյն ժամանակ այս փաստերն ու ոյժերը շատ հեշտութեամբ ենթարկվում են իւրեանց քակտող ազդեցութիւններին, այնպէս որ երբեմն ամենասրամիտ խելքն անգամ սխալ եզրակացութեանն է հասնում: Քաղաքագիտական, բարոյական և ընկերական խնդիրներում մեր դատողութիւնները շատ անգամ այնպէս դրական են, ինչպէս և մաթեմատիքայում: Բայց աւելի դժուար և աւելի ընդարձակ լինելով, և վտանգը որից պիտի խուսափիլ մեր

\*) Պատօնեան ակադեմիայի դրան ձակատին այս վերնաբերն էր կոչուած. «Թո՛ղ չը մանի այտեղ նա, ո՛վ մաթեմատիքայ չէ ուսումնասիրել»:



միակողմանի դիտողութիւնն է, շտապովե եզրակացութիւնը և հոգեւոր աչքի կուրութիւնը մեր անձնական կրքերի և կուսակցական շահերի պատճառով: Այն քաղաքագէտը, որ մի քաղաքական խնդիր սխալ է մընում, ոչ թէ գիտնական անդեկութեանց խախուտ լինելու պատճառաւ է սխալմանց մէջ ընկնում, այլ այն պատճառաւ, որ կամ բաւականին ծանօթ չէ փաստերի հետ, կամ այնպիսի անձնական կրքերով ու շահերով է սողորուած, որոնք նորա մտքը խաւարեցնում են փաստերը ճշմարտութեամբ զնահատելու:

V. Կարծում եմ այժմ որ երիտասարդ ընթերցողներից մէկը կը ցանկանայ հարցնել ինձ. արդե՞ք խորհուրդ չեմ տալ նորան իր հոգեկան ոյժերը կազդուրելու համար սկսել պրոֆեսսուր-իւնը և բնապատկան կանոնաւորապէս ուսումնասիրելու: Կը պատասխանեմ. անպատճառ. եթէ դուք բնական, այսինքն ոչ սովորական դպրոցական ճանապարհով առ հասարակ մտածելու և դատելու ընդունակութիւն էք ձեռք բերել: Մարդս մանգալ և վազել է սովորում նախ և առաջ ռաներ ունենալու շնորհիւ. և ապա այն պատճառաւ որ նա զործ է ածում այդ ռաները. այնուհետեւ նա կարող է զինուորից կամ մարմնամարզից կանոնաւոր մանգալ և զանազան կանոնաւոր զինուորական շարժողութիւններ սովորել՝ որոնք սովորական շարժմանց շարքը չեն մտնում: Նոյնը կարելի է ասել և մտածողութեան արհեստի մասին: Քոյ՞ ձեր խելքը զիզէ նախ այն բոլոր պաշարը, ինչի մասին որ մտածում է, իսկ ապա զիմեցէք տրամաբանութեան, որ նա ձեզ ուսուցանի լուրջ աչքով ստուգելու այն գործողութիւնը, որի միջնորդութեամբ դուք ձեր եզրակացութիւններն էք անում: Այդ կերպով տրամաբանութիւն

1003  
11777

ուսումնասիրելը շատ մեծ օգուտ կարող է ընդհանրով հետեւեալ այս դիտութիւնը մտածումաբայի նման կան բովանդակութիւն չունի և միայն խորհուրդ մեծ է կարգաւորում, որոնցով ամենայն մտածողութիւն կատարվում է. այդ պատճառաւ էլ անտեղի կը լինէր սպասել որ սոսկ տրամաբանութիւնը կեանքի բեղմնաւոր մտքերով հարստացնէր մեզ: Ընչպէս որ մենամարտութիւն գիտենալը չի տալ մարդուն մեծ հայրենասիրի յատկութիւններ, այդպէս և լոկ տրամաբանութիւն իմանալը մեծ մտածող չի դարձնիլ նորան: Բոլոր ձեւական գիտութիւնները մի և նոյն յատկութիւն ունին: Քերտ նախ-նիւնը և ճարտասանութիւնը ինքն ըստ ինքեան նոյնպէս անպատու են և պաղուբեր են լինում միայն այն նիւթերի հետ գործածուելով, որոնք կեանքից և փորձից են սաացվում: Անպատու կամ սահմանափակ խելքը մտածողական կանոնները ուսումնասիրելով երբէք չի կարող պաղուբերուիլ կամ բնդարձակուիլ: Կենսական առողջ ոյժեր, լայնահայեաց համակրութիւն, սուր դիտողութիւն, բազմազան փորձ, ահա թէ ինչ բաներ աւելի գերազանց են դպրոցական ամեն տրամաբանութիւնից: Այնու ամենայնիւ տրամաբանութիւնը անօգուտ չէ: Նա ունի ոչ թէ ստեղծողական, այլ կանոնաւորող ոյժ. նա մտածողութեանը այնպէս է նպաստում, ինչպէս որ մարդակազմութիւնը գեղարուեստին. նա աւելի հաստատ է ամրացնում մեր մտաւոր շէնքի կազմող բոլոր մասերը. բայց ինչպէս որ մարդակազմութիւնը չի կարող մի գեղեցիկ պատկեր ստեղծել, այնպէս էլ տրամաբանութիւնը գրական դիտութիւն չի կարող տալ: Սխալները գտնելու և իմաստակալութիւնները երեւան հանելու համար տրամաբանութիւնը անզին ծառայութիւն է անում մեզ. բայց որպէս զի մեծ ճշմարտութիւններ գտնէ՝ նա ստիպուած է

նախ՝ իր մղիկ ոյժը այնպիսի կենդանի ջրի աղբիւրից հանել, որը ուսումնարաններում չէ հոսում, և երկրորդ՝ իրեն հարկաւոր նիւթերն հաւաքել բուն կենդանի բնութեան փաստերից, որոնց ոչ մէկ թանգարանում չես գտնիլ: Բոլոր ասածներս վերաբերում է և Բնագանցութեան: Այս գիտութիւնը օգտակար է երկու դիպուածում: Առաջինը՝ նա մեզ ծանօթացնում է մարդկային ընդունակութեանց հարկաւոր սահմանների հետ. նորա ծառայութիւնն այն է, որ մի փոքր կարճ է մեր երեւակայութեան թեւերը և թողնելով որ ընկղմենք և լուրջ փորձենք վերացական մտածողութեան անհուն և անսահման ուղիներում: մեր մէջ այն զգացմունքը հաստատ է, թէ աշխարհս աւելի ընդարձակ և թէ մեր նորա վերայ ունեցած հասկացողութիւններն աւելի չնչին են, քան ինչ որ մենք երեւակայում էինք: Հետեւանքը Բնագանցութեան է կասեք դուք. բայց այնու ամենայնիւ նշանաւոր: Սահմանները գիտենալու մէջն է կայանում իմաստութեան առաջին պայմանը: Աւելի լաւ է, չափաւոր քաջով մանգալ իմանալ ցամաքի, գետնի վերայ, ուր որ մենք հաստատուած ենք, քան Իկարէի նման թռչունների ընդունակութիւնը յափշտակել և թշուառ անմահութեան արժանանալ՝ անուն տալով մի խոր ծովին: \*): Բնագանցութեան միւս օգուտը Գրական է: Նա մեզ ծանօթացնում է մեծ, հիմնաւոր սկզբունքների հետ, որոց վերայ կառուցանվում է բոլոր գիտութեանց շէնքը: Բնագանցութիւնը տրամաբանութեան պէս ոչ միայն սոսկ ձևական գիտութիւն է. ընդ-

\*) Այդ թեւերով Իկարէն այնքան վեր բարձրացաւ, որ արեգակը հալեցրեց թեւերը, և իւր անուամբ անմահացրեց այն ծովը, ուր որ ընկաւ:

հակառակն նա զրական և էական իրականութեան գիտութիւն է և բոլոր երեւոյթների հիմքն է. ինչպէս որ մարդու հողին՝ նորա Ֆիզիքական մարմնի հիմքն է, և որը ամենայն փոփոխութիւններին զիմանում է որպէս մշտական տիպար կամ նախազաղափար այն փոփոխութիւնների: Այս իրականութիւնը կայանում է այն ընդհանուր, ամեն բանի մէջ թափանցող, ամեն բան կառավարող ոյժերի մէջ, որոնք ներգործում են և բուսաբանութեան, և բնախօսութեան, և երկրաբանութեան, և աստղաբաշխութեան, և քիմիայի և մարգարանութեան մէջ. Գիտութեան իւրաքանչիւր ճիւղն է այս ոյժերի միայն մի մասնաւոր յայանութիւն. մէկ խօսքով այս իրականութիւնը ամենայն գոյաւորութեան առաջին սկիզբն է: Եւ որովհետեւ իւրաքանչիւր գոյաւորութիւն ինքնագործ բանականութեան լոկ մի հրաշալի այլափոխութիւնն և զարգացումն է, (որովհետեւ աշխարհս, առանց նորա մէջ բնակւող բանականութեան կը լինէր խօսս և ոչ կօամոս (տիեզերք) ապա ուրեմն սորանից հետեւում է, որ բնագանցութիւնն է անպայման կամ տիեզերական բանականութեան գիտութիւն, ինչ չափով որ այդ բանականութիւնը կարող է ճանաչուիլ մեր սահմանափակ, անհատական բանականութեամբ: Այս մտքով բնագանցութիւնը, ինչպէս արդէն հին ժամանակ նկատել էր Արիստոտէլը, կցվում է աստուածաբանութեան հետ: \*). Եւ յիրաւի, Աստուծոյ գա-

\*) «Երեք տեսակ տեսական գիտութիւն կայ» ասում է Արիստոտէլը. «Ֆիզիքայ, մաթեմատիքայ և աստուածաբանութիւն. վերջինս նոյնպէս կոչվում է աստի՛ն փիլիսոփայութեան, որովհետեւ քննում է բոլոր իրական շրջաններին պատկանող ընդհանուր սկզբունքներ: Այդ սկզբունքներն են. 1) Ձևը կամ էութիւնը. 2) Տարր կամ նիւթ. 3) Շարժող կամ ներգործող պատճառ և 4) Նպատակ»: Արիստոտէլը բնագանցութիւն մն. 7.

շտիւրը իւր անպայման, ինքնագոյ, ինքնագործ և ինքնաորոշող բանականութեան ստորոգելիքով՝ միակ գաղափարն է որ մեզ կարողութիւն է տալիս հասկանալու աշխարհքը, և այդ պատճառաւ էլ բոլոր մեծ մտածողները, Պիլթագորոսից սկսած մինչև Հեգելը, ամենայն իրաւումք համարում են ամեն առողջ մտածողութեան հիմնաքար: Այս պատճառաւ էլ օդտակար է բնազանցութիւնն էլ ուսումնասիրել, մանաւանդ մեր ժամանակ, երբ որ բնական գիտութեանց բազմաթիւ սքանչելի գիւտերի նորութիւնը, ուր մտքերը միակողմանի ուղղութեամբ հակուած են և սաստիկ ճնշուած են միայն արտաքին և նիւթական շլամոլութեամբ, շատերին այն եզրակացութեանը հասցրեց, իբր թէ միայն սոսկ բնական գիտութեանց մէջ է կայանում մարդկային ողջ իմաստութիւնը, և թէ Ինդուկցիանը (ներածութիւն) հէնց այն գիւթական գաւազանն է, որի օգնութեամբ կարող են լուծուել գիտութեան բոլոր նըշանաւոր խնդիրները: Այս նշանակում է ցնորվել միայն արտաքին նշաններով: որովհետև մի կողմից ակտիւմաները, առաջին սկզբունքները և կենսական մեծ ճշմարտութիւնները, առանց որոց անկարելի է ոչինչ գիտութիւն, ամեն տեսակ Ինդուկցիայ (ներածութիւն) եզրակացնելուն նախորդում են, իսկ միւս կողմից բնական գիտութիւնները սկարագրում են միայն հետազոտողը, որ կիսակիրթ մարդը պատճառների տեղ է բնորոշում: Այս գիտութեանց մէջ յայտնի օրէնքները մի միայն գործողութեան եղանակներն են, իսկ գլխաւոր գործողը, որին նոքա քննել չեն կարող՝ եթէ չեն ուզում շեղուիլ իրենց սահմաններից, ամենայն տեղ և միշտ՝ անպայման, ամենուրեք, ամեն բան ստեղծող բանականութիւնն է, որը կոչվում է Աստուծո, որից որ, ինչպէս արդէն երգում էր հին յունական բանաս-

տեղծը, մենք բոլորս ծագումենք, և որի մէջ մենք, ինչպէս ուսուցանում էր սուրբ առաքեալն Պողոս, ապրում ենք, շարժվում և գոյութիւն ունինք (Կող. ա, 16, 17.) Այդպէս ուրեմն, ուսումնասիրեցէք և բնազանցութիւնը միայն չը կարծէք թէ նորա խնդիրները դպրոցական նըստարանի վերայ կարող են վճռուիլ: Ոչ, այս խնդիրները վճռվում են միայն իսկական բուն մարդկային կեանքի երկար փորձառութեամբ: Եւ երջանիկ է նա, ովոր կարողացաւ այդ խնդիրները լուծել այնպէս, որ ջերմեռանդութեամբ հաստատուով իւր գաւած ճշմարտութիւններին, կարողանում է այնպէս հանգիստ ննջել, ինչպէս մանուկը իւր մօր գրկում:

VI. Մեր հոգու միւս գործողութիւնը, որ վարժութեան կարօտ է, երեւոյնքներն է: Ես շատ կասկածում եմ, թէ ոչ ուսուցիչները և ոչ ուսանողները բաւական համողւած են թէ ո՞րքան կարեւոր է այս ընդունակութիւնը: Շատերը մինչև անգամ այդ արհամարհում են, որովհետև ըստ երևութիւն նա աւելի զբաղում է վերացական գաղափարներով, քան թէ փաստերով, և այդ պատճառաւ թւում է թէ ոչինչ նշանակութիւն չունի, մանաւանդ դրական գիտութիւններ ձեռք բերել ցանկացող երիտասարդի համար: Բայց իրօք այդպէս չէ: Ամենքին յայտնի է, որ առաջնակարգ ուսումնականները իրենց ամենանշանաւոր գիւտերով ոգևորուած երևակայութեան կենդանացուցիչ զօրութեանն են պարտական: Սորան ապացոյց են ի միջի այլոց բանաստեղծ Քեօթէի մեծակշիռ գիտողութիւնները բուսաբանութեան և ոսկրաբանութեան ճիւղերում: Երևակայութիւնը գիտութեան թշնամի է հանդիսանում միայն այն ժամանակ, երբ անխոհեմաբար է ներգործում, այսինքն կամայապէս և քմապաշտու-

Թեամբ, իսկ խոհեմ բանականութեան հետ ձեռք ձեռքի տուած գործելով, նա նորա ամենալաւ և ամենակարեւոր դաշնակիցն է դառնում: Մանաւանդ որ պատմութեան և իրական փաստերի բոլոր շրջանների համար երեւակայութիւնը նոյնքան անհրաժեշտ է, որքան և բանաստեղծութեան համար: Երաւ է, պատմաբանը չի կարող իրանից փաստեր ստեղծել, բայց նա պէտք է հմտութեամբ դասաւորէ փաստերը և գեղեցիկ ոճով հաղորդէ, իսկ այս առանց երեւակայութեան անկարելի է: Կախարդական հեքիաթները և ամեն տեսակ վիպասանութիւնները նոյնպէս իրենց արժանաւորութիւնն ունին և խոհեմաբար գործածուելով, պակաս չեն նպատի երեւակայութիւնը կրթելուն: Բայց ոյս ընդունակութեան զարգացման համար ամենօգտակար վարժութիւն ներկայացնում է իրական աշխարհի ծանօթութիւնը: Երեւակայութիւնը զարգացնելու և կրթելու համար կարիք չը կայ մարդկային բնաւորութեան ու վիճակի նկարագրութիւնները վիպասանութեանց մէջ որոնելու: Աղէքսանդր Մակեդոնացու, Լիւտերի, Գուստաւ Ադօլֆի կամ աշխարհիս ասպարիզում որ և է երեւել մարդու կեանքը, որոնց մէջ մարմնանում է հէնց իրենցից ստեղծուած նոյն ինքը պատմութիւնը, աւելի մեծ կրթողական նշանակութիւն ունի մեր նպատակի համար, քան երբ և իցէ շարադրած վէպ կամ վիպասանութիւն: Բանաստեղծութիւնը ամենի վերայ հաւասարապէս չի ներգործում, բայց մարդ չը կայ, որի վերայ մեծ քաջագործութեան օրինակը շատ կամ քիչ սաստիկ տպաւորութիւն չ'անէր: Երակայութիւնը կրթելով մեծ մարդոց կենսագրութեամբ, կրկնակի օգուտ ենք ստանում: միանգամից ծանօթանում ենք և այն բանին, թէ ի՞նչ է հասարակած, և թէ ի՞նչ պիտի հասարակէր: Բայց

որպէս զի երեւակայութիւնը հասարակածի վարդացնենք, բաւական չէ ախորժելի և վսէմ պատկերներ զարթեցնել մեր հոգու մէջ. այդպիսի սոսկ բացառական զննութեամբ երեւակայութեան ոյժը չի ամրապնդուի: Մի բան կարգալիս, մենք անպատճառ պէտք է ստիպենք մեր երեւակայութեանը, որ նա կատարելապէս ըմբռնէ իւր մտքի առաջ հանդիսացող պատկերները, և չը բաւականանայ, մինչև որ նա չը կարողանար ողջ նկարակրած անցքը հարկաւոր յաջորդականութեամբ վերարտադրել, իւր բոլոր բնաւորական յատկանիշներով: Ընչպէս որ քիչ չեն այնպիսի մարգիկ, որոնք ըստ երեւութին աչքերը բաց կեանք են անցնում, և դարձեալ ոչինչ չեն նկատում, այդպէս էլ քիչ չեն և այնպիսիք, որոնք գրքեր են կարդում և գլուխը լցնում բազմաթիւ փաստերով, մի և նոյն ժամանակ չը պահպանելով ոչ մի կենդանի պատկեր, որը հանգստութեան ժամին կարողանար գրգուել նոցա երեւակայութիւնը. կամ կեանքի ծանր րոպէներում զինաւորէր նոցա համբերութեամբ և անվէհերութեամբ: Այս պատճառաւ, երկոտասարդներ, ամեն անգամ, երբ ընտիր հեղինակութեան մի գլուխը կարգացիք, հարցրէք ձեզ ոչ թէ նորա մասին, թէ ի՞նչ է գրած ձեր կարգացած երեսներում, այլ նորա մասին, թէ ի՞նչ է նկարագրուած ձեր երեւակայութեան լուսաւորած թանգարանում: Պահպանեցէք ձեր վառ երեւակայութիւնը, և թող նա միշտ լցուած լինի կենդանատիպ պատկերներով: Չը կարծէք, թէ դուք ճանաչեցիք փաստը, եթէ միայն գիտէք, թէ նա կատարուեցաւ: Ո՛չ, փաստը ձեզ միայն այն ժամանակն է յայանի, երբ կարող էք պատկերացնել, թէ նա ի՞նչպէս կատարուեցաւ:

VII. Թէ և «երեւակայութիւն» խօսքը նշանակում է

մի ընդունակութիւն, որը որոշեալ չափով կարող է իւրաքանչիւր անհատի սեփականութիւն համարուիլ, բայց նա կարծեմ աւելի ամուր կապուած է այն պատկերացումների և հոգեկան շարժողութեանց դասի հետ, որ մենք, մի ուրիշ օրինակելի բառ չունենալու պատճառաւ, էսթէտիքական (գեղասիրական) ենք կոչում: Մարդս կարող է ապրել և ազնիւ ապրել, և մի և նոյն ժամանակ շատ աղքատ երեւակայութեան տէր լինել: Հէնց այդպէս և տունը կարող է հաստատուն կառուցանուիլ, որ անձրեկից ու ցրտից բոլորովին պաշտպանէ, բաւականաչափ լուսաւոր լինի և մի և նոյն ժամանակ շատ տգեղ արտաքին տեսք ունենայ: Ո՛չ ոք ի հարկէ, յօժար կամօք չի տարի այդպիսի տգեղ տան մէջ, եթէ կարողութիւն ունի աւելի լաւ և գեղեցիկը վարձելու: Այդպէս էլ գէշէջէտ-լեւնը — առողջ երեւակայութեան այս բնական կերակուրը ամեն մարդու որոնելու առարկայ պէտք է դառնայ, եթէ որ մարդս ցանկանում է կեանքի վսէմ նպատակը արժանապէս լրուցանել, այսինքն ըստ կարելւոյն աւելի մեծ կատարելութեան հասնել: Եթէ ճշմարիտ է, ինչպէս վերևն ասացինք, որ մարդս միայն դրքերով չէ ապրում: սորանումն էլ կասկած չը կայ, որ նա միայն գիտութեամբ էլ չէ ապրում: «Մի բան գիտենալ երբէք աւելորդ չէ» — ահա նորագոյն ժամանակների ամենախելօք մարդիկներից մինի խելօք խօսքը: Բայց անշուշտ այս խօսքերով նա ամենևին չէր կամենում ասել, որ լաւ է ունենալ ամեն անկարգ, անսխտեմ գիտութիւն: Ո՛չ, այս խօսքերի միտքն այն է, որ ամենայն տեսակ անակնուենելի կարիքի համար միշտ օգտակար է ամեն աչքի ընկնող բաները ուշի ուշով նկատել, մինչև անգամ եթէ այն աննշան էլ լինի: Միշտ նըշանաւոր բանը ի հարկէ, պատրաստ, չէ մեղ համար.

բայց և աննշանը, որին մենք շատ յաճախ պատահում ենք, անկարելի է որ բոլորովին զուրկ լինի բարութիւնից, ուրեմն չը պէտք է արհամարհենք, այլ նորանից էլ շահուենք: Նրիտասարդի մշտական ձգտողութեանց արժանաւոր առարկան պէտք է լինի ոչ գիտութիւնը առ հասարակ, կամ ուրիշ որ և է բան առանց զանազանութեան այլ բարութեան, վսէմութեան և գեղեցկութեան գիտութիւնը: Բայց այս ձեռք բերել կարելի է միայն երեւակայութեան մասնակցութեամբ և միայն այն դիպուածում, երբ չեն մոռանում հոգւոյ էսթէտիքական կրթութիւնը:

Ուրիշ խօսքով՝ բանաստեղծութիւնը, նկարչութիւնը, երաժշտութիւնը և առ հասարակ գեղարուեստները, որոնք ամենայն տեսակ և ամենայն կերպ նկարագրում են վսէմը և գեղեցիկը, ոչ թէ միայն առանձին տաղանդների մասնադիտական ուսումնասիրելու առարկայ պէտք է լինեն, այլ և ամեն մի ինքնակատարելութեան ձգտող մարդու ընդհանուր կրթութեան առարկայ: Մարդս կարող է խոհեմ, գործունեայ, իր արարմունքների մէջ հաստատակամ լինել, գործնական և առ հասարակ լաւ նախապատրաստուած ծանր աշխատանքի համար, բայց մի և նոյն ժամանակ չունենար հրապուրիչ յատկութիւններ. այսինքն լինի անշուքք, անձուռնի, վայրենամիտ, կռուարար, յամառ, յանդուգն, կոպիտ և այլն: Էսթէտիքական կրթութեան շնորհիւ բնաւորութեան այդպիսի խորտուբորդութիւններ յարդարելը՝ շատ օգտաւէտ բան կը լինէր հասարակութեան համար և հէնց նոյն ինքն անձնաւորութեան համար կարող էր նշանաւոր բարեօրման աղբիւր լինել: Այս պատճառաւ, սիրելի ընթերցող, անդադար հոգացէք, որ ձեր երեւակայութեանը ըստ կարելւոյն յաճախակի իր բնա-

կան կերակուրը մատուցանէք. այսինքն՝ ամեն տեսակ գեղեցիկ առարկաներով զբաղեցնէք նորան: Եթէ քաղաքում մի հոյակապ շինութիւն նոր աւարտուել է, կանգնեցէք նորա առաջ և ուշադրութեամբ զննեցէք. եթէ ընտիր պատկերների հանդէս է բացուում, որքան էլ զբաղած լինէք ձեր սովորական գործերով, ազատ ժամ գտէք, որ գոնէ փոքր ինչ նայէք այս պատկերներին և հիանաք նոցա գեղեցկութեամբ: Վերջապէս եթէ քաղաքային կրկէսը հմուտ ձի հեծնողներ և երևելի ծեռնածուներ են եկել, գնացէք և նրանցը տեսնելու. չը կարծէք թէ նոցա ճարպիկ թռչկոտելը և պոսոյտքները միայն հասարակ ձեռնածութիւն է երեխանց զուարճացնելու համար. — ընդ հակառակն, սոքա մարդկային մարմնի զարմանալի ոյժի և ճկունութեան արհեստագիտական ձևացումներ են, որոնց տեսնելով, ամէն մարդ պիտի զարմանայ: Առ հասարակ, եթէ դուք ցանկանում էք զարգանալ, կատարելագործուիլ, մի վախճանաք հիանալ և դարձանք յանձնատուր լինել:

Միայն գեղեցիկ և վսեմի վերայ զարմանալով, մենք կարող ենք մօտենալ մի փոքր այն առարկայի նմանութեան, որի վերայ զարմանում ենք, և այն մարդը, որը այս հրաշալի աշխարհում զարմանքին անձնատուր չէ լինում, գորանով ո՛չ թէ այնէ ապացուցանում, թէ աշխարհումն ոչինչ զարմանալու բան չը կայ, այլ միայն այն, որ իր սեփական ձգտումները աննշան են և ընդունակութիւնները չնչին:

Այն երիտասարդի համար, որը Էսթէտիքական զարգացման բնական ճանապարհն է որոնում, ոչինչ այնպէս արգելք չի լինի, քան իմաստակութեամբ արժանանալ «ոչնչի վերայ չը զարմանալու» անպտուղ համբա-

ւին: \*) Եթէ կեանքից յօգնած, ծերացած ցինիկոս փլիտփան nil admirari կանոնին է հետևում, այդ նորան կարելի է ներել. բայց յոյսերով լի երիտասարդի շրթունքներից լսելով այդ կանոնը՝ ճշմարիտ որ զգուշել է: Նոյնպէս վըրովեցուցիչ է, երբ տեսնու՞մես որ մի երիտասարդ, որը դեռ ևս ոչինչ չի արել ինքը, բայց աշխատում է սխալներ որոնել այնպիսի մարդոց հեղինակութեանց մէջ, որոնք փոքր ի շատ է անուն են հանել. և նա այդ սխալներ պտրտելը անուանում է «քննադատութիւն»: Երիտասարդի առաջին գործը պիտի լինի ամենայն տեղ ո՛չ թէ սխալներ, այլ գեղեցկութիւններ որոնելու: Ամենայն քննադատութիւն, որ այս անուանս արժանի է, երկարատե փորձառութեան և հիմնաւոր դիտութեան հասունացած պտուղն է: Միայն ձեր զինուորը կարող է ասել, թէ պատերազմները ինչպէս պիտի առաջ տանուին: Ո՛չ որ, ի հարկէ, երիտասարդներից չէ խլում և իրենց սեփական հայեացքն ունենալու իրաւունքը իրերի վերայ. նոքա, ի հարկէ, պէտք է իրաւունք ունենան և իրենց սեփական դատողութիւնն ունենալու. բայց սորանից չի հետևում, թէ նոցա հայեացքներն ու դատողութիւնները մամուլի միջոցաւ պէտք է երևան դան: Անփորձ մարդու տպադրական կարծիքները կարող են միայն հասարակութիւնը մոլորեցնել և գրողն սիրտը ապականել: Ես ասացի որ գեղեցիկը և վսեմը Էսթէտիքական ընդունակութեանց բնական և ամենաուղղ կերակուրն են: Ծաղրականը և երգիծաբանականը այս դիպուածում միայն օժանդակ միջոցներ են: Մարդս եթէ չի կարողանում ծիծաղել, շատ

\*) Հօրացիոսի կարծիքով (Նամակներ. I 1, 6) Երջանիկ լինելու միջոցներից մէկն է ոչնչի վերայ չը պարմանալ (nil admirari.)  
Իտալ. էէդիտուի.

բանից է զրկուած. բայց ծիծաղը թէ և վատ սովորութիւններից յետ է պահում մեզ, սակայն ամեն ինչէ ազնուացնում մեր հոգին: Աեանքը՝ ծանր բան է, և մինչև այժմ ոչոք ծաղրածութեամբ ոչ երևելի և ոչ բարի է դարձել: Ամենամեծ երգիծաբանութիւնը, ինչպէս օրինակ Արիստոֆանինը, միայն համեմունքի նշանակութիւն ունի. բայց յայտնի է որ ոչոք սոսկ պղպեղով և վանիլով (հոտաւէտ տունկ.) չէ կերակրուում:

Տօրվալդսէնի Աոպէնհայնի թանգարանի նման՝ երիտասարդի միտքը պիտի հարստանայ ամեն հրաշալի ձևերով և պատկերներով՝ Փրկչի և առաքելոց հեզ վեհութիւնից սկսած, մինչև յունաց կուպիդոնների և յուշկապարիկների ամենանուրբ չքնաղութիւնները, և ոչ թէ մի առանձին բաւականութիւն դանէ ճիւղաղական նկարներ գննելու մէջ, որոնք միայն ճաշակն են փչացնում: Ամեն բանում միշտ ծաղրալի կողմը գտնելու սովորութիւնը փոքրօրութեան ամենահաստատ նշանն է: Որովհետև ծաղրականը, ինչպէս Արիստոսէյն էլ նկատել էր, միշտ միայն արտաքին նշան է: Երգիծարանական վէպերի և նկարագիրների կարգալը, որոնք շատ առատ են մեր ժամանակ, երբեմնապէս միայն ժամանակ անցկացնելու համար կարելի է նշանակել, ինչպէս և լաւ կատակերգութիւնը. բայց ծանրաբարոյ երիտասարդների համար գեղարուեստներով պարապիլը աւելի հետաքրքիր բաւականութիւն է պատճառում, քան անպիտան և արհամարհելի մարդոց ծաղրալի պատմութիւններ կարդալը: Իսկ ծանր աշխատանքից յետոյ լաւ գործիքի վերայ նուազելը կամ մի հին կամ նորագոյն ժամանակների օտարազգի հեղինակի խելօք խօսքերի թարգմանելը մայրենի լեզուով և ընտանի ոճով այնու ամենայնիւ աւելի օգտակար և

ախորժելի հանգստութիւն է, քան ծիծաղաշարժ զրքերի կարգալը, — որը պիտանի է միայն մտաւոր անշարժութեան ամենասաստիկ բուրգներում և այն մարդոց համար, որոնք չեն սիրում ուղեղին ծանրութիւն տալ:

VIII. Հետևեալ հոգեկան կարողութիւնը, որը առանձին վարժութիւն ու աշխատանք է պահանջում, յիշողութիւնն է: Անօգուտ է գանձ հաւաքելը, երբ նորա պահպանելու համար տեղ չը կայ. հէնց այդպէս էլ անօգուտ է այնպիսի բան սովորել, որը անկարելի է յիշողութեան մէջ պահել: Բարեբաղտաբար յիշողութիւնը այնպիսի ընդունակութիւն է, որ վտրժութեան միջոցով ուրիշներից աւելի հաստատ կարող է կատարելագործուել: Բացի սորանից, տկար յիշողութեան համար կան և օժանդակ միջոցներ, որպիսիք չը կան ոչ տկար երևակայութեան և ոչ տկար բանականութեան համար: Ահա այն ամենադիւսաւոր պայմանները, որոնք անհրաժեշտ են երևակայութեամբ ընդունած փաստերը յիշողութեան մէջ պահպանելու համար:

ա. Առաջին տպաւորութեան պայծառութիւնը, յօտակութիւնը և ոյժը: Երբէք չը յուսաք, որ դուք վայրի վերոյ և անձիշտ ըմբռնածը կը կարողանաք մտաբերել: Բազմաթիւ մութ և թոյլ տպաւորութիւնները, որոնք արագութեամբ ներգործում են մեր հոգւոյ վերայ, շատ շուտով են անյայտանում մարախուղի մէջ, որը ամենայն ինչ ծածկում ու մթնացնում է: Յիշողութեան համար աւելի ձեռնտու է նշանաւոր առարկայի միայն մէկ յատկութիւնը պայծառ պատկերացնել, քան ամբողջի մասին մութ պատկերացումներ ունենալ:

բ. Յիշողութեան ամենալաւ օժանդակ միջոցներն են կարգը և զասակարգութիւնը: Դասակարգութեան մէջ

դասեր միշտ քիչ են, իսկ անհասներ շատ. լաւ խնայելով դասը, մի և նոյն է թէ անհասի բնաւորութեան ամենաէական մասը գիտենաս. իսկ այս մի և նոյն ժամանակ ամենից պակաս է ծանրաբեռնում յիշողութիւնը:

դ. Մանաւանդ շատ մեծ նշանակութիւն ունի կրէն-նա-կի-նը: Եթէ մեխը (բւեռը) չի մտնում տախտակի մէջ մուրձի մէկ խփելուց, խփեցէք կրկին և կրկին անգամ Այսպիսի դիպուածում յամառ ընդդիմութիւնը միշտ յաղթում է: Այսպէս օրինակ, եթէ մինը դժուարանում է միտը պահել, որ բառս Իէլա. սանկրիտերէն նշանակում է Աստուած, բաւական է որ նա այս օտար բառը մէկ շաբաթ շարունակ օրը եօթն անգամ կրկնէ, և աներկբայէ, որ նա այլ ևս չի մոռանայ այդ բառը: Որքան աւելի տկար է ի բնէ մարդու յիշողութիւնը, այնքան աւելի վճարար կատարելութեան պէտք է հասցնէ մարդս սերտելու միջոցաւ: Մեր ընդունակութիւններն էլ երբեմն ծոյլ ձիու պէս հարկաւոր է մտրակել, այլապէս նոքա առաջ չեն գնում:

դ. Պատահում է և այնպէս որ շատ անգամ տկար յիշողութիւն ունեցողը տրամաբանական ոյժ ունի: (Հոգեխօսների պատճառի զգացումը): Այս դիպուածում մեզ երևացող պակասութիւնը հեշտութեամբ կարող է իսկական օգտի փոխուելը Շատ արագ յիշողութեան տէր մարդիկ շատ յաճախ բաւականանում են այս բնական ընդունակութեամբ, և չեն հոգում այլ ևս նորա զարգացման մասին. որովհետև նոքա սուր յիշողութիւնը առանց այդ էլ կարողութիւն է տալիս յաջողակութեամբ յայանելու իւր հնէմնիկային տաղանդը, որը իսկապէս սոսկ թուրթակի

տաղանդ է: \*) Բայց ով որ դժուարանում է փաստերն առանց բացատրութեան միտը պահել, նա որոնում է այս փաստերի տրամաբանական կապը, և նորանով ամրացնում յիշողութեան մէջ այն, ինչ իր բնական մտաւոր շրջանով նա չէր կարող ըմբռնել իբր կամայական և անբացատրելի շարք:

ե. Երբեմն և գաղափարների արհեստական միաւորութիւնը կարող է օգտակար լինել. այդպէս օրինակ՝ աշակերտը հեշտ կարող է միտը պահել, որ Աբիդոս քաղաքը Հելեոպոնդոսի ասիական ափումն է գտնվում, եթէ նորա ուշադրութիւնը այն հանգամանքի վերայ դարձնուի, որ Աբիդոս և Ասիա անունները մի և նոյն տառերով են սկսվում: Բայց այդպիսի մանկավարժական ձևերը կամ աւելի ձիշտ է ասել ձեռնածութիւնները գուցէ կարող են մի վառ դաստիարակուած վարժուհու հիացնել, իսկ հասունացած բանականութեան համար նոքա անպէտք են: Աս հաւատ չեմ ընծայում այդպէս անուանեալ մեմօնիկայի արհեստական ձևերին, որովհետև դոքա ծանրաբեռնում են երևակայութիւնը անթիւ կամայական ու ծաղրալի նշանակներով, որոնք խանգարում են մեր հոգւոյ բնական գործունէութիւնը: Պատմական տեղեկութիւնները, որոնց համար սովորաբար գործ է ածվում այս տեսակ արհեստականութիւնը, աւելի լաւ են միտը պահում պատճառական կապակցութեան օգնութեամբ, կամ մինչև անգամ մեծ անունների դիպուածական միաւորութեամբ:

\*) Մեմօնիկան (յունարէն mneme բառից, որ նշանակում է յիշողութիւն, նկատողութիւն) յիշողութիւնը կատարելագործելու արհեստ է, յունաց Լեմնիկաս փիլիսոփայի հնաբաժն:

Այդպէս օրինակ, դժուար չէ միտը պահել, որ Պլատոնը 29 տարեկան էր, երբ Սոկրատէսը թունալից բաժակն ընդունեց, և թէ Արիստօտէլը այս Պլատոնի աշակերտն էր, ապա և ուսուցիչ Փիլիպոս Մակեդոնացու այն հանրահրէշակ որդու, որը իր յաղթական զօրքի միջոցաւ Ինգոսի ասիերում Սոկրատէսի և Պլատոնի լեզուն հնչեցնել տուեց բրահամաների օրհներգութեանց սրբազան բարբառի հետ ի միասին:

Վերջապէս զ. որքան էլ ուժեղ չը լինէր ձեր յիշողութիւնը, երբէք մի արհամարհէք այն ճշմարիտ օգնութիւնը, որ տալիս են քաղուածքները և գրաւոր նըկատողութիւնները: Թղթով խօսելու սովորութիւնը ի հարկէ, չի ամրապնդում, այլ աւելի թուլացնում է յիշողութիւնը. բայց եթէ ճշմարիտ ռգտակար տեղեկութեանց պաշար ունիք, գրքերի գլխաւոր գաղափարները առանձին նշանակած, զօքս ձեզ միջոց կը տան դիզուած նիւթը հարկաւոր եղած ժամանակ մեծ քանակութեամբ գործածելու: Այս առթիւ երիտասարդը իր ուսումնական պարապմունքների սկզբից պէտք է մի քանի գրքերի մէջ է մէջ սպիտակ թղթեր կարէ, ուրիշների մանրամասն բովանդակութիւնը գրի անցնէ կամ թէ ամեն անգամուայ կարգացածը առանձին ցուցակում յիշատակագրէ. այս միջոցներով նա կարող է հեշտութեամբ և շուտով հարկաւոր տեղեկութիւնները հաւաքել:

Մեր քարոզիչներն անկասկած, աւելի մեծ նշանակութիւն կը տային իրենց քարոզներին, եթէ սովորութիւն ունենային մէջ է մէջ սպիտակ թղթեր կարած Աստուածաշունչ գործածել. և իրենց ընտրած բնաբանների մօտին կենքից վերցրած այնպիսի անցքեր կամ պատմութիւններ յիշատակագրել, որոնք կը ծառայէին

մեկնելու կամ լուսաբանելու նոցա ընտրած բնաբանները: Այդպիսով նոքա կարող էին մինչև անգամ ի բնէ ամենատկար յիշողութեամբ էլ քաղել իրենց դանձարանից և նորը և հինը, և առատութեամբ զործածելով, օգուտ քաղել իրենց հոգևոր ուսմունքների այն մասերի մէջ, որոնք այժմ սովորաբար պակասաւոր են թէ իրենց չոր ու ցամաք լինելով և թէ իրենց դժգոյնութեամբ: Այն ուսանողների համար, որոնք քաղաքական զիտութիւններ են ուսումնասիրում, մի և նոյն նպատակով Արիստօտէլի «Քաղաքագիտութիւն» գրքի մէջ թղթեր կարելը պակաս օգտակար չէր լինելու. այս միջոցը կը զգուշացնէր հայեացքների այն անշարժութիւնից և միակողմանիութիւնից, որը յառաջանում է մեծ մասամբ հասարակական կենքի լոկ միայն ամենանոր և ժամանակակից փորձառութեան ծանօթութիւնից:

IX. Կրթութեան ժամանակ թէ ուսումնարանում և թէ համալսարանում յաճախ անուշագիր է թողնվում մի շատ նշանաւոր արհեստ—այն է՝ կանոնաւոր, պարզ և համոզեցուցիչ կերպով խօսելու արհեստը: Այս առթիւ ես այստեղ մի քանի նկատողութիւններ կ'անեմ ոճի մշակելու և Ապէնտիօստ-Լիւննէրի վերաբերութեամբ:

Մարդս ի բնէ խօսող արարած է, և լաւ ոճը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բանաւոր արտայայտութեան արհեստի կատարելութիւն, որը լաւ կրթութեան միջնորդութեամբ բնական ընդունակութեան զարգացումից է ծագում: Ըճի մշակելու համար աւելի լաւ ուսումնարան ներկայացնում է ի հարկէ, երևելի ճարտասանների և մատենագիրների հետ ունեցած մօտ ծանօթութիւնը: Խօսքերի պաշարը, որը մեզնից ամէն մէկն ունի, միշտ կախումն ունի գլխաւորապէս—իսկ մատաղահաս տարիներում և կատարելա-

պէս—այն հասարակութիւնի՝ որի մէջ մենք ապրում ենք։ Այս պատճառաւ կարգացէք երեւելի մատենագիրները նըշանաւոր գրութեանը, և հաւատացած կացէք, որ նրանց լաւ յատկութիւնների մի որևէ մասը ձեր սեփականութիւն կը դառնայ, միայն թէ ստրկորէն չը փոխառնէք ում և է խօսելու ձևը։ Ինչպէս դէմքի գծագրութեան, այնպէս էլ իւրաքանչիւր մարդու ոճի մէջ մի որոշ անհատականութիւն կայ, որը անպատճառ պէտք է պահպանել։ Եւ ձեր ուշադրութիւնը դարձրէք ոչ միայն ոճի վերայ, որովհետև ոճը չի կարող ինքն իրան՝ այսինքն մտքերից անկախ մշակուիլ։ Որքան դուք հոգում էք, որ խօսքը գեղեցիկ և յաջող ձևով արտայայտէք. այնքան առաւել հոգացէք, որ այն՝ ինչ դուք արտայայտում էք, նիւթալի և պիտանի բովանդակութիւն ունենար։ Այս հանգամանքում բոլորովին ձշմարիտ են Սոկրատէսի խօսքերը, որ մի անգամ ասաց նա յոյն երիտասարդներին, թէ նոքա կարողանում են արդէն արտայայտել, երբ որ խօսելու նիւթ ունին։ Նոյն բանն ասաց և Պօղոս առաքելալը իր Կորնթացւոց ուղարկած առաջին թղթի մէջ (գլուխ 14), իսկ ամենանոր ժամանակում Գեթթէն, դառնալով գերմանացի ուսանողներին։

«Շահուելու համար աղնիւ եղև,  
Ամբոխի ծաղրածու մե լինելը,  
Առողջ մետքը սրտի խորքից ևս,  
Ինքն իրան կարող է արտայայտուել։  
Հաւատան, որ պիտանի բան ասելու համար,  
Հարկ չը կայ խօսքերի ետևեց ընկնել։»

(ՅԱՌԻՍՏ. I ՄԱՍՆ.)

Սակայն սորա հետ միասին ամենայն կերպով աշխատեցէք մտքերի արտայայտութեան այն սովորութիւնը

ձեռք բերելու, որը ներկայացնէր մի ըստ միոջ է խիստ կանոնաւորութիւն, գեղեցիկ դիւրութիւն, կենդանի գոյնեւրով արտայայտութիւն և ոճերի ու դարձուածքների մէջ հարուստ բազմակողմանիութիւն. մէկ խօսքով լաւ ոճի բոլոր յատկութիւնները։ Բայց կրթեալ և ընդունակ մարդոց համար ամեն բարեկարգ տէրութեանց մէջ մտքերի գրաւոր արտայայտութիւնը միայն մի քայլ է դէպի Էւրոպայի, այսինքն կապով խօսքի ազատ արտայայտելու։ Ոչ միայն կոչումով ճարտասանները. ինչպէս են՝ Քարոզիչները, փաստաբանները և քաղաքական գործողները անպատճառ ձառեր պէտք է խօսեն. այլ և ամէն մարդու կեանքում կարող են այնպիսի դէպքեր պատահել, որոնք ստիպեն նորան իւր կարծիքը հրապարակաւ արտայայտելու։ Բայց եթէ հրապարակաւ արտայայտելու սովորութիւնը ձեռք չի բերած մատաղ հասակից, յետոյ, երբ հարկաւ պէտք է հրապարակաւ ճառախօսես, միշտ որևէ անյարմարութիւն և դժուարութիւն ես զգում, և սորա հետևանքը լինում է այն, որ շատ անգամ ձառը իւր ազդեցութեան մի նըշանաւոր մասը կորցնում է։ Այս պատճառաւ հարկաւոր է ո՛րքան կարելի է, վաղօրոք վարժուիլ և մանաւանդ խօսափել թղթից ստրկորէն կախումն ունենալուց, ինչպէս այս նախատեսաւ և Պլատոնը \*). թէ.» շատ կրթեալ մարդիկ աւելի անբնական ու տգեղ են խօսում, քան անկիրթ ու տգէտ վայրենիները։ Երիտասարդները պէտք է սովորեն մտածել խիստ կանոնաւոր հետևականութեամբ, և իրենց մտքերն արտայայտել նշանակեալ կարգով՝ առանց թղթի օգնութեան։ Թղթի կտորը, որի վերայ մի քանի

\*) Տես Պլատոնի, «Յեդրա»։

զլիւի գցող խօսքեր են նշանակած, կարող է յիշողութեան համար իբր օժանդակ միջոց համարուիլ: բայց աւելի լաւ է ըստ կարելոյն բաւականանալ և առանց այս միջոցի: Ճառախօսք միշտ պէտք է իւր ունկնդիրները երեսին նայէ, բայց այս անկարելի է, եթէ նա ստիպուած է գէթ ժամանակ առ ժամանակ միայն թղթին նայելու: Ազատ խօսելուն իբրև ամենալաւ նպաստող միջոցը աշակերտական ճառախօսութիւններն են, որոնք վաղուց արդէն մտքրած են Նօտլանդական համալսարաններում, և որոնք՝ կարելի է ասել, կազմում են նոցա փառքը: Վարժութիւնը տանում է դէպի արհեստ. արհեստը հաւատ է ծնեցնում մարդու մէջ. և սորա հետեանք լինում է այն, որ անյայտանում են թէ ամաչկոտութիւնը և թէ երկիւղը, որոնք շատ յաճախ խանգարում են մտքերի ազատ հոսանքին, բայց որոնք միշտ տիրապետում են առաջին անգամ հրապարակաւ ճառախօսող երիտասարդին: Սակայն ցանկալի է, որ այդպիսի զիպուածներում այս շատ բնական դժուարութիւնները լիովին անյայտանային: Չափազանց ինքնահաւանութիւնը և համարձակութիւնը՝ աւելի վատ պակասութիւններ են երիտասարդ հրապարակախօսի համար, քան թէ մի փոքր ամաչկոտութիւնը: Հրապարակախօսը երբէք չը պէտք է ազատուէր պարտաւանդութեան այն զգացմունքից, որը բնականաբար կապուած է նորա գրութեան հետ. որովհետեւ նորա խօսքերը ազդում են և պէտք է ազդեն ունկնդիրների մեծ կամ փոքր խմբի մտքերի վերայ: Բայց որպէս զի այս պատկառելի յարգանքը դէպի խօսողը չը ծնեցնէր հիւանդոտ երկչոտութիւն և շփոթեցուցիչ հոգսեր պայմանեալ կարգ ու կանոնի վերաբերութեամբ, ես խորհուրդ կը տայի ամէն մի նոր սկսող հրապարակախօսի ամենեւին չը մտածել իւր անձի

վերայ. այլ բարձրանալ ամբիօն զբաղուած իւր առարկայով և անկեղծ ցանկութեամբ իւր խօսքով ըստ չափու կարողութեան օգուտ բերելու: Սորանից, ի հարկէ, չի հետեւում, որ ոճի պայծառութեան և հակիրճ արտայայտութեան վերաբերութեամբ անկարելի լինէր բան ուսանիլ փորձուած և ճարտասանութեան տեղեակ մարդուց. ոչ, ես միայն կամեցայ ասել, որ համոզեցուցիչ ճառը իսկապէս բնական ձիրք է, որը շատ կամ քիչ ինքն իրան է զարգանում: Իսկ այն կատարելութիւնը, մինչև որը կարելի է հասցնել այս ձիրքը, արհեստ է, որը պահանջում է ամեն ուրիշ արհեստի նման շատ դէպքերում մասնագիտական ուսումնասիրութիւն և յաճախակի վարժութիւն:

X. Առաջին զխում ես ասացի, որ գրքերը չեն գիտութեան բնական աղբիւրները. այնու ամենայնիւ զարգացման այն աստիճանին, որին հասել է ժամանակակից հասարակութիւնը, գրքերը խաղում են և պէտք է նշանաւոր դեր խաղան մատաղահաս ուղեղների կրթութեան մէջ: Այս պատճառաւ ես զիտաւորութիւն ունիմ մի քանի խորհուրդներ տալ գրքերի ընտրութեան և գործածութեան վերաբերութեամբ:

Նախ և առաջ իմացէ՛ք որ, թէ և գրախանութիւնների դարանները կոտրատվում են գրքերի ծանրութիւնից և նոքա անթիւ են. սակայն գիտութեան իւրաքանչիւր ճիւղում միայն շատ քիչ ընտիր հեղինակութիւններ կան, որոնց վերաբերութեամբ միւսները կամ լրացուցիչ են, կամ երբեմն և պատասաբոյժներ: Եւ ծառի շուրջ փաթրթուող բաղեղի նման ընտիր հեղինակութեանց աւելի մնաս են տալիս, քան օգուտ: Օրինակի համար, քանի՞ հազար և մինչև անպամ տասը հազար գրքեր գրուեցան

և տարածուեցան քրիստոնէական կրօնի մասին մարդկութեանը Քրիստոսի Աւետարանը քարոզելուց սկսած՝ բայց այն ինչ նոցանում ուրիշ աւելի լաւ բան չի բովանդակվում, քան նոյն իսկ Աւետարանի մէջ. եւ թէ նոքա վաղը բոլորն էլ անյայտանային երկրի երեսից, քրիստոնէութիւնը դորանով ոչինչ չէր կորցնի: Ուսումնական շատ գրքերում, որոնք իւր ժամանակին շատ աղմուկ են բարձրացրել, նոյնքան անմիտ, ինչքան և կարևոր բաներ կարելի է գտնել և շատ քիչ է պատահում գիրք, որի մէջ աւելորդ և անօգուտ դատարկախօսութիւն չը լինէր: Այս պատճառաւ էլ ամուր պահեցէք ընտիր գրքերը, օրինակելի հեղինակութիւնները, մեծ գաղափարների և ազնիւ կրքերի աղբիւրները. և այնուհետեւ զիւրին կը լինի ձեզ ազատ մնալ այն բազմահատոր կողմնակի մեկնութիւններից, որոնցով բնագրի բովանդակութիւնը նոյնքան մթնանում է, որքան և լուսաբանվում: Օրինակ՝ երիտասարդ աստուածաբանի համար աւելի մեծ նշանակութիւն ունի անգիր գիտենալ նոր կտակարանը, քան թէ կարողանալ հմուտ դատողութիւն անել ժամանակակից հոգևոր մատենագիրների հեղինակութեանց մասին: Այս բոլոր հեղինակութիւնները գեղեցիկ են. բայց դոքա միակը չեն, ինչ որ հարկաւոր էր: Քրիստոնէական բարձր կատարելութեան ձգտիլ կարելի է և առանց նոցա, բայց ոչ առանց Ս. Գրքի: Այս պատճառաւ էլ կրկին դարձէք միշտ զէպի ընտիր հեղինակութիւնները, որոնց շուրջը պտոյտ է եկել մարդկային մտածողութեան ու վիճակի պատմութիւնը: Քաղաքագիտութիւնից կարդացէք Արիստօտէլ, Մաթեմատիքայից՝ Նիւտօն. Փիլիսոփայութիւնից՝ Լէյբնից, բանաստեղծութիւնից՝ Շէքսպիր, բնական գիտութիւնից՝ Փարագէյ: Անուշադիր մի թողնէք և այն երեւելի մարդոց,

որոնք թէ և չը հասան մարդկութեան համար կշիռ և նշանակութիւն ունեցող ուսումնական եղբակացութեանց, այնու ամենայնիւ օգուտ բերին իւրեանց ժամանակին նորանով, որ բողբօում էին ընդհանուր տարածուած մտքութեանց՝ զէմ և զրզում իրենց ժամանակակիցներին զէպի աւելի առողջ մտածողութիւն և գործունէութիւն: Այդպիսի մարդոց պատկանում են Ֆրանսիայում՝ Վօլտէր և Անգլիայում՝ Դաւիթ Իււմ: Բայց ի հարկէ, ձգտելով աւելի մօտիկ ծանօթանալու բոլոր այդպիսի օրինակելի խելքի տէր և մտածողութեան ու գործունէութեան աշխարհում կշիռ ու նշանակութիւն ունեցող մարդոց հետ, դուք ցաւօք սրտի կը զգաք, որ ձեր պարագմանց սկզբին միշտ չէք կարող օգուտ քաղել նոցանից. դուք հարկաւորութիւն կ'ունենաք աստիճաններ որոնելու, որոնցով կարելի լինէր բարձրանալ նոցա մօտ, որոնք բարձր են սաւառնում: Եւ այդպիսի աստիճաններն են փոքրիկ գրքերը: Այս պատճառաւ մի արհամարհէք փոքրիկ գրքերը, նոքա, այդպէս ասել, զիտութեան մեծ ամրոցին մերձեցողութեամբերն են, և դոցա վերայից թռչելը անվտանգ չէ: Ընդհակառակն. ուսումնասիրելով օրինակի համար լեզուները, աւելի լաւ է մի համառօտ քերականութիւն վերցրէք քան ընդարձակ. և ձշտութեամբ ուսումնասիրեցէք նախ՝ հիմքը, կազմուածքը, ոսկրները և կոշտ կմախքը, նախ քան խորասուզվիք կենդանի Փիլիսոփայի բազմաբարդ հիւսուածքում: Սկզբում այս բանը կարող է անյարմար երևիլ. բայց շատ անախորժութիւններից կ'ազատէ ձեզ ապագայում: Բայց հիմնաւորապէս ուսումնասիրելով փոքրիկ գրքոյկը, չի նշանակել անգիր սերտել այն: Երաւէ, նորանից շատ բան պիտի պահուի յիշողութեան մէջ, բայց այդ զեռ ևս ամենանշանաւորը և շատ էլ կրթողա-

կանը չէ: Անգիր սերտելը զուտ մեքենայական գործողութիւն է, որից ամէն մի մտածող անհաս պիտի խորշի. և մի և նոյն ժամանակ նա շատ սակաւ է հարկաւոր, թէ և գործէ ամբողջ շատ յաճախ: Անգիր կը սերտի միայն նա, ով որ չի կարող կամ չի կամենում մտածելուն ընտելանալ: Իսկ իմ խորհուրդն այս է. մտածեցէք որքան կարողէք, միշտ մինչև կարգալը կամ գոնէ կարգալու միջոցին: Եթէ դուք կարողէք ձեր սեփական խելքով իմանալ, թէ ինչու եռանկեան երեք անկիւնները, ոչ միայն իրականութեան մէջ երկու ուղիղն հաւասար են, այլ և գործի էութեամբ պիտի լինին հաւասար, դորանով դուք շատ աւելի կը նպաստէք ձեր մտաւոր ոյժերի զարգացման, քան թէ անգիր սերտէք Եւկլիդէսի տասն երկու գրքի բոլոր ապացոյցները: Ապա խորհուրդ եմ տալիս ձեզ կարգալ որքան կարելի է սխալմամբ և ժամանակագրական կարգով: Առանց կարգի փաստերը չեն հիւսվում մտաւոր շրջանում: ամենաբնական և լաւ կարգն է Գենետիքական (գոյացուցանողական) — այսինքն որով ցոյց է տրվում մի բանի ծագումն ու զարգացումը կարգով: Կարգացէք օրինակի համար Պլուտարքոսի ընդարձակ կենսագրութիւնները ժամանակագրական կարգով Թէզէոսից սկսած մինչև Կլեոմէնն ու Արաթը, և ձեր պատկերացման առաջ կը ներկայանայ յոյների աւելի կենդանի պատմութիւնը, քան ինչպիսին կարող էր տալ ձեզ մինչև անդամ Գրոտէն կամ Կուրցիուսը: Ինչ ասել կ'ուզէ, որ այս կանոնը, ինչպէս և ամեն ուրիշ կանոն զանազան դիպուածներում առանց բացառութեան չի կարելի գործածել: Սխալմամբաբար կարգալու միջոցին իբր բացառութիւն մեծ նշանակութիւն ունի հաշուան: Եթէ դուք սաստիկ ցանկանում էք պատմութեան որ և է առանձին շրջանի հետ ծանօթանալու, հետեւեցէք

այդ ցանկութեան: Միայն գործին ձեռք գարկէք ճշտութեամբ և հիմնաւորապէս: Ամրացած շղթայի մի օղակը իրա բնական կապով աստիճանաբար ձգում է դէպի ինքը և մնացածները: Մի սիրելի տեղից դէպի միւսը անցնելիս, դուք շուտով կարեւորութիւն կը զգաք խիստ ժամանակագրական հետեւականութեամբ կապել դոցա: Խրատելու համար կարելի է առ հասարակ թոյլ տալ և պատահական անսխտեմատիքական ընթերցումն. բայց այդ տեսակ ընթերցումը կարեւոր հանգստութեան և հոգւոյ թարմութեան համար է նշանակվում և կրթողական ոյժ իսկապէս չ'ունի: Այդպիսի խրատական ընթերցումը մշտական դառնալով, մտաւոր շրջանին կարող է վնասել քան օգնել, այն ինչ մեր ժամանակ դորան յանձնատուր են լինում շատ երիտասարդներ: XVI և XVII դարերի մեծ ուսումնականները մեզպէս շատ գրքեր չ'ունէին, բայց նոքա իրենց քիչ ունեցածից հիմնաւորապէս էին օգուտ քաղում: Անեկրօտներ կարգալու սովորութիւնը նման է ձահառում փոքրիկ շան հոտոտելուն, որը ամեն ինչ հոտոտում է, և ոչինչ չի բռնում: այն ինչ ճշմարիտ ընթերցողը իր նախատիպը գտնում է Յակոբի մէջ, որը ողջ գիշերը անընդհատ մենամարտեցաւ հրեշտակի հետ և յաղթող դուրս եկաւ, թէ և դորանով իր ազգը վնասեց:

XI Այստեղ ի դէպս մի քանի նկատողութիւններ կ'անենք Տասնագրական կարգալու վերաբերութեամբ: Նրատասարդների մէջ սովորաբար յայտնվում է մի շատ բնական ձգտումն որքան կարելի է շուտով սեփական մասնագիտութիւնն ընտրելու, այսինքն այն պարապմունքը, որին գերմանացիք հայտնաբերած շատ նշանաւոր անունն են տալիս: Բայց կասկած չը կայ, որ այդպիսի սահմանափակ

մտքով, ինչպէս երիտասարդները մասնագիտութիւնը հասկանում են, իւր մէջ մի մեծ սխալ է պարունակում, ինչպէս որ այս պարզ ապացուցուած է թէ մասնագէտների անձնական փորձով և թէ արուեստների կատարելագործութեան պատմութեամբ: Նախ՝ փոքր ինչ լուրջ մտածելն արդէն կարող է պարզել երիտասարդին. որ այն, ինչ նա այժմ գուցէ աւելորդ շքեղութիւն կամ մինչև անգամ բեռն է համարում իւր համար, հէնց այդ կարող է նորան ծառայել իբրև ամենանշանաւոր և ամենաօգտակար զէնք նորա ապագայ գործունէութեան համար: Այս կարծիքը շատ իրաւացի է մանաւանդ լեզուների վերաբերութեամբ, որոնք սկզբում ըստ երևութի, խանգարում են իրական առարկաներով պարապելու, բայց ժամանակով այնքան աւելի անհրաժեշտ են դառնում, որքան աւելի մեր գործունէութեան շրջանը լայնացնում ենք և մասնագիտական պարապմունքի մէջ հաստատվում: Նթէ լեզուագիտութեանը շատ յաճախ մեծ նշանակութիւն էին տալիս, այս միայն այն պատճառաւեր, որ այս գիտութիւնը ինքն իրան նպատակ էր համարվում: Իսկ լեզուները մտածող մարդու ձեռքին իբրև միջոց նպատակին հասնելու համար անդին են: Այդպէս անուանեալ սոսկ մասնագէտը միշտ սահմանափակ մարդ է. բայց աւելի վատ ևս՝ նա, յայտնի մտքով, որի սահման մարդ է, արհեստական հմուտութիւնների և մասնագիտական տեղեկութիւնների խմորուած արարած է, հաւասար հեռացած ինչպէս բնութեան մեծ ճշմարտութիւններից, նոյնպէս և մարդկային հաղորդակցութեան կենդանացուցիչ ազդեցութիւնից: Այդպիսի մասնագէտը հասարակութեան մէջ, թող լինի նա ամենաընդունակներից, ամենաաննշան դերն է խաղում, որովհետև նա իր մարդկայնութիւնը թաղեց իր կոչման մէջ. նա

կաշուեգործ է, և միայն կաշուի մասին խօսել զիտէ. նա ուսումնական է, որից բորբոսած գրքերի հոտ է փչում, ինչպէս մըլի ծխախոտ քաշողից թամբաբուի հոտ: Այս պատճառաւ, մասնագիտական պարապմանց յետեից գլխապատառ ընկնելու փոխանակ, երիտասարդն աւելի լաւ կ'անէ, եթէ ըսկսի կարելոյն չափ խուսափել ուսումնական արհեստականութեան բթացուցիչ ազդեցութիւնից: Նա դեռ ժամանակ կ'ունենայ սոսկ մասնագիտական գործունէութեան զիշատիչ զօրութիւնը զգալու: Թող նա, աւելի լաւ է, ուրախ տարածէ իւր թեւերն որքան կարող է աւելի ընդարձակ շրջանում:

«Նորա համար է երկտասարդութիւնը՝  
Որ թեւերն ազատ տարածենք.  
Եւ արհամարհենք և սիրենք:»  
(Գե00է)

Իսկ, ով որ արհամարհելով ընդհանուր կրթութիւնը, կը ցանկանար բացառապէս որ և է մասնագիտութիւն ուսումնասիրելուն ուղղել իւր խելքը, նորան կ'ասենք, որ այդպիսի ուսումնասիրելը, որքան էլ կատարեալ և հիմնաւոր լինէր նա, ամենեին չի կարող ծանօթացնել նորան իւր մասնագիտութեան բոլոր ճիւղաւորութեանց հետ. որ այս մասնագիտութեան ամենախորին ուսումնասիրութիւնը անգամ կարողութիւն չի տայ նորան, որ իւր կոչման ամենահետաքրքիր և ամենանշանաւոր մասը տիրապետէ, այն մասը, որտեղ մասնագիտական գործունէութիւնը հարկաւ հանդիպում է մարդկային հասկացողութեանց և համակրութեանց հետ: Այս զիպուածում փաստաբանութիւնը հիանալի օրինակ է ներկայացնում մեզ. որովհետև չը կայ

մի աւելի վարժութեան կարօտ, աւելի արհեստական և աւելի անկարեկից դէպի մարդկութիւնը ուրիշ մի մասնագիտութիւն, քան իրաւագիտութիւնը իր շատ մասերում սակայն ուրիշ մասերում մարդկութեան իրաւունքների և արտօնութիւնների մեծ պաշտպան է դառնում. և զբաղւում է այնպիսի առաջնակարգ խնդիրներով, որոնց գործնական վճիռը պահանջում է, որ փաստաբանը ոչ այնքան տեղեակ օրէնսգէտ լինի, որքան ճշմարիտ մարդ: Սա պէս և Բժշկութիւնը մարդկային բնութեան և հոգեւոր ծախսութեան հետ այնքան գործ ունի, որքան և հմուտութեամբ բաղադրուած դեղորէից ոյժերի և ախտերը ճարտարագիտութեամբ հետազոտելու երևոյթների հետ: Այս պատճառով, ընդհանուր փորձը ցոյց տուց, որ կրթեալ ուսումնականը թէ և սկզբում առերևութապէս տեղի է տալիս մասնագէտին, գործի շարունակ ընթացքում յաղթահարում է վերջինիս իր մասնագիտութեան մէջ: Որովհետև մասնագէտը իր սովորական շրջահայեացի սահմանափակ դաշտից ոչ այն սկզբունքները կարող է ճանաչել, որոնց վերայ կառուցած է նորա սեփական գործնականութիւնը, ոչ իր առանձնացած գործունէութեան յարաբերութիւնները մարդկային ընդհանուր շահերի և մտածողութեան հետ: Սոսկ մասնագիտական պարապմունքի վարակիչ և վնասակար ոյժի դէմ ամենալաւ պաշտպանողական միջոցներն են հասարակութեան բարի ազդեցութիւնը, աշխատանքը և մեծ մատենագրների հետ անդադար հաղորդակցութիւնը, մանաւանդ բանաստեղծների և պատմաբանների հետ, որոնց, կենդանի մարդկային մտքերը ընտրողում են աշխարհքի արիւնը» և ընդարձակում մարդկանց փոխադարձ հասկացողութեանց շրջանը:

XII. Մտածողական ոյժը կրթելու մասին այս յօ-

դուածը մտադիր եմ մի քանի նկատողութիւններով աւարտել այնպիսի առարկայի մասին, որի վերաբերութեամբ ընթացողը շատ կարելի է, սպասուած է ինձնից, իբրև լեզուաբանից, ամենից աւելի բացատրութիւններ՝—այսինքն լեզուների ուսումնասիրելու մասին: Հետևեալ համառօտ կանոնները, որ ես կը յիշեմ, ինչպէս կարծում եմ իրենց բնական կարգով, բազմամեայ փորձառութեանս հետևանք են և այս պատճառաւ նոցա իսկական գործնականութեան վերայ կարելի է յուսալ:

ա. Եթէ միայն կարելի է, լեզու ուսումնասիրելը լաւ ուսուցչի ձեռնտութեամբ սկսեցէք: Նա ձեզ միջոց կը տայ շատ ժամանակ վաստակելու հէնց նորանով, որ կը հեռացնէ այն արգելքները, որոնք կարող էին ձեզ վատեցնել. և կը պահպանի վատ արտասանութեան սովորութիւնից, որ պիտի նորից յետ սովորէիք:

բ. Նայի և առաջ ձեր ուսումնասիրած լեզուով բարձրաձայն անուանեցէք ամենայն իր, որ ձեր աչքի տակն է, և առանց մայրենի լեզուի միջնորդութեան. ուրիշ խօսքով՝ հէնց առաջին դասից սկսած ձեզ շրջապատող առարկաների մասին ձեր ուսումնասիրած լեզուով մտածեցէք ու խօսեցէք. և յիշեցէք որ խօսքերը նախ և առաջ ականջի և լեզուի մէջ պէտք է տպագրուին և ոչ թէ միայն ձեր գրքի և ուղեղի մէջ:

գ. Գոյականների հոլովմանց ամենապարզ և աւելի կանոնաւոր ձևերը անգիր սերտեցէք. օրինակ Us և a վերջացած գոյականները Լատիներէնում և A վերջաւորութեամբ Սանսկրիտերէնում:

դ. Հէնց որ այս գոյականների ուղղական և հայցական հոլովները սովորեցիք, վերցրէք որ և է կանոնաւոր բայ սահմանական եղանակի ներկայ ժամանակի ուսուցչին

դէժուի և ներգործական բայերի համաձայնութեան կանոններով մի համառօտ նախադասութիւն արտասանեցէք բարձր. օրինակ՝ ես տեսնում եմ արեգակ:

ե. Վարժութիւնը բարդեցէք, գոյականին այնպիսի ածական աւելացնելով, որ գոյականի պէս հորովուի. օրինակ՝ ես տեսնում եմ պայծառ արեգակ.

զ. Շարունակեցէք այդ կերպով, այսինքն սովորեցէք աստիճանաբար հասարակ բայերը սահմանական եղանակի, ներկայ, անցեալ և ապառնի ժամանակներով և նոցանից ու նման գոյականներից կարճ նախադասութիւններ կազմեցէք. բայց միշտ անմիջապէս օտար լեզուով և առանց մայրենի լեզուի օգնութեան: Լեզուի կանոնաւոր ուսումնասիրութեան այս հիմնական սկզբնաւորութեան ժամանակ՝ ոչ այնքան իրական, որքան երևակայական դժուարութիւնները պէտք է յաղթուին— իսկ աւելի շատ անգամ ամենայն բան թերի վատ ձեռնարկելու սովորութիւնը:

է. Հէնց որ ականջը և լեզուն անունների, բայերի և նախադասութեանց պարզ ձևերին բոլորովին ընտելացան, այն ժամանակ, բայց ոչ երբէք վաղ, աստիճանաբար, ուսանողը պէտք է դէպի աւելի դժուար և բարձր ձևերին անցնի:

ը. Երբէք անգիր չը սերտէք դեռ ևս օրինակներով և վարժութիւններով չը պարզուած կանոնները. կամ աւելի լաւ, բոլոր կանոնները ձեր շարադրած վարժութիւններից հանեցէք. և թող այս կանոնները քիչ լինին և ըստ կարելոյն պարզ:

թ. Չանաղան տեսակ բացառութիւնները աւելի լաւ է նոյն չափով, որ չափով որ հետզհետէ պատահում են՝ վարժութեան միջոցով իւրացնել. բայց մի քանի ան-

սովոր բաներ, զոր օրինակ, մի քանի անկանոն բայերի խոնարհման մէջ այնքան յաճախ են պատահում և անխափան առաջ ընթանալու համար այնքան մեծ արգելք են լինում, որ աւելի լաւ է որքան կարելի է շուտով դոցա անգիր սերտել: Այդպիսի բացառութիւնների կարգումն է շինել բայը համարեա՝ ամեն լեզուներում:

ժ. Ընթերցանութեան համար սկզբում կարող են գործածուիլ հեշտ պատմութիւններ կամ աւելի լաւ, հասարակ խօսակցութիւններ: Այդպէս օրինակ, յունարէն Քսէնօփոնի «Նահմանջ քիւրուցը», նոյնպէս նորա «Թողլէ» (Սոկրատէսի մասին յիշողութիւններ), Կերէսի «Պատկերը» \*) և Լուցիանի «Խօսակցութիւնները»: Բայց ընթերցանութիւնը, ինչպէս այս սովորաբար լինում է, երբէք չը պէտք է մտածողութեան և ազատ խօսքի տեղը բռնէ: Որպէս զի արդէնք այս հակամանը, ամենից լաւ է ընտրել բնական պատմութիւնից կտորներ, կամ հետաքրքիր առարկաների նկարագիրներ և բարձրաձայն պատմել նոցա մասերը հասարակ նախադասութիւններով և առանց մայրենի լեզուի օգնութեան:

ժա. Ընթերցանութեան և բերանացի նկարագրութեան բոլոր վարժութիւնները պէտք է երկու, երեք և աւելի անգամ կրկնուին: Առ հասարակ լեզու ուսումնասիրելու առաջին աստիճանների համար ընտրած զիրքը շատ անգամ պէտք է կարդացուի:

ժբ. Ընթերցանութեան համար ըստ կարելոյն, միշտ այնպիսի նիւթ ընտրեցէք, որ ձեր հոգեկան պահանջ-

\*) Կէքէ՞ Թէքոյի, Սոկրատէսի աշակերտ, գրեց փելիսոփայական երեք խօսակցութիւններ, որոնցից միայն մինը մեզ հասել է, այն է՝ «Պատկերը», այսինքն «պատկերը»:

ներին բաւականութիւն տայ: Եթէ ձեր աշխատանքի առարկան հետաքրքիր է, այն ժամանակ ձեր յառաջագիժութիւնը կրկնագոտիկ արագ կը կատարուի: Կանխապէս մի բան իմանալը ընթերցանելի գրքի բովանդակութեան մասին, բաւականին հեշտացնում է աշխատանքը: Այս հիման վերայ, քրիստոնեաների համար, որոնք Ս. Գիրքը մեզ՝ Շօտլանդացիներին պէս զիտեն, օտար լեզուներ ուսումնասիրելու համար Աստուածաշունչը ամենաընտիր գրքերից մինն է:

Ժգ. Պարապելու ժամանակ օտար և ձեր մայրենի լեզուի ոճերի ու դարձուածքների զանազանութեան վերայ ամենախորին ուշադրութիւնը դարձրէք: Պարզ գծեցէք ամեն այդպիսի դարձուածք գրչով կամ մատիտով և թղթի անկացրէք մայրենի լեզուի համապատասխան դարձուածքով: Իսկ մի քանի օրից յետոյ ձեր մայրենի լեզուով գրածը բնագրի լեզուով թարգմանեցէք:

Ժդ. Իբրև առաջնորդութիւն ձեր դիտողութեանց ժամանակ կամ այդ դիտողութիւնները ստուգելու համար օգուտ քաղեցէք որ և է սիստեմատիքական քերականութիւնից. այս բոլորը առ ժամանակ համարեցէք օգտակար: Բայց քերականական ծանօթութիւնները միշտ վարժութիւնից յետոյ հաւաքեցէք, և ոչ թէ մինչև վարժութիւնը:

Ժե. Մի բաւականանաք՝ շատ քերականութեանց մէջ պատահող՝ լոկ չոր ու ցամաք կանոններով առանց հիմքի, այլ միշտ աշխատեցէք գտնել թէ ի՞նչպէս են գոյացել այդ կանոնները:

Ժզ. Ուսումնասիրեցէք լեզուի տեսականութիւնը, խօսքի շէնքը, և այն, ինչ կոչվում է համեմատական լեզուաբանութիւն: Այս գիտութեամբ մշակուած սկզբունք-

ները ձեզ միջոց կը տան ուսումնասիրութիւնը կատարեալ հասկացողութեամբ շարունակել, առանց որոյ ամենածանր աշխատանք է յիշողութեան համար:

Ժէ. Այնու ամենայնիւ ամենագլխաւոր վարժութիւնը գործնականութիւնն է: Նախ և առաջ հարկաւոր է լեզուն սեփհականել, բայց այս իւրացնելը միայն մշտական ընթերցանութեամբ և մշտական խօսակցութեամբ է ձեռք բերուում: Եթէ մարդը կայ, ում հետ կարելի էր խօսել, խօսեցէք բարձր ինքներդ ձեզ հետ: Հարկաւոր է ականջը և լեզուն վարժեցնել, և ոչ միայն աչքը և միտքը: Ընթերցանութեան ժամանակ միայն ընտիր մատենագիրներով չը պիտի բաւականանալ. ընդ հակառակն, ամեն ձեռք ընկածը պէտք է ադահութեամբ լսուի: Նոյնպէս մի որ և է զիրք ուշի ուշով և մանրամասնօրէն ուսումնասիրելով չի կարելի բաւականանալ. այս բոլորը լաւ է որպէս մասնագիտական պարապմունք, իսկ անհրաժեշտ է նա և լեզուի ընդհանուր ոգուն ընտելանալը. բայց մանրամասնութեանց մէջ մանրակրկիտ ճշտութիւն պահպանելու համար միայն այն ժամանակ պիտի ձգտել, երբ արդէն գործնականապէս տիրապետեցիք լեզուին և հարկաւոր ունակութիւնները ձեռք բերիք: Այսպէս օրինակ, Նէքսպիր հարկաւոր է մօտ քսան անգամ կարգալ՝ նախ քան սխէք շէքսպիրեան բնագրի տարբերութիւնները ուսումնասիրել կամ նրա քննադատների սրամտութիւնները կարգալ:

Ժը. Մտքերի գրաւոր արտայայտելը օտար լեզուով՝ ամենագլխաւոր արդիւնքը պէտք է լինի — խօսելու և կարգալու, ուղղակի և հակառակ թարգմանութեան վարժութեանց յետոյ: Այստեղ գլխաւոր պայմանը կայանում է նօրանում, որ աշխատութիւնը մի որ և է օրինակով, և ոչ թէ բառարանի կամ նախադասութեանց ժողովածուի օգ-

նութեամբ կատարուէր: Ընտրեցէք այնպիսի հեղինակ, որը  
ինքնուրոյն ոճի օրինակը համարուէր, զոր օրինակ՝ Պլա-  
տոնը՝ փիլիսոփայութեան մէջ, կամ Լուցիանը երգիծա-  
բանական խօսակցութեան մէջ. փոխառէք նոցանից ոճերը  
և դարձուածքները, և նմանատեսակ բան գրեցէք, բայց  
անմիջապէս, առանց մայրենի լեզուի օգնութեան: Այդ-  
պիսով մի փոքր հմտութիւն ստանալով, դուք կարողէք  
արդէն ձեր մտքերն աւելի ազատ յայտնել. այսինքն շատ  
կամ քիչ ինքնուրոյնաբար, և փոքր առ փոքր կը սովոր-  
էք նոյնպէս գեղեցիկ գրել օտար լեզուով, ինչպէս Էրազմը,  
Վիտտենբարը կամ Բունկէնը լատիներէն: Կարելի է նոյն-  
պէս հայրենի ընտիր մատենագիրները օտար լեզու թարգ-  
մանելով վարժուիլ, բայց ոչ սկզբներում: Նախ ահանջը  
պիտի քաջ ընտելացած լինի անմիջապէս օտար լեզուի  
խօսքին նմանելու, որպէս զի յետոյ աւելի դժուար վար-  
ժութեան փորձը՝ այսինքն մայրենի լեզուից թարգմանու-  
թիւնը՝ կարողանայ յաջողութիւն ունենալ:

## ՖԻԶԻԲԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Երեսասարկներէ վառքը՝ նոցա ոյժն է:»  
ՍՈՂՈՄՈՆ.

I. Իւրաքանչիւր գոյութիւն ունեցող առարկայ,  
կայուն մնալու համար պէտք է ունենայ մի հիմք, աճե-  
ցողութեան համար մի արմատ, կամ մի սրնակ պտոյտ  
զալու համար—մի խօսքով մի այնպիսի բան, որ թէ և  
ամբողջին է ենթարկուած, այնու ամենայնիւ նորա կա-  
րևոր յենլու կէտն է կազմում, որից ամբողջի գոյութիւնը  
կախուած է: Այս փաստը նոյնքան ճշմարիտ է, որքան մի  
որ և է մաթեմատիքական փաստ: Տունը առանց հիմքի չի  
կարելի կառուցանել, բայց այդ հիմքը ինքն ըստ ինքեան  
ոչինչ նշանակութիւն չ'ունի, և եթէ խորն է գրած օմինչև  
անգամ բոլորովին չի նշմարվում, որովհետև զետնի մէջն  
է թաղուած: Հէնց այդպիսի յարաբերութիւն կայ մարդու  
մտածողական ընդունակութեան և նրա մարմնու, մարդու

մտաւոր գործունէութեան և նրա Ֆիզիքական առողջութեան մէջ: Եւ եթէ այս համեմատութիւնը ճիշտ է, ապա ուրեմն պարզ է, որ ուսանողը ուրիշ ոչինչ բանի վերայ այնքան չը պիտի հոգար, որքան որ իր մարմնոյ և արեան առողջութեան վերայ: Սակայն ամենին յայտնի է, որ առողջութեան մասին հոգսը, կամ որ մի և նոյնն է, սեփական մարմնու մասին հիմնաւորապէս հոգացողութիւնը այդպիսի մարդկանց համար ամենավերջին գործն է, և որքան որ աւելի եռանդով զբաղուին առհասարակ, այնքան աւելի այս մասում պատրաստեն մեղանշելու, և երկաթուղու գնացքի նման, որին դեռ նշան չի տուած, թէ վտանգ է սպասում նորան, արագութեամբ կորստեան անդունդն են գնում, նախ քան նկատին, թէ որտեղ են գտնվում իրենք: Այս պատճառաւ, երիտասարդը, ցանկանալով իւր անձը նուիրել ուսումնական գործունէութեան, նախ և առաջ պիտի դրօշմի սրտումը ընդհանուր, փորձով ապացուցուած այն համոզմունքը, թէ ընդհանրապէս նստակեաց կեանքը և մասնաւորապէս այնպիսի նստած պարապմունքները, որոնք ուղեղի սաստիկ և շարունակ լարուած վիճակ են առաջացնում, քիչ թէ շատ փնաս են առողջութեան, և թէ ի բնէ թոյլ կազմուածք ունեցողները, որոնք յաճախակի առանձին սիրով գիրք կարդալով են անցուցանում իւրեանց կեանքը, սորանով անմիջապէս նպաստում են իւրեանց ընդունակութեանց թուլանալուն և իրենց մարմնու կատարեալ քայքայման: Հին ուսանողի և ուսումնականի այս նախազգուշութիւնից յետոյ, թող ամէն մինը յիշի, որ փնասը իր գլխին կը թափուի, եթէ իր առողջութեան մասին այնպէս չէ հոգայ, ինչպէս լաւ մշակը հոգում է, որ իր գործիքները միշտ սրած լինին, կամ լաւ զինւորը՝ որ միշտ պատրաստի

վառօղ ունենայ: Բայց որպէս զի ընթերցողը գիտենայ, թէ առողջութեան մասին ի՞նչպէս պիտի հոգալ, ես կ'առաջարկեմ մի քանի ամենանշանաւոր գործնական խորհուրդներ, որոնք իմ բաղմամբայ փորձառութեանս արդիւնքն են:

II Ինչպէս որ աշխարհի ամենայն բանի, այնպէս էլ մեր մարմնու զարգացումն և ոյժը պայմանաւորած է շարժառեւէամբ: Կեանքի էութիւնն է գործունէութիւն կամ աշխատանք. անպայման հանգստութիւնը միայն գերնգմանումն է լինում, և մարդուս աշխատողական ուժով կը չափուի նորա կենսական ոյժը: Աթէ մարմնի իւրաքանչիւր ընդունակութիւնը և գործողութիւնը անթերի կարգով յայտնվում է՝ այդ առողջութեան նշան է իսկ եթէ առողջութիւնը կատարեալ է—այդ Ֆիզիքական ոյժի նշան է: Թէ և կարելի է առողջ լինել և մի և նոյն ժամանակ Ֆիզիքական մեծ ոյժ չ'ունենալ, բայց այնու ամենայնիւ առողջութիւնը փոքր ի շատ է ցոյց է տալիս այս ոյժի լինելը, իսկ ամեն հիւանդութիւն՝ մարմնի թուլութիւն է: Ամենայն մարդ կարող է նկատել, որ բնութեան մէջ ամեն ինչ միայն աճմամբ է զարգանում. իսկ աճեցողութիւնը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ բուսական և կենդանական ոյժերի անդադար շարժողութիւն. և ինչ որ խանգարում կամ նուազացնում է այս ոյժերի գործողութիւնը, օրինակ՝ խիստ քամիները կամ ցուրտը, այն ամենը նուազեցնում են աճեցողութիւնը և արգելք են լինում զարգացման: Այս պատճառաւ, հեշտ է հասկանալ, որ գրասեղանի առաջ նստելն ու գրական զբաղմունքը՝ մարմնու զարգացման միջոց չեն կարող համարուիլ: Արեան շրջանադարձութեան և մկնակների ազատ գործողութեանը նպաստել կարող է միայն շարժողութիւնը և ամենայն զանցառութիւն այս

բանի դէմ բնութիւնից անպատիժ չէ մնում: Իրտութիւններով պարագող ամենայն երիտասարդ պէտք է սրբութեամբ ուխտէ, որ օրէնք զոնէ 2 ժամ թարմ օգ ծծելով՝ շարժողութեան մէջ կը լինի. իսկ եթէ այս չ'անէ, այն ժամանակ սառած ոտները, նրա մարմնու ներքին մասերում արեան խտփանուելը և ստամոքսի ու զլխի խանգարուած լինելու գանազան նշանները՝ չեն գանգաղիւր անմիջապէս յայտնելու նորան, թէ նա մեղանչել է բնութեան դէմ. և եթէ նա չի փոխի իր կենցաղավարութեան կերպը, անպատճառ, յամառ երեսայի պէս կը կրէ իւր թշուառ պատիժը. որովհետև բնութիւնը միշտ աւելի անողոք է յանցաւորի դէմ, քան այնպէս չափազանց գթաւատ մի քանի փափկասիրտ զատիարակները: Եւ ի՞նչ հարկ կայ, որ երիտասարդը այդ վատ և առողջութեան համար վնասակար սովորութիւնն ստանայ: Կանգնած էլ կարելի է նոյնպէս լաւ մտածել, ինչպէս և նստած, երբեմն ևս առաւել լաւ: Իսկ ինչ վերաբերում է կարգալուն, կ'ասենք որ մեր ժամանակ, երբ մինչև անգամ ամենընտիր գրքերը յարմար ձևով և աժան են հրատարակվում, բնաւ հարկաւոր չէ մէջքը ծռել և կուրծքը սեղմել՝ առջևիդ դրած գիրքը կարդալու համար: Սենեակում անց ու դարձ անելով, որ և է դրամա կամ վէպ աւելի բնական և աւելի յաջողակ կերպով կարող ենք կարդալ, քան բազկաթոռում գլուխը քաշ գցած: Նստելը անբնական դրութիւն է, որը չը պէտք է սովորութիւն դառնար. բայց եթէ դուք նստածէք կամ ստիպուածէք նստել՝ այնու ամենայնիւ ուղիղ նստեցէք. — մէջքը դէպի լոյսը դարձրած և այնպէս որ՝ կուրծքը բոլորովին ազատ լինի: Լեզուներ ուսումնասիրելիս, կամ բանաստեղծականը նտիր հասուածներ կարդալիս, որքան կարելի է յաճախ,

բարձր կարդացէք այս վարժութիւնը, որ դեռ կղեմէս Աղէքսանդրացին էլ առաջարկեց, օգտակար է երկու պատճառով: Նախ՝ կազդուրում է թոքերը, կենսքի այս ամենանշանաւոր գործարանը, և երկրորդ ականջն ընտելացնում ձայնական զանազանութիւններն իմանալու, որոց մասին շատ ուսումնարաններում, դժբաղտաբար, ամենևին ուշադրութիւն չեն դարձնում: Երիտասարդների ձգտած որ և է գիտութիւն և անմիտ սովորական նստակեաց պարագմունքի եղանակը՝ մեծաւ մասամբ չեն կապուած միմեանց հետ հարկաւորապէս կամ անչափան չեն: Մտաւոր աշխատանքի մի յայտնի մասը, անկասկած, գրքերով պիտի կատարուի. բայց եթէ օրինակի համար ես կ'ուզեմ Հոմերոսը հիմնաւորապէս ուսումնասիրել՝ քերականութիւնից ու բառարանից նախապատրաստական տեղեկութիւններ ժողովելուց յետոյ, ես կարող եմ Հոմերոս նոյնքան լաւ կարգալ սարի գագաթին կամ ծառի ստուերի տակ, ինչպէս և փակուած սենեկում: Եթե ինչ մի որ և է ողբերգութիւն կամ Պլատոնի մի խնայեցութիւն կը կարդանք ո՛չ թէ նուազ հաճութեամբ, այլ ընդհակառակն աւելի բաւականութիւն կը գգանք, եթէ շրջապատած լինինք անուշահոտ ծառերով, կամ մեր ականջը ակտրոպցնէ մեր ձակայ առուի դիւթական խոխոջներ: Եւ եթէ դուք առաջին կարգալու ժամանակ ամենադժուար խօսքերի մի փոքրիկ ցուցակ կաղմէք, երկրորդ անգամ կարդալիս կարողէք և առանց բառարանի բաւականանալ: Երիտասարդ ուսումնականը թէ առողջութեան և թէ քաղաքավարութեան համար, պիտի զգուշանայ որ ամենայն տեղ զգալի չը լինի իւր գրքերի բուրմունքով, որը ծխախոտի հոտի պէս նշմարելի է: Գրքերի այս կոյր հետևողութիւնից նախազուշացնելու աւելի յարմար միջոց չը կայ, քան միա-

նալ կամոսորները խմբին: \*) Այդտեղ եղած վարժութիւնները կրկնապատի կօզտակար են. նախ՝ կ'ազատեն անհամուսումնամոլութիւնից (педантизмъ) և երկրորդ՝ մէջքը կ'ամրապնդեն հասարակական բոլոր պարտաւորութիւնները անթերի կատարելու համար: Պրուսացիք, հին յոյների պէս, լիովին հասկացան զինւորական կրթութեան կարևորութիւնը և իւրաքանչիւր պրուսահպատակ պարտաւոր է որոշ ժամանակ զօրքի մէջ ծառայել, իսկ մենք անգղիացիքս, վաղորօք շտապում ենք առևտրական գրասեղանի առաջ կանգնելու, որով ի հարկէ, թէ մեր ազգային առաքինութիւնները և թէ մեր արիութիւնը քիչ չեն մնասվում: Ներկայումս երկաթուղիներով ու շոգենաներով ավտան ճանապարհորդելը համարեայ ամենին միջոց է տալիս կարճ ճանապարհորդական հետազօտութիւններ անել: այս պատճառաւ աններելի է ուսանող երտասարդութեանը ամբողջ շաբաթներ ու ամիսներ մեխած նստել որ և է հին, փթած գրքի առաջ, այն ինչ նա կարող էր մեծ բաւականութիւն ստանալ ծաղկազարդ հովտում կենդանի բնութեան պատկերները դիտելով: Վերջապէս եթէ անհրաժեշտ կարևոր է, թող գիրք էլ լինի ձեր գրպանում: բայց աւելի լաւ է, որքան կարելի է, կախում չ'ունենալ

\*) Կամոսորների խումբ ասելով, կեդրնակը հասկանում է Անգլիայի բազմաթիւ ընկերութիւններից մէկը, որի մէջ մասնակցող երկասարգները հրացանաձուլութեամբ, զինուորական շարժմունքներով ու մարմնամարզական վարժութեամբ պատրաստվում են կամաւոր զինուորական ծառայութեան համար: Գերմանիայում մի և նոյն նպատակին ծառայում են ճարձմամարդկան ընկերութիւնները. (Turnvereine): Մեզանում այդպիսի ընկերութեանց կեաքը (թէ և ոչ լաւ կազմակերպուած) նշմարվում է Ղաբաբաղու (Սիւնեաց աշխարհ) Ղազարու և Զէյթունի կողմերը, ուր մանուկները, կենդ տարեկանից սկսած, զէնք են գործածում և որսորդութեամբ են պարապում:

թղթէ օժանդակ միջոցներից, անմիջապէս բնութիւնից ուսանիլ, այսինքն նորան գններով, և այսպիսի «իմաստուն անգործութեամբ» աննկատելի կերպով զարգանալ մտածողութեամբ և զգացողութեամբ՝ մեզ չըջապատող աշխարհքի կենդանացուցիչ տպաւորութեանց ազդեցութեամբ: Որպէս զի ճանապարհորդութիւնները յիշեալ երկու նպատակներին էլ, այսինքն առողջութեան և կրթութեան ծառայելին կարիք չը կայ մի Վօրսդվօրտի պէս մարդու երևակայական յափշտակութեանց յանձնատուր լինել: \*) Նրկարանութիւնը, Բուսարանութիւնը, Կենդանաբանութիւնը, և առ հասարակ բնական պատմութեան բոլոր ճիւղերը ամենից լաւ նոյն իսկ բնութեան մէջ են ուսումնասիրվում: Եւ նոյնը ջանասիրութեամբ ուսումնասիրելու ժամանակ՝ սովորութիւն է դառնում այն եռանդուն և խիզախական ճանապարհորդութիւնները, որոնք մարդկային անկախութեան համար ամենալաւ փորձեր են: Պատմութիւնը և հնախօսութիւնը նոյնպէս աւելի լաւ են ուսումնասիրվում մի պատմական հովտում, վանքի աւերակների կամ սահմանակից հին ամրոցի վերայ: Եւ յիրաւի մեր դարում, երբ ողջ աշխարհը շատ կամ նուազ շարժվում է շոգիով, իրաւունք ունին գործունեայ և ողջամիտ մարդիկ արհամարհելով նայել տանը նստած և գրքերից սովորող ուսումնականի վերայ, ինչպէս մի անպիտան անդամալուծի և ծաղրալի այլանդակի վերայ, էլ

\*) Վելիամ Վօրսդվօրտ. (1770—1850 թ.). Անգղիական բանաստեղծութեան մէջ «Լճային Գարդոնիանութիւն» անունով յայտնի ուղղութեան կենտրոնը (Նա ապրում էր մի սիրուն լճի ափին): Աւանձին կախումն և ընդունակութիւն ցոյց տուեց բնութիւնը բանաստեղծօրէն նկարագրելու մէջ իւր կացած տեղի ազդեցութեամբ:

չեմ յիշում: որ այս մարդիկ իւրեանց առողջութեանը վնասելով, ամենաթշուառ կեանք պիտի վարեն և վաղահաս գերեզմանը մտնեն:

Մեր մարմնի մեքենան միշտ հարկաւոր հաւասարակշռութեան մէջ պահպանելու համար, խաղերից և հարմար հարդարանքից \*) աւելի լաւ միջոց չունենք: ձաշից առաջ կանոնաւոր զբօսանքները, որ սովորաբար մի քանի մարդոց ընկերակցութեամբ կատարվում է, այնքան զուարթացուցիչ չեն լինում և աւելի պաշտօնականի պէս մի ձև է: Այդպիսի պաշտօնական ձևերից խուսափող մարդիկ իրենց հարկաւոր շարժողութիւնը մարմնամարզական վարժութեանց և զանազան խաղերի մէջ կը գտնեն: Գործածական խաղերից կարելի է խորհուրդ տալ մանաւանդ հետեւեալները: Տղաներին և երիտասարդներին կրկէս, աւելի հանդարտ բնաւորութիւններին Բօուլինգ, իսկ առ հասարակ ամեն հասակներին զուարթ Շօտլանդական ֆօլքլոմպարէլը, եթէ ուժի համեմատ է կատարվում, նոյնպէս լաւ վարժութիւն է երիտասարդների համար, իսկ առաջատար ու թիակի ճարպիկ վարելը, որ տեսնում ենք շօտլանդական և հէրրիդեան ջրերում, կատարեալ զարգացած մարդու բոլոր ֆիզիքական ոյժն ու ընդունակութիւնը լա-

\*) Cricket, bowling և golf: Անգլիայի սովորական ժողովրդական խաղերն են: Cricket փոքր էնչ նմանութիւն ունի Աղէքսանդրապոլում գործածուող Վոլոյի լսիւ և թիֆլիզի Տանտուլչի հետ: 11 Խաղացողներից մի մասը աշխատում է զեանում ցցած երեք ձողերը դեղակով վայր ձգել, իսկ միւս մասը խանգարում է փայտով: Bowlingէ, գնդի խաղի մէջ, մէկ մէկու ետեւից սպիտակ և սև գունդեր են ձգում աշխատելով կարմրին դիպցնել: Golfէ մէջ (որը նոյնպէս կրկէս) իւրաքանչիւր խաղացող պէտք է կարգով իր փայտէ գունդը զեանում ցցած ինն աղեղներով անցկացնէ, որին միւս բոլոր խաղացողներն աշխատում են խանգարել:

րող արհեստ է: Ձկնորսութիւնը տրամադրում է բանաստեղծական գաղափարներ ստեղծելու և զարգացնելու, ինչպէս լաւ ցոյց են տալիս Վալտօնի, Ստօգրատի, և երևելի Ջօն Վիլսօնի օրինակները. \*) Անձրևոտ եղանակին Բիլիարդ խաղալը, անկասկած ամենալաւ խաղերից մէկն է: ձշմարիտ, շատ զարմանալի է, թէ ի՞նչպէս այս խաղի ժամանակ զարգանում է աչքի սրատեսութիւնը, շոշափողութեան նբութիւնը և նուրբ հաշուետեսութիւնը: Սորա հետ համեմատելով, Լոուլ խաղալը ամենակոպիտ և յիմար խաղ է. որը իր ամենալաւ տեսակներին, այն է Վիստի մէջ, միայն յիշողութիւնը սրում է: Ճապոնի (շախմատ) իսկապէս չը պիտի խաղ անուանուէր. սա աւելի լուրջ, գլխի ուղեղը սաստիկ լարող պարապմունք է: Մտաւոր գործողութեամբ սովորաբար չը պարապող մարդու համար այս ծանր խաղը կարող է բաւականութիւն պատճառել, բայց կանոնաւոր մտածողի համար նա չի կարող հանգստութիւն համարուիլ:

III Այժմ թոյլ տուէք ինձ մի քանի նկատողութիւններ անել մի շատ սովորական, բայց և նոյնպէս շատ անգամ անխօսեմ կերպով գործադրուող ուսուցիչ և խնչու գործողութեան մասին: Բժշկապէտ Աբէրնէտիի \*\*) խօսքերով, «աշխարհքի երկու ամենամեծ մահաբեր զօրութիւններն են որկրամոլութիւնն և ագահութիւնը»: Միայն կասկած չը կայ, որ շօտլանդական ուսանողների վաղահաս մահուան պատճառը այդ զօրութիւնները չը պէտք է հա-

\*) Ջոն Վիլսոն, Անգլիական բանաստեղծ էր, (1783—1954.) «Ժանտախտի քաղաք» սղերգութեան հիղինակը, որից մի հատուած թարգմանել է Պուշկինը «Пирь во время чумы» վերնազբով: \*\*). Ջոն Աբէրնէտին (1763—1831.) երևելի վերաբուժ էր և Լօնդոնի Բարդուղիմէան հիւանանդանոցի կառավարիչ:

մարել, որովհետև նոքա աւելի կերակրի պակասութիւնից, քան առատութիւնից են մեռնում: Նախ և առաջ ի հարկէ, կարևոր է, որ դուք ուտելու բան ունենաք, իսկ ապա այն, թէ ինչոր ուտում էք՝ կաղդուրիչ և սննդաբար լինի: Մանրամասն տեղեկութիւններ բժշկից հարցրէք. բայց կարծեմ ամենը խոստովանել են, որ ամենահասարակ կերակուրը, յաճախ և ամեալըսն է լինում: Իսկ զլսի ուղեղի և արեան համար, ինչպէս երկարատև փորձն էլ ցոյց է տուել, վարսակի հացից \*): և մէկ բուլիճոնից աւելի լաւ բան չը կայ:

Թէ և մարդս լաւ կերակրի պակասութիւն չ'ունենայ, այնուամենայնիւ շատ անգամ նա իւր կեանքը վտանգի մէջ է դնում կերակրի անկանոն գործածութեամբ: Այսպէս օրինակ, շատ մարդիկ անբաւական լինելով սովորական, իբր թէ դանդաղ ընթացող կեանքով, կամենում են շտապեցնել այդ ընթացքը. նոքա մինչև անգամ չին հասկանում թէ ի՞նչ է նշանակում մի գործ հանդարտութեամբ սկսել. և այդ պատճառաւ սաստիկ շտապով կուլ են տալիս իրենց ճաշը, միայն թէ որքան կարելի է շուտ աւարտեն: Այս վատ քաղաքագիտութիւն և վատ փիլիսոփայութիւն է: Ով որ շտապով է ուտում, նա կրկնակի փնաս է կրում. նա թէ ուտելու ախորժութիւնից է զրկվում և թէ մարտողութեան օգտից: Առողջութեան համար այսքան փնասակար սովորութեան ենթարկուած են սովորաբար գործի

\*) Շօտլանդիայում (Հեղինակի հայրենիքում) միծաւ մասամբ միայն վարսակէ բուսնում և գորանից հաց է շինվում: Բայց իդուբ Հեղինակը ճշնում է համոզել, թէ իւրեանց հացը ամենամեղրաբան է: Վարսակի հացը շատ ծանր, չոր, կարծր է, մանուսնոգ անախորժ կամ ունի: Ամենից լաւ հաց կամարվում է՝ ցորենի հացը, բայց ցորենը շատ սպիտակ չը պէտք է լինի:

Մոնթ. Կայ. Բարդի.

ատէր մարդիկ մեծ քաղաքներում և ռամկապետական ալեկոծ մաքերով յուզուած ամերիկացիք: Բայց այս փորձութիւնից շատ յաճախ ազատ չեն նա և ուսանողներն ու ուսումնականները: Նօանդուն ընթերցողները սովորութիւն ունին ոչ միայն իրենց նախաձաշէկը կամ ճաշը շուտ կուլ տալ, որպէս զի շուտով կարգալն սկսեն, բայց երբեմն և ուտելու ժամանակ կարգում են: Այդպիսով նոքա ստիպում են բնութեանը միանգամայն աշխատել երկու զանազան կենդրոններում՝ այնէ՛ պլսի և ստամոքսի մէջ, և սորանով ի հարկէ, փնասում են թէ մէկը և թէ միւսը: Թէյ խմելիս Լուցիանի կամ Արիստօֆանի կարգալը, գուցէ հաճելի և օգտակար լինի. բայց ճաշը աւելի ծանր բան է, որին պիտի ամբողջապէս անձնատուր լինիլ — totis in illis: Ամբողջ մարդը մի գործի համար մի միջոցին՝ այսպէս էր ասում կանցլէր Տէրլօն (Thurlow): Լաւ է, եթէ ճաշը ախորժելի խօսակցութեամբ համեմած է, սուելի լաւ, եթէ նորան թեթեւ երաժշտութիւն է կցորդում: Բայց երբէք ճաշը չը պէտք է ծանր մտքերով կամ խառնաշփոթ խնդիրներով խանգարուի: Այս դիպուածում անգլիական և գերմանական ուսանողների միասին ճաշելու սովորութիւնը շատ մեծ գերազանցութիւն ունի խեղճ շտապանդական ուսանողների հասարակ սեղանից, որոնք ստիպուած են առանձին սենեակներում միայնակ ճաշելու:

Կերակրի լաւ յատկութեան հետ միասին, անպատճառ պէտք է հոգալ, որ նա մի փոքր Բարձրաստի լինի: Բազմատեսակութիւնը իւր նորութիւններով ախորժակը կրկնապատկում է. մանուսնոգ որ նոյն ինքն բնութիւնը, իւր առատ և զեղեցիկ միջոցներով բացարձակ բողբոլում է միաձեւութեան դէմ: Վերջապէս և առողջ միտքը թելադրում է, որ ստամոքսը որ և է տեսակ կերակրի հըլ

ստրուկը չը դառնայ: Հանգամանքների փոփոխվելով, շատ անգամ ստիպուած ենք, որ զրկուինք մեր սիրած կերակրից, և այս պատճառաւ, որպէս զի մենք միշտ գոհ մընանք, հարկաւոր է որ օրինաւորութեան սովոր ճաշողը սահմանափակ է իւր սովորութիւնները, և իր զոյութեան սահմանները մինչև այն աստիճան սղէ, ուր նա դեռ կարող է կանոնաւորապէս սնուիլ իրեն ստացած բաժանուղ:

Ինչ որ խնդրան կը վերաբերի, ինչ աւել կ'ուզէ որ ճաշին մի բաժակ լաւ դարեջուր կամ զինի ունենալը միշտ անորոշելի է, և մի քանի հանգամանքներում այս խմիչքները կարող են օգտակար լինել և մարսողութեան համար մինչև անգամ անհրաժեշտ կարևոր: Բայց առողջակազմ երիտասարդներն իսկապէս այդպիսի զրգուիչ միջոցների հարկաւորութիւն չ'ունին, ուստի և չը պիտի գործածեն. և որքան աղքատ ուսանողը կարող է փող յետ դցել պինու և ծխախոտի պէս անպէտք ծախսերից խուսափելով այնքան լաւ է: Ատտուական ջուրը միշտ և հանապազ այն արժանաւորութիւնն ունի, որ նա դեռ ևս ոչոքի մեղք չի գործել տուել. և արգարացի կերպով կարելի է ասել, որ որքան էլ օգտակար չը չենէր օղիի ներգործութիւնը խոնաւ, ճահճոտ տեղերում և սառն լեռնոտ երկրներում, բայց և այնպէս նրա գործածութիւնը սովորութիւն դառնալով, երբէք ոչ մէկին ոչ ոյժ է տուել և ոչ գեղեցկութիւն: Այլ բոլորովին կը հրաժարուի օղի գործածելուց, նա փողոցում չի մեռնի և գրպանում միշտ աւելորդ կուպէկ կ'ունենայ թէ իր և թէ ընկերոջ սև օրուայ համար:

IV. Սրբազան պարտքեմ համարում զգուշացնել ուսանողներին փակած սենեակի և վար օգտախոն-նեան վնասակար ազդեցութիւնից: Կեղտոտ օդը արեան մաքրելուն ամենևին

չի կարող նպաստել, բայց կեղտոտ արիւնը ողջ մեքենան քայքայում է: Իժբաղտաբար անմաքուր օդի վնասակար ազդեցութիւնը անմիջապէս երևան չը գալով, թեթեւամիտ մարդոց առիթ է տալիս շարունակ փչացած օդը ներս շնչելու, որոնք չեն կարողանում նկատել, թէ իրենք թոյն են ներս շնչում: Այն ինչ ումը յայտնի չեն, որ միշտ այն դժբաղտութիւններն աւելի վտանգաւոր են, որոց մերձեւալը աւելի քիչ է նկատելի: Ապա ուրեմն, ուսանողը, որ մի փոքրիկ սենեակ ունի վարձած, ամէն անգամ տնից դուրս գալիս, պատուհանները պէտք է բաց թողնէ: Իսկ տաք եղանակին պատուհանը օր ու գիշեր կարող է բացած մնալ, եթէ միայն այնպէս չէ շինած սենեակը, որ թափանցիկ քամի է յառաջացնում մահճակալի դրած տեղը:

V. Հարկաւոր է քնի մասին խօսել: Կարծես թէ չէ: Այս դիպուածում պիտի ենթադրել, որ բնութիւնը ինքն իրան բաւականացնում է: Թող երիտասարդը քնի, երբ նրա քունը տանում է, և զարթնի, երբ աքաղաղի երգելը կամ առաւօտեան արևի ճառագայթները այլ ևս չեն թողնում նորան քնելու: Լաւ է միշտ բնութեանը հետևել, թողնելով նրան միշտ ազատ գործելու: Բայց, դժբաղտաբար, մարդիկ այնքան յաճախ խաբում և արհամարհում են նորան, որ երբեմն բնութեան վերայ մատնացոյց անելը զուր է անցնում: Իրտութիւններով պարագող երիտասարդները մանաւանդ շատ են մեղանչում քնի դէմ: Այն, կարելի է ասել որ նոցա բոլոր պարապմունքները մեղանչանք են հանգստութեան դէմ՝ և ամենախիստ զգուշացուցիչ միջոցներ են հարկաւոր մտածող մարդոց քնի վերաբերութեամբ ունեցած թիւր կարծիքները ջրելու: Իլիսի ուղեղի գրգռելը այնպէս հակառակում է քնին,

ինչպէս թունդ սուրճը: Այս պատճառաւ, գիտութիւններով պարապող երիտասարդը իր օրական աշխատանքի ժամերն այնպէս պէտք է կարգաւորէ, որ ուղեղի աւելի գրգռողական լարումը մինչև քնիլը չը շարունակէ: Սրուայ վերջին աշխատանքը համեմատաբար աւելի թեթեւ և յարմար պէտք է լինի, կամ աւելի անհետաքրքիր, տաղտկալի և քուն բերող: Բայց աւելի լաւ է քնելուց մի ժամ առաջ բաց օդի տակ ման գալ կամ գնկերոջ, և եթէ ընկեր չը կայ, տանտիրոջ հետ մի թեթեւ առարկայի մասին խօսել: Այսպիսով էլ տեղիք չի լինի կասկածելու, որ ինքն իրեն թողած բնութիւնը, առանց արհեստական միջոցների, իրեն կարևոր հանգստութեան չափը կը գտնի: Այս չափի իսկական մեծութեան մասին անկարելի է կանոններ գնել: Վեց ժամից պակաս և ութից աւելի քնելը բացառութիւն պիտի համարել: Ուսանողը, որը օրական ամենաքիչը 2 ժամ գործ է դնում զբօսանքի և ծից մինչև 9 ժամ սաստիկ մտաւոր աշխատանքի համար, ինքը հեշտութեամբ կը գտնէ քնի այն բնական չափը, որին կարօտում է, որպէս զի թմրութիւն և տկարութիւն չը զգայ, որոնք արհեստաբար շարունակելու արթնութեան հետևանքներն են:

Իսկ ինչ վերաբերում է վաղ զարթնելուն, որը շատ նշանաւոր մարդկանց կեանքի մէջ պակաս դեր չէ խաղում, ես շատ քիչ բան կարող եմ ասել դորա մասին, որովհետև բաղոյն չեմ ունեցել այս առաքինութեան մէջ վարժուելու: Սակայն ամենափոքր կասկած անգամ չը կայ, որ վաղ զարթնելու սովորութիւնը, եթէ բնական և հեշտ ճանապարհով է ձեռք բերվում, շատ օգտակար է առողջութեան համար և յայտնի հանգամանքներում, որոց մէջ օրինակի համար, երևելի բարօն Բունզենն էր գտն-

վում, \*) որը իր ամբողջ օրերը ստիպուած էր միշտ զանազան հոգսերումն ու աշխատանքներումն անցկացնել, ակնյայտն է որ առաւօտեան ժամերն աւելի նպատակաշարմար են ուսումնական հետազոտութեանց և բարեպաշտ մտածողութեանց համար:

VI. Լոպանուր և ջրի օգտակարութեան, որպէս առողջապահական միջոցների մասին, ես կարող եմ վստահութեամբ խօսել, որովհետև բազմիցս այցելել եմ զանազան նշանաւոր ջրաբուժական տներ և մանրամասն ուսումնասիրել այս տերապեւտիքական ճիւղի թէ տեսականութիւնը և թէ գործնականութիւնը: «Հիւրոպոպոպիս» անունը (ջրաբուժութիւն) շատ անճիշտ է արտայայտում այն գերազանց միջոցը, որին հիւանդը ենթարկվում է: Այս բժշկութիւնը աշխատում է Ֆիզիքական աշխատութեան, հանգստութեան, կանոնաւոր սննդեան, զուարճութեան, կենցաղավարութեան համեմատ ազդել ջրով, որը զանազան տեսակ է գործածվում, կաշուի բնական արտաթորութեան գործունէութիւնը գրգռելու նպատակաւ: Ամեն մարդ կը հասկանայ որ այն ազդեցութեւնները, որոնք մարմնի բոլոր գործողութիւնները կազդուրում են, այսպիսի համեմատութեամբ աւելի պէտք է նպաստեն առողջութեան: Երաւ է, այս բժշկութիւնը, որ յատուկ սորա համար պատրաստուած տներումն է կատարվում հմուտ բժիշկների առաջնորդութեամբ, բաւական թանգ է նստում: Բայց ի մտիթարութիւն աղքատ մարդոց առ հա-

\*) Կարլ Իոսեփ Բունզենը (1791—1860) երևելի աստուածաբան և քաղաքագէտ էր, Պրուսաց Փրիդրիխ—Վիլհելմ IV թագաւորի բարեկամ: Երկար ժամանակ Լոնդոնումն էր ապրում գեսպանի պաշտօնով:

Ծանօթ. Կեղևանի.

սարակ և ուսանողների մասնաւորապէս, կարող եմ ասել, որ այս եղանակի բժշկութեան մի քանի մասերը անվտանգ և առանց որևէ ծանր ծախսերի կարող են իւրաքանչիւր մարդու սովորական կեանքում մուտք գործել: Որտեղ ջուր կայ, այնտեղ դժուար չէ կանոնաւոր լողալու շինել՝ որը միշտ իր կազդուրիչ ազդեցութիւնն ունի ոչ շատ թոյլ կազմուածք ունեցող մարդոց վերայ: Իսկ եթէ ջուր ձարելը դժուար է, մի և նոյն օգտակարութեամբ կարելի է գործածել թացցարած և լաւ քամած սաւանդ: Մարմինը ամբողջապէս պիտի փաթաթուի սաւանով և լաւ շփուի. ապա թաց սաւանը ցամաքով փոխարինուի և լաւ շփուի, մինչև որ ողջ կաշին լաւ չը կարմրի: Այս է ամենալաւ նախազգուշացուցիչ միջոց կաշու գործունէութեան խանգարման դէմ, որ այնպէս սովորական է մեր փոփոխական կլիմայում: Սորա համար լաւ կը լինի գործածել հասարակ, հաստ քաթանից հիւսած սաւան: Հասկանալի է որ թաց սաւանի և շփելու քիչ թէ շատ բարերար ներգործութիւնը պայմանաւորուի է իւրաքանչիւր կազմուածքի դիմանալու ընդունակութեամբ: Բայց և այնպէս առողջ կազմուածք ունեցող և աշխատանքին սովորած երիտասարդները զուրկ չեն լինիլ յիշեալ ընդունակութիւնից: Ի հարկէ, մեղմադձու և քիչքոյշ կազմուածք ունեցող անձինք իրենց մարմինը սառը ջրի ազդեցութեանը չը պիտի ենթարկեն, մինչև որ բոլոր հարկաւոր նախազգուշութիւնները չը գործածեն և կանխապէս չը խորհրդակցեն այս գործին աւելի հմուտ և տեղեակ անձանց հետ:

VII. Այն, ինչ որ զեռ առողջութեան մասին ասելու ունիմ, բոլորովին ուրիշ ձիւղին է պատկանում: Ոչ ոք իր առողջութիւնը միայն դէպի իր փորը ուշադիր

լինելով չի պահպանի: Եթէ մարմինը, որ մի զարմանալի բարդ մեքենայ է ներկայացնում, հոգւոյ վերայ պահպանողական ազդեցութիւն ունի, հոգին, որ այս մեքենայի յառաջ շարժող ոյժն է, հաշուետեսութեան ու լեկավարող ձեռքի պակասութիւնից և չափազանց սաստիկ լարուած լինելուց, հեշտութեամբ կարող է տրաքացնել ողջ մեքենան և նորա բոլոր անիւներն ու միւս բոլոր պատկանելիքը կտորատել: Մարմնի ոչ մէկ գործողութիւնը չի կարող երկար ժամանակ կատարուել, մինչև որ լաւ կրթուած կամքը նոցա վերայ չը հսկէ: Մարդու բոլոր բուն Ֆիզիքական ոյժերը Պլատոնի «արքայապատիւ կամքի» բարձրագոյն ազդեցութիւնից ազատուելով, մեծ հակումն ունին անկարգ կերպով ցիրցան լինելու և քայքայվելու: Լաւ լարուած հոգեկան շարժողութեանց երաժշտութիւնը հազորդում է իր նուազի ներդաշնակութիւնը նաև և Ֆիզիքական մեքենայի լարերին. իսկ կոյր կամայականութեան բուռն յուզմունքներից զերծ մնալով՝ սիրան այնպէս սաստիկ և անկանոն կերպով չի բաբախում, որով նորա կենսական ոյժը ժամ առաջ պիտի սպառէր: Այս պատճառաւ, եթէ ուզում էք առողջ լինել, — Բարի էջէք. Ուղում էք բարի լինել — Իմաստուն էջէք. իսկ կամիք իմաստուն լինել — էջէք Բարեպաշտ և երկնաշատ. Աստուծոյ երկնաշատէջէք, որովհետև «Սկիզբն իմաստութեան երկիրը Տեառն»: Իսկ թէ այս խօսքերով ի՞նչ պիտի հասկանալ յաջորդ երեսներում կը պարզուի:

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Մեծ է, աւելի մեծ, քան մենք կարծում ենք  
բարե թէ չար լինելու կռիվը»:

ՊԼԱՏՕՆ

I. Մենք այժմ ինքնակրթութեան ամենանշանաւոր մասին հասանք: Մարդու բարոյական բնութիւնը տալիս է նորան և յառաջ շարժող և կանոնաւորող ոյժ. և այս ոյժն է իսկապէս ողջ մեքենայի կառավարողը, տէրը և օրինաւոր իշխանը: Այս պատճառաւ բարոյական արժանաւորութիւնն իսկապէս մարդկային վեհութեան հարկաւոր սկիզբն է համարվում, ինչ ձեռով որ այդ վեհութիւնը չարտայայտուէր, մի և նոյն է: Մարդս կարող է գեղեցիկ լինիլ, խելօք, ուժեղ, վայելչահասակ. բայց և այնպէս եթէ նրանում բարութիւն չը կայ, նա անպիտան է. և մինչև անգամ այն բարձրութիւնը, որին ըստ երևութի նա իր ամենափայլուն քաջութիւններով հասնում է, — միայն փայլուն անպիտանութիւն է: Նապօլէօն I-ը իր կայծակնահար յարձակումներով մեր արևմտեան աշխարհի վերայ, գերբնական ոյժի ամենանշանաւոր օրինակն էր մարդկային պատկերի մէջ, առանց որ և է ճշմարիտ մարդկային մեծութեան: Չի կարելի հաստատել, որ նա ի բնէ,

ինչպէս ասում են, վատ մարդ էր, բայց պատերազմական աշխարհակալութեանց և քաղաքական իշխանութեան գաղափարներին լիովին յանձնատուր լինելով, նա առիթ չ'ունէր առաքինութեանց մէջ վարժուելու և այն բարձր արժանաւորութեան որ և է աստիճանին հասնելու, որը իր սկիզբը անձնուիրութիւնից է առնում: Եւ այդպէս, ապրեցաւ և մեռաւ նա, բարոյական տեսակէտից դատելով, իբրև շատ թշուառ և փոքրիկ մարդ: Բայց ոչ միայն աշխարհակալներին և քաղաքական գործողներին չի յաջողում իսկական մեծութեանը հասնելու բարոյական հմբի պակասութեան պատճառաւ: «Հազիւ թէ, ասում է Հարտլին, այնպիսի չափազանց անպարծութեան, ինքնահաւանութեան, մեծամտութեան, խէթի ու նախանձի օրինակը ուրիշ տեղ տեսնուի, ինչպէս որ տեսնում ենք լեզուաբանութեան, մաթեմատիքայի, բնական գիտութեանց և մինչև անգամ աստուածաբանութեան ականաւոր պրօֆէսորների մէջ» \*) Եւ սորանում ոչինչ զարմանալու բան չը կայ: Բարոյական բնութիւնը, ինչպէս նա և ամեն մի ուրիշը, գերազանցութեան վերին աստիճանին հասնելու համար առանձին խնամարարութեան է պահանջում. բայց որովհետև մեր կրքերը, հողմերի նման, շատ դժուարութեամբ են զապվում, իսկ մեր արարմունքները մեր կրքերից են յառաջանում: ապա ուրեմն սորանից երևում է, որ Բարոյական գերազանցութեան բնաւ հեշտութեամբ չի ձեռք բերվում. իսկ այս գերազանցութեան ամենաբարձրագոյն աստիճաններին հասնելը ամենադժուար և մի և նոյն ժա-

\*) Hartley: «Observations ou the man» (Դիտողութիւններ մարդու վերայ.) London 1849, vol II. p. 255:

մանակ կատարեալ զարգացած մարդկայնութեան ամենադ-  
նիւ գործը պիտի համարուի: Բայրօնը հեշտութեամբ  
կարող էր մեծ բանաստեղծ դառնալ: նրան մնում էր  
միայն իրեն բնութեան հետեւիլ: նա արծիւ էր, և չէր  
կարող չը թռչիլ: Բայց սանձահարել իր կրքոտ բնաւո-  
րութիւնը, զսպել իր գրգռած վրդովմունքը և այնպէս  
ապրելու սովորել, ինչպէս վայելէ բանական և լաւ մար-  
դուն, դժուար գործ էր, որին նա կարծեմ, երբէք հաս-  
տատապէս ձեռք չէր զարկել: Այս պատճառաւ նորա  
կեանքը, չը նայելով նորա հանձարեղութեան և մեծու-  
թեան առանձին նշաններին, առ հասարակ սաստիկ ան-  
յաջողութիւն ունեցաւ և կարող է իբրև ամենածանր  
նախազգուշութիւն համարուիլ այն մարդոց համար,—  
որոնք պատրաստ են օտարի օրինակով խրատուելու: Միւս  
փայլուն փարոսը ժայռի վերայ,—որին զկաշելով խորտակ-  
վում էին մեծ տաղանդները անկեղծութեան մէջ չը զար-  
գացած լինելու պատճառաւ — Վալտէր Սալաջ Լանգօրն  
էր, որը այնպիսի գրչի տէր էր, որպիսին գուցէ չը լինի  
Անգլիայում: բայց մի և նոյն ժամանակ այնչափ բռնակալ  
ինքնակամ, և անհամեմատ կամակոր մարդ, որ չը նայե-  
լով իրեն գեղեցիկ ոճին, և գանազան շարադրութեանց  
մէջ յայտնած գանազան նշանաւոր մտքերին, ողջ կեանքը  
համարեալ խելագարութեան մէջ էր անցուցանում: Այս  
պատճառաւ, իւրաքանչիւր մարդ, որը չի ցանկանում իր  
կեանքի ընթացքում անյաջողութեանց ենթարկվելու, թող  
պինդ դրօշմէ իր սրտում Ս. Գրքի մեծ ճշմարտութիւնը  
թէ. «Մի Բոն Տեսն Հարկուոր է»: Ոչ փող, ոչ կարողութիւն,  
ոչ խելք, ոչ փառք, ոչ ազատութիւն հարկաւոր չէ. մինչև  
անգամ առողջութիւնը միակը չէ ինչ հարկաւոր էր. հար-  
կաւոր է միայն Բնութեան: Միայն կատարեալ զարգա-

ցած կամքը կարող է մեղ ճշմարտապէս ազատել. և եթէ  
այս մտքով ազատուած չենք լինի, յաւիտենական տան-  
ջանքի պիտի դատապարտուինք: Այս կողմից մարդկային  
կեանքի նպատակը չ'ունի այնպիսի մի սահման, ուր հաս-  
նելուն պէս հանգստանայինք և ասէինք. «եթէ ես այսու-  
հետեւ աւելի լաւը չեմ լինելու, գոնէ աւելի չեմ վատ-  
թարանայ»: Եթէ մարդկային բնութեան անշահասիրու-  
թիւնը չը զարգացած մնայ, հետզհետէ պէտք է նուազի  
և աւելի ու աւելի աղքատ կեանք, աւելի հրէշաւոր  
երեւոյթներ առաջ բերէ, ինչպէս և ամենայն կենսական  
գործողութիւն, որ դադարում է շարժուիլ և կանգնում է:  
Ապա ուրեմն գօտեարենք մեր մէջքը և ապացուցանենք, որ  
մենք տղամարդ ենք. և որովհետև մեղ վիճակուած է  
միայն մէկ անգամ օգուտ քաղել կեանքից—Աստուծոյ  
այս անգին պարզելից, սպա ուրեմն որժանոր կեանք  
վարենք:

II. Նախ քան մանրամասնութեանց վրայ խօսիլը,  
օգտակար ենք համարում համառօտապէս ցոյց տալ բա-  
լոյականութեան և աստուածապաշտութեան մէջ եղած  
կապը, որը շատ յաճախ մութն է հասկացվում:

Բրիտանական բարոյախօսների մի գպրութիւն, Երե-  
միայի Բէնտամից սկսած, աշխատում էր բարոյականութեան  
մի այնպիսի ծրագիր որոշել, որը ամենևին կապ չ'ունենար  
կրօնի հետ. անշուշտ այս մի անբնական խտրութիւն է,  
որ և այս կարծիքը պաշտպանող մարդոց սահմանափակ  
և տհաս խելքի ապացոյց է: Կասկած չը կայ, որ մի փի-  
լիսոփայութեան պրօֆէսոր, հին Էպիկուրի նման, կարող  
է, ինչպէս որ ասում են, շատ բարի մարդ լինել և շատ  
անարատ կեանք վարել թէ և այն հաստատ համոզմունքն  
ունենայ, թէ այս հոյակապ աշխարհի սքանչելի մութեմա-

տիրական կազմութիւնը լոկ միայն կոյր ատօմների (տարրերի) պատահական միաւորութեանց արդիւնք է: Եւ ես հաւատում եմ, որ մեր ժամանակ շատ քիչ կը գտնուին այնպիսի արժանաւոր և իսկապէս առաքինի մարդիկ, քան նոքա, որոց բերանից միայն և եթ լսվում է. «բնութեան օրէնքներ, անխուսափելի հետևանք, բնական ընտրութիւն, արտաքին հանգամանքների յաջող միաւորութեան բարեպատեհ գիպուածներ» և շատ սոյն տեսակ նախադասութիւններ, որոնք ըստ երևութիւն աշխարհքի ստեղծագործութիւնը հոգույ անկախ են բացատրում: Բայց առողջ մարդկային զգացման համար բարոյականութեան այսպիսի վարդապետութիւնը բողոքովին անհասկանալի կամ աւելի լաւ ասել, անբնական բան է: Այս մի և նոյն է, եթէ մի բարեմիտ քաղաքացի, որը առանց յետաձգելու և յօժար կամօք հատուցանում է տերութեան հարկը, պատրաստ է հարկաւոր ժամանակ զօրքի մէջ ծառայել և քաջութեամբ հայրենիքը պաշտպանել, և այս բոլորից յետոյ թագաւորին հանդեպելիս՝ հրժարուէր գլխարկը վերցնել և ողջունել: Եթէ այսպիսի տարօրինակ վարմունքը չարամտութեան նշան չէ, այնու ամենայնիւ ամեն օրինաւոր մարդ իրաւունք ունի այդպիսի մարդու վերայ իբրև մի հրէշի կամ տգէտի վերայ նայելու, որ հասկացողութիւն անգամ չ'ունի քաղաքավարութեան ամենահասարակ կանոնների մասին: Այդպիսի հրէշներ են և այն ուսումնականները, որոնք աստուածային սկիզբը չեն ընդունում: սոքա մեծ համարմունք ունին իրենց չնչին գիտութեան վերայ, բայց իրօք միայն այն են տեսնում, ինչ որ իրենց սահմանափակ խելքով կարող են շօշափել, զննել, չափել, որոշել և լուծել: Սակայն կայ մի ուրիշը, որը ամեն շօշափելի բաներից բարձր է կանգնած,

բարձր քան ուր որ կարող են հասնել ամեն տեսակ խոշորացոյցներն ու հետաքրքիր քննութիւնները, և այդ բանը կարճ ասենք՝ կեանք է. իսկ կեանքը ոչ այլ ինչէ, եթէ ոչ ներգործող Բանական-Ինքն, իսկ ներգործող բանականութիւնը Աստուծոյ միայն երկրորդ անունն է: Այս բարձրագոյն էութիւնը չ'ընդունելը նոյն է, թէ ցանկանալ շոքեշարժ մեքենան Աեմն Ատտի, նորա հնարողի խելքից անկախ ըմբռնել. այս նշանակում է մեծ քաղաքի համար ջրանցքները մի յատակագիծ պատրաստել, առանց ցոյց տալու այն աղբիւրը, որտեղից ջուր պիտի հանուի: այս նշանակում է բարձի թողի առնել այն սկզբունքը, որով բոլոր մնացած իրողութիւնները պայմանաւորվում են. մի խօսքով՝ այս նշանակում է մարմինը առանց գլխի թողնել: Այս պատճառաւ երիտասարդը ամենևին չը պիտի բաւականանայ ներկայ ժամանակի այն սառը բարոյական սիստեմներից մէկով կամ միւսով, որոնք վայր ի վերոյ ներածութիւնից (ինդուկցիայից) կցկտուր առաքինութիւններ են կարկատում: Բարձրագոյն բարոյականութեան աղբիւրը ներքին զգացողութիւնն է, իսկ այս աղբիւրի սնունդ տուողը՝ ԱՍՏՈՒԱԾ:

III. Այժմ քննենք մի առ մի այն առաքինութիւններից մի քանիսը, որոնց երիտասարդները պիտի ձգտին իւրացնելու, եթէ կամենում են արժանապէս օգտուիլ կեանքով՝ աստուածային այդ անգին պարզեւս: Իւրաքանչիւր ժամանակ և աշխարհումս իւրաքանչիւր շրջան իրենց հաստատուն պահանջներն են առաջարկում և ամենայամար առիթ են ներկայացնում կեանքի մեծ կովում փառաւոր յաղթութիւն անելու, կամ ամօթալի պարտութիւն: Գարունքը առաջին ծաղիկով է սկսվում, և եթէ մի քանի առաքինութիւններ խոր արմատներ չեն ձգել

երիտասարդութեան ժամանակ, հազիւ թէ առատ պտուղ տան ծերութեան հասակում:

IV. Առաջին առաքինութիւնը՝ Հնադասարդութիւնն է: Ամենանոր ժամանակներում խիստ շատ են խօսում ազատութեան մասին և կասկած չը կայ որ ազատութիւնը լաւ բան է և ամենայն ողջամիտ մարդիկ շատ յարգում են նորան: Բայց հարկաւոր է որոշ կերպով իմանալ, թէ ի՞նչ է ազատութիւն: Այս միայն նշանակում է, որ մարդս հոգատար բնութիւնից տուած ոյժերն ու ընդունակութիւնները գործադրելիս, չը պէտք է որ և է պայմանական, արհեստական և տանջողական արգելքների հանդիպի: Այդպիսի ազատութիւնը ի հարկէ, բարիք է. բայց դրանով շատ հեռու չես գնալ: Նա միայն կեանքի մրցութեան կարևոր կեան է որոշում: Նա մարդուն միայն տեղն է ցոյց տալիս, որտեղից որ մրցումը պէտք է սկսուի, բայց ամենեւին չի ծանօթացնում նորան ո՞չ այն պաշտօնը, որով որ նա այդ մրցման մէջ պէտք է մտնէ, և ո՞չ այդ պաշտօնի էութիւնը: Բացի մրցման սկզբնական կէտից՝ ուր ամենայն մարդ ազատէ, կեանքի միւս բոլոր գործունէութիւնները ամենայն տեսակ սահմանափակութեանց շղթայ են կազմում, որ և այդ պատճառաւ բնաւ ազատ չեն կարող համարուիլ: Ար և է կարգի հաստատութիւնը արդէն սահմանափակութիւն է. կարգը բանական գոյութեան մի ուրիշ անունն է: Բայց որովհետեւ կարգերը՝ որոց պիտի ենթարկուին մարդիկ, իրանք ինքնակամ չեն սահմանուել, այլ ուրիշները հասարակաց ընդհանուր զգտի համար, ապա ուրեմն սորանից հետեւում է, որ իւրաքանչիւր մարդ, ցանկանալով որ և է ընկերական կարգի օգտաւէտ անդամը լինել, նախ և առաջ պէտք է հնադասարդ սովոր է: Օրէնսդրութիւնը, զօրքը, եկեղեցին, արքունական ծառայու-

թիւնը, կեանքի ամեն մի ասպարէզ և գործունէութեան ամեն մի ճիւղ միայն յիշեալ սկզբունքի լուսաւոր ջահերն են կազմում: Անհատին, ի հարկէ, ազատութիւն է տրվում իրեն անհատական շրջանում: բոլորովին ազատութիւն չը տալը՝ կը նշանակէր կենդանի արձան դարձնել նորան և նրա մարդկայնութիւնը ոչնչացնել: Բայց եթէ նա հասարակութեան մէջ մի որ և է դիրք ունի բռնած, չի կարող ազատ լինել այն սահմաններից, որոնք միանալով մի որոշ և անբաժան ամբողջութիւն են կազմում: Իսկ հասարակաց սանդղքի ամենաբարձր աստիճանի վերայ կանգնած ժամանակն էլ, նա այնուամենայնիւ՝ Հռոմայ պապի պէս՝ Servus servorum—ստրուկ է: Գլխի ուղեղը մեր մարմնից օրէնքներին պակաս չը պիտի հնազանդուի, քան ոտը: Օրինաւոր հնազանդութիւնը հասարակութեան իւրաքանչիւր անդամի միանգամայն և պարտքն է և օգուտը: Սուրբ առաքելայն Պողոս՝ իրեն յատուկ ուժով, եռանդով և հաստատամտութեամբ, դերուզանց կերպով մշակեց այս խնդիրը, և եթէ երբ և իցէ բարկանաք և ձեզ վերայ դրած պարտականութեամբ վերդովուիք, ուշադրութեամբ կարդացէք Կորնթացւոց գրած առաջին թղթի 12 գլուխ 14—31 համարը: Ամենայն պատահականութիւն կամ ինքնակամ ներգործութիւն զբան ճեղքի նման է, որը հետզհետէ ընդլայնելով, առիթ կը տայ խաօսին ներս մտնելու: Հովմայեցի պատմաբան Լիվիոսը Անիբալի բնաւորութեան իբր նշանաւոր յատկութիւն, առաջ է բերում այն հանգամանքը, որ նա կարողանում էր նոյնքան լաւ հնազանդուիլ, որքան և լաւ հրամայել: Հնազանդուիլը և հրամայելը անկասկած հակառակ բաներ են, բայց և այնպէս առաջինը իբր ամենալաւ նախապատրաստութիւն է ծառայում երկրորդին. որովհետեւ ով որ միայն հրամայել է

սովորել, նա չի կարող այն սահմանները գիտենալ, որոնցով որ իր օգտի համար շրջապատած է ամենայն հեղինակութիւն: Այս պատճառաւ թող երիտասարդները, հին հռոմայեցւոց պէս առաքինի սովորութիւն շինեն հեղինակութեան հնազանդիլ. այդ առաքինութեամբ է հաստատ մի ընկերութիւն և դա է աւելի վայել անչափահաս հասակին: Թող բարձրագոյն հեղինակութիւնից հրամայուած մի բան միայն նորա համար կատարուի, որ հրամայած է. և կատարուի ամենայն ճշտութեամբ: Երիտասարդի յարգը իր աւագների աչքում ոչ մի յատկութիւն այնպէս չի մեծացնում, որքան նորա վերայ դրած պարտականութիւնների լաւ, ճիշտ կատարելը: Եւ զարմանալի չէ: Այն ճշտութիւնից, որ իւրաքանչիւր առանձին գործող կատարում է իր մասնաւոր պաշտօնը՝ կատարած է ողջ մեքենայի յարմար և դիւրին ընթացքը: Եթէ հասարակական կեանքը բարդ խնդիրներ ունի լուծելու, այնտեղ անհնազանդութեան պակասութիւնը չի վարձատրուի մինչև անգամ ամենամեծ հանձարով կամ տաղանդով: Եթէ ժամերը սխալ են ընթանում, օրուայ ժամանակը ոչ դժիշտ չը գիտէ. և եթէ ձեզ յանձնած խնդիրը ուրիշ մարդու աշխատանքի շղթայի հարկաւոր օղակն է կազմում, դուք նորա համար նոյնն էք, ինչոր ժամերը օրուայ համար և նա պէտք է ձեզ վերայ յուսայ: Ամենամեծ գովասանքը՝ որը հասարակութեան որ և է անդամին կարելի է տալ՝ հետեւեալ խօսքերն են: Ահա՛ Տարբ, որը հարարում է միշտ այն, ինչ նրանից պահանջում են, եւ ներհայանում միշտ այն ժամին, երբ նրան պատում են:

V. Հետեւեալ մեծ առաքինութիւնը, որով երիտասարդը պիտի վարժուի, Արդարութիւնն է: Պլատոնի նման ես համոզուած եմ, որ սարկիստը ի բնէ ատելի է թէ

աստուածն երին և թէ մարդոց. և մանաւանդ որ երիտասարդները ի բնէ արգարասէր են: Բայց երկիւղն ու փառասիրութիւնը, և նոյնպէս տարբեր ազդեցութիւններն ու անձնական շահերը կարող են մինչև այն աստիճան խեղտել և ճնշել այս բնազդումը, որ հասունացած հասակին մարդս կատարեալ անպիտան դառնայ: Զօն Ստիւարտ Միլլը, իր քաղաքական ճառերից մինի մէջ, Անգլիայի աշխատող դասին դառնալով. ասաց որ նոքա մեծ մասամբ ստախօսներ են. բայց և այնպէս աւելացրեց, որ նոքա միակ աշխատող դասն են Եւրոպայում, որ ի ներքուստ խղճահարկում են իրենց գործած ցածութիւններով: Երիտասարդը՝ կեանքը մանելուց առաջ, հաստատ պիտի սպաւորէ իր հոգում այն միտքը՝ թէ ինքը խիստ իրականութեանց աշխարհումն է ապրում, ուր խաբուսիկ արտաքինը երկար ժամանակ չի կարող ճշմարտութեան տեղը բռնել: Հասարակութեան անդամ դառնալով՝ նա ամենայն կերպ պիտի աշխատէ աւելի լաւ լինել, քան իրեն թւում է. — և երբէք աւելի լաւ չ'երևալ, քան ինչ որ է իսկապէս: (Որովհետեւ ոչ թէ լաւ երևալ, այլ լաւ լինել է ուզում նա): Ով ջանք է անում որ և է գործում միայն իւր արտաքին փայլով շլացնել, որ ի ներքուստ համապատասխան կերպարանք չ'ունի, նա խաբում է, ստում է, որը գուցէ առ ժամանակ ձեռնտու լինի նորան, սակայն արժաթագօծ պղնձի պէս, ժամանակով կը ճանչցուի: Սուտ արծաթը՝ զուտ արծաթի պէս չի դիմանալ մաշակելուն, այս ճշմարիտ է: Այդ տեսակ հասարակական ստութիւններ անելու գործի մարդոց դրդում է գլխաւորապէս շահասիրութիւնը. իսկ երիտասարդներին՝ ծուլութիւնը, փառասիրութիւնը կամ երկչոտութիւնը. այս պատճառաւ երիտասարդը մանաւանդ այս երեք ախտերից շատ պէտք

է զգուշանայ: Ծոյլ մարդիկ երբէք պատրաստ չ'ունին այն, ինչ նրանցից պահանջում են, և այդ պատճառաւ իրենցից պահանջածը մի ուրիշ կեղծ բանով են փոխարինում, այն աշակերտի նման, որից պահանջում են յոյն կամ լատին հեղինակից մի գլուխ թարգմանելու, իսկ նա երեսի միւս կողմում գրած պատրաստի թարգմանութիւնն է կարդում: Արդեօք, այս ստութիւն չէ՞: Ուսուցիչն ուզում է իմանալ թէ ի՞նչ կայ ձեր գլխումը, իսկ դուք առաջարկում էք նորան, ինչ որ թղթի վերայ գրած ունիք և որը ամենեւին ձեր մտածողութեան արգասիքը չէ: Եւրաքանչիւր թոյլ թեթեւ և վայր իվերոյ աշխատանք իսկապէս սորոսն է, որից մարդս պիտի ամաչէր: Դէպի ստութիւն դրող միւս պատճառը՝ փառասիրութիւնն է: Ուրիշներից լաւ երեւուլու ցանկութիւն ունենալով՝ անփորձ և անտեղեակ երիտասարդը շատ անգամ իրեն այնպէս է ցոյց տալիս, իբր թէ շատ գիտութեանց տեղեակ է, որը իսկապէս չ'ունի. և այսպիսով հեշտութեամբ ընտելանում է ամեն բանի վերայ բարձրից դատել, որպէս զե իւր անձնաւորութեան վերայ մեծ գաղափար կազմել տայ: Այն ինչ երիտասարդը փոքրուց պիտի սովորի արդարութեամբ խոստովանելու իր չը գիտենալը. այս բանը կեանքի մէջ աւելի շատ օգուտ է նորան: Իսկ արհեստական ձևերը, որոնցով նա աշխատում է իւր տգիտութիւնը ծածկել՝ հեշտութեամբ կարող են սովորութիւն դառնալ և ի վերջոյ ճշմարիտ այնպէս կը ծածկուի այդ գիտութիւնը, որ տգէտը ինքը էլ չի նկատի, թէ տգէտ է: Այդպիսով նա ողջ իր կեանքում խաբուսիկ արտաքին ձևերով կը բաւականանայ, որին ոչինչ իրական բովանդակութիւն չէ համապատասխանում: Բայց երիտասարդի համար սաստիկ փորձանաց պատճառ կարող է դառնալ աւելի շատ վստահութեան պակասութիւնը,

քան թէ փառասիրութիւնը: Զի կարելի ասել, որ ինքնահաւանութիւնը, որ շատ բնական է երիտասարդութեան ժամանակ, նպաստող յարմար միջոցներ գտնելը զորգանալու համար. մեր հասարակութիւնը կարծես միշտ հակառակ է, որ իր անդամներից մէկն ու մէկը որ և է կերպով անպարկեշտ երևայ: Համեստութիւնը և մի փոքր ամօթխածութիւնը, ի հարկէ, լաւ յատկութիւններ են. բայց ով որ մտնելով կեանքի ասպարէզը, վախենում է ասել այն, ինչ որ մտածում է նա բանն այնտեղ կը հասցնէ, որ կը վախենայ մտածել և այն, ինչ որ ցանկանում է: Կարելի է ասել, որ բարոյական անվեհերութիւնը ամենափառաւոր, բայց և այնպէս, անկասկած, շատ հազուապիտ առաքինութիւն է: Շատ անգամ դորա դէմ գործ են դնում իբրև զէնք հասարակութեան ամենասուբբ աւանդութիւններն ու հաստատութիւնները, և մինչև անգամ մարդկային վստահութիւնն ու բնական զգացմունքներից մի քանիսը. այդպիսի դիպուածներում ճշմարտութիւնը վստահաբար յայտնելու համար այնպիսի հաստատամտութիւն և շնորհք է հարկաւոր, որ շատ քիչ մարդոց յատուկ է: Ի հարկէ, կարիք չը կայ, միշտ և ամեն տեղ ձեր գիտեցած ողջ ճշմարտութիւնն յայտնելու. սրտի համար շատ ծանր է իմանալ այնպիսի ճշմարտութիւն, որը հասարակութեան յայտնի շահերին, հաստատութեանց և կրքերին հակառակ է. և ամենեւին չը պէտք է ձգտիլ այդպէս սիրտն աւելի խռովել նորահնար առիթներով, թէ և երբեմն նոքա ինքեանք հարկաւ և անխուսափելի կերպով կը ծնունեն ձեր առաջ: Ահա այդպիսի խռոված սրտի համար է ասած Ս. Գրքի այս խորիմաստ խօսքը. «Նշերուք խորագէտք՝ իբրև զօձս, և միամիտք՝ իբրև զաղանիս»: Այնու ամենայնիւ այնպիսի դիտուածներ էլ պատահում են,

երբ մարդս պարտաւոր է բացարձակ ասել ճշմարտութիւնը, չը նայելով որ մինչև անգամ ստիպուած լինի որ և է հեղինակութեան պատուին դիպչելու: Ով այսպիսի դիպուածում չի վստահանալ ասպարէզ դուրս գալ նա անպիտան ու երկչոտ է. և երբէք չի կարող արդարանալ նորանով, թէ նա իննը հարիւր իննսուն և իննը իր նման փոքրոգի հետևողներ ունի:

VI. Երիտասարդներին աւելի լաւ խորհուրդ չեմ կարող տալ, քան այն՝ որ նոքա էրէէ՛ + պարտաւոր չը հասն: Այս այն բացառական կանոններից մինն է, որոնք կամքին չեն տալիս մղիչ ոյժ, սակայն եթէ բացառութիւններն ըստ երևութի մեզ չեն կարող փորձանքից սղատել, բայց և այնպէս շատ անգամ նոքա նպատում են մերձեցնելու բացութեան ոգուն: Ի հարկէ, կարիք չը կայ, որ մարդ իր գործունէութիւնը նեղ կանոնների սահմանների մէջ ձուլէ. այսպիսի ձևապաշտական իմաստակութիւնը նեղ մտքերի ծնունդ է, որ աւելի ևս կարող է յորդորել նեղ մտածողութեան: Բայց և այնպէս շատ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ երիտասարդը ըստ կարելոյն վաղօրօք սովորի ժամանակը խնայողութեամբ գործածելու. իսկ այս կարելի է՝ եթէ նա իր պարապմանց մէջ կարգ ու կանոն մտցնէ: Այն երիտասարդը, որ որոշեալ ժամանակը կանոնաւոր կերպով նուիրում է իւր աշխատանքին, ճշմարիտ շաւղից շատ չի շեղուի: Թէ ի՞նչքան մեծ պիտի լինի այս ժամանակը, իհարկէ, հանգամանքներից է կախուած. բայց այդ միջոցին մի որոշեալ բան պիտի կատարուի: Օրական մի ժամ պարբերապէս ամենայն օր նուիրելով միշտ մի և նոյն գործին, տարուայ վերջը՝ ցանքս արածի պէս՝ շատ առատ հունձ կը տայ: Իսկ անկարգ պարապմունքները, և աննպատակ ու անխորհուրդ մէկ աշ-

խատանքից միւսին թուչկոտելը մտաւոր արդիւնքի նրկատմամբ՝ շատ քիչ մասով առաւելութիւն ունի լիակատար անգործութիւնից: Պարապ մարդն այն տանտիրոջ նման է, որը տան դռները բաց է թողնում ամենայն գողերի համար: Նստ չարիքներից այն մարդն է ազատ՝ որը կարող է ասել, թէ ժամանակ չ'ունի դատարկ բաների համար. աննպատակ բաւականութիւններին յանձնատուր լինելու ակորժակ չ'ունի և այնպիսի գրգռողական միջոցների հարկաւորութիւն չ'ունի, որոնք շատ չնչին նպատակի են ծառայում: Թէ գործունէութեան բազմազանութիւնը նորա ամենամեծ բաւականութիւնն է. և եթէ որ և է աշխատանք աւարտել է, նա գիտէ այդ ժամանակ անգործութիւնն էլ աննպատակ չ'անցկացնել, այլ ակորժելի հանգստութեան մէջ պատրաստուիլ և կազդուրուիլ նոր տեսակ աշխատանքի համար: Ծուլութիւնից ազատվելու ամենալաւ միջոցը, կեանքի վերայ ծանր հայեացք ունենալն է: Ինչ որ չ'ասեն մարդիկ աշխարհիս մասին, բայց նա երբէք խեղկատակութեանց ասպարէզ լինելու չէ նշանակուած: Ուր որ ամենքը պէտք է աշխատեն, բայց պարապ են կենում՝ այնտեղ կորուստը անխուսափելի է: «ԿԵԱՆՔԸ ԿԱՐՃ Է, ԱՐՈՒԵՍՏԸ ԵՐԿԱՐԱՏԵԻ, ԴԻՊՈՒԱԾՆ ԱՐԱԳԱԹՈՒԻՉ, ՓՈՐՁՆ ԱՆՅՈՒՍԱԼԻ, ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆԸ ԴԹՈՒԱՐ»:

Սոքա՛ իմաստուն Հիպոկրատէսի բժշկական խրատների առաջին խօսքերն են, որոնք իբրև նախազգուշութիւն կպցրած էին բարերար բժշկական գիտութեան դրան Ճակատին 500 տարուց աւելի Քրիստոսի ծննդից առաջ. և այժմ էլ ամենալաւ նշանաբանն են՝ որին մարդս կարող է հետևիլ իւր ամենայն տեսակ հասարակական գործունէութեան ասպարէզներում:

VII. Եթէ լաւ քննենք այն տխուր հանգամանքը, թէ ի՞նչու համար երբեմն այնքան եռանդ է պակասում մինչև անգամ ամենալաւ ձեռնարկութեանց մէջ, մենք կը տեսնենք, որ սովորաբար այս պակասութիւնը մի փոքր նշանակուած ունենալուցն է յառաջանում: Մարդ չի ցանկանում նպաստել ձեզ այս կամ այն բարենպաստակ ձեռնարկութեանց մէջ այն պատճառաւ միայն, որ չի համակրում: Նա ա մարդիկ կան, որոնք իսկապէս մարդկային խնցղեութիւններ են. նոքա ներփակուած են ամուր կճէպում, որը մի որ և է մասնաւոր կոչման, եկեղեցական, քաղաքական կամ ուսումնական կեղեից է կազմուած և զգուշութեամբ սողում են հին հաստատուած ձանապարհներով. և ամենեւին ցանկութիւն էլ չունին այդ սահմանից դուրս գալու:

Այսպիսի մարդոց երբէք չը լայնացող և աղքատ կեանքը մեզ ցոյց է տալիս, թէ իսկապէս ի՞նչէ հարկաւոր աւելի ընդարձակ և ձոխ հասարակական կեանքի շրջանին հասնելու համար: Աւթսունամեայ փիլիսոփայ—բանաստեղծ Ռոթէն իր վերջին շունչի ժամանակ բացականչեց. «Աւելի լոյս»: Իսկ մասնաւոր կոչման բթացուցիչ կեղեից և ուրիշ առօրեայ վարակիչ յարաբերութիւններից ազատուել ցանկացող երիտասարդը ամենայն օր պիտի բացականչէր. «Աւելի Սէր»: Մարդիկ երբեմն շատ հնարազէտ են լինում, բայց նոքա չը գիտեն, թէ ի՞նչ անեն իրենց հնարագիտութեամբ: Նոքա լաւ պատերազմողներ են, բայց չը գիտեն թէ ո՞ւմ համար կռվեն, կամ թէ չէ, չար բանի համար են կռվում: Նոցա պակասում է Սէրը: Եթէ մեծ առաքեալի հետեւեալ խորհուրդը թէ. «այե՛ս քնն յարդս, ինքուայե՛ս ընդ ինքուայոզս» զրօշմուած լինէր ամենի սրտում, իւրաքանչիւր մարդու կեանքը այնքան կը հարստանար

ընդհանրական համակրութեամբ, որքան Նէքսպիրի երեակայութիւնը հարստացրեց աշխարհս բանաստեղծական հոգով: Ամեն մարդ չի կարող բանաստեղծ լինել. բայց ամեն մարդ կարող է մի աստիճան զարգացնել իր մէջ այն փրկարար և կենդանացուցիչ զգածութիւնը, որով հնարաւոր է դառնում բանաստեղծական հեղինակութիւնների ստեղծելն ու զնահատելը: Ուսկայն առ հասարակ, աւելի լաւ է բանաստեղծական կեանք վարել, քան որպէս հեղինակ բանաստեղծական ասպարէզ դուրս գալ— լաւ է ոչ միայն մասնաւոր մարդու, այլ և հասարակութեան համար: Իսկ բանաստեղծական կեանքը ուղղակի հակառակ է միակերպութեան և եսականութեան: Բարին ու գեղեցիկը, ուր որ միայն երևան ազահութեամբ ընդունում է նա, իբրև իրեն յատուկ կերակուր: Այս պատճառաւ երիտասարդը թող ամենից աւելի զգուշանայ փակուել միայն այն շրջանում, որին որ այս կամ այն պատճառով համակրում է, և միւս շրջաններից չը խորչէ ատեղութեամբ ու նախապաշարմունքով: Երաւէ, երբեմն աղնուսխոհ ատողը աւելի լաւ ընկեր է դառնում, քան սառնասիրտ բարեկամը, բայց ամենից լաւն է բոլորովին ատեղութիւն չը զգալ: Բարի մարդը աշխատում է, որ չափ կարելի է շուտ շուտ հաղորդակցուիլ ուրիշ մարդոց հետ և այն անձանց ու կուսակցութեանց արժանաւորութիւններն ուսումնասիրել, որոնց նա իր բնութեամբ հակառակ է: Բէնտամի՛ բարոյախօսների շահապաշտական գպրութեան առաջնորդի բնաւորութեան մէկ նշանաւոր յատկանիշն այն էր, որ նա ջանք էր անում երկու այնպիսի հակադիր բնաւորութիւնների էութիւնը ձանաչելու, որպիսիք են Կօլրիջը և Թօմաս Կարլայլ, անկեղծութեամբ ու վեհանձնութեամբ քննելով թէ մէկին և թէ միւ-

սին: \*). Երբէք չը թող տաք ձեզ ծաղրել մարդոց մի ամբողջ դաս կամ խումբ: Այդ տեսակ ցուցմունքները թէ և երբեմն սրամիտ են երևում, բայց իսկապէս անմիտ են և մանկութեան նշան: Երբէք մի հրաժարուիք պատուել մարդուն, որովհետեւ ամենքը նրա դէմ են. կամ թէ չէ նորա համար, որ նա ամենից արհամարհած աղանդին կամ կուսակցութեանն է պատկանում: Եթէ մեծամասնութիւնը նորա դէմ է, որ ամենաերեւելի մարդոց էլ այդ պատահել է, աւելի հարկաւոր է, որ ձեր գատողութիւնը նորա մասին մարդասիրական լինի: «Ձամենիսեան պատուեցէք». ահա այն սուրբ և խմաստուն խրատներինց մէկը, որոնցով այնքան հարուստ է նոր Կտակարանը: Բայց պէտք է ջանաք մարդոց ճանաչել, որ այս խորհրդին հետեւէք. իսկ ոչոքի չէք կարող ճանաչել, մինչև որ նորա ամենալաւ յատկութիւնները եղբայրակա՞ն աչքով չը նկատէք: Այդ տեսակ մտքերն ու վարքը ճշմարիտ բարոյական փիլիսոփայութիւն և մարդկային ամենալաւ զարդն է: Բարութեան այս աստիճանին հասնելով, դուք կարողէք ամենայն ճարտարութեամբ ճշմարտութիւնը սիրոյ վերայ կռուցանել յօգուտ բոլոր մարդոց, և ձեր գործերը միշտ և հանապազ նոյնպէս ճշմարիտ կը լինեն, ինչպէս և խօսքերդ:

VIII. Մեր ժամանակ յաճախ այնպիսի երիտասարդների ենք հանդիպում, որոնց ճակատին պարզ զրուած է.

\*) Սամուէլ Թէլէր Կօլլեբը (1772—1834) անդլիական երևելի բանաստեղծ էր. սիլլբում սաստիկ հասարակապետական, իսկ յետոյ արքայական և «Լճային դպրութեան» ջերմ պաշտպան: Թովմո Կարաջը (1795—1881 թ.) դերմանական զբաղանութեան տարածողը Անդլիայում: Երևելի պատմաբան և մոլեռանդ պահպանողական:

«Ինձ ոչնչով չես զարմացնիր»: Սոքա մեր երկրի սասնուհարգ երկրասարդների շատ անհամայն և մի և նոյն ժամանակ անպէտք դասն են կազմում. եթէ միայն ոչնչի վերայ չը զարմանալու դաւանութիւնը—որը նոցա ամենայն քայլում նշմարվում է, վաղանցուկ երիտասարդական մելութիւն չէ: Չարմանալու ընդունակութիւնը, որպիսին յատուկ էր Պլատօնին, ճշմարիտ փիլիսոփայական յատկութիւն է: Արայսպիսի ընդունակութիւնը որքան մեծ է, մանաւանդ եթէ մեր սիրտն էլ յարգել զիտէ և մեր հայացքները պայծառ և մաքուր են,—այնքան առաւել լաւ է: Թէ այս յատկութիւնը մանաւանդ կեանքի մէջ նոր մանող երիտասարդի մէջ շատ զօրեղ պիտի լինի, շատ բնական է և հասկանալի: Իսկ դորա պակասութիւնը բացատրվում է կամ զգաճութեան պակասութեամբ, կամ թէ չէ սառնասրտութեամբ, ետականութեամբ և ինքնահաւանութեամբ. այս յատկութեանց հետ եթէ երբեմն մի փոքր ճարպիկութիւն է երևում, ոմանք իսկական տաղանդի տեղ են ընդունում նորան: Այս վերին աստիճանի անբնական և ցաւալի հոգեկան դրութեան հակառակ՝ մենք ամենայն երիտասարդին խորհուրդ կը տանք յարգանք ունենալ \*): Շատ կարելի է, դուք ռամկապետական հայացքների մէջ, որոնցով այնքան ոգևորվում են մեր ժամանակ, այս առաքիներութեան հետքն անգամ չը գտնէք, բայց և այնպէս սա է հոգու իսկական աղը:

\*) «Վիճելի և Երոտերի» մէջ Գեօթէն խորհուրդ է տալիս երեք տեսակ յարգանք զարգացնել երիտասարդութեան մէջ: Յարգանք դէպի Ես, ինչ որ մեզանից Վէրն է. ինչ որ մեզանից Սորն է և ինչ որ մեզ հասարակ է: Տես «Վիճելի Մէյսաէրի Թափառական տարիները» II. դրբ. I. դրբ. I:

«Մենք կհասնամք, յուսով և սիրով ենք աղբուրմ»:

Մենք թող արարածներ ենք, և մեր որ և է աստիճանի կատարելագործուելու միակ յոյսը այն մասնակցութեան մէջ է կայանում, որ տիեզերքի մեծութեան մէջ ունինք: Յովհաննէս Աստուածարանի Կաթուղիկեայց առաջին թղթի մէջ մի շատ գեղեցիկ տեղ կայ՝ (Գլ. Գ. 2) ուր այս առարկայի ողջ փիլիսոփայութիւնը մի քանի նշանաւոր խօսքերով բացատրվում է: «Սիրելիք, մենք այժմ Աստուծոյ որդիք ենք, բայց գեռ յայտնի չէ, թէ ինչ ենք լինելու: Գիտենք միայն, որ երբ յայտնուի, Նորա նման կը լինենք՝ որովհետեւ կը տեսնենք Նորան այնպէս, ինչպէս որ Նա է»: Այս նշանակում է. կատարելութեան տիպարը ըմբռնելով և նորանով ոգևորուելով՝ մենք կարող ենք այս տիպարին մերձենալ: Ինչ որ չ'ապականուած մարդը այսպիսի գէպքերում տեսնում է, նորա վերայ էլ զարմանում է. իսկ ինչի վերայ զարմանում է, նորան էլ նմանում: Ստոյիկեան փիլիսոփաների համաձայն՝ մարդուս զլիսաւոր նպատակը պիտի լինի՝ *Spectare et imitari mundam.* (գիտել աշխարհքը և նրան նմանիլ.) Գեղեցիկ միաք և գեղեցիկ արտայայտուած: Բայց ի՞նչպէս կարող է մարդս գիտել, նայել՝ երբ նա զարմանալու ընդունակ չէ, որը նորան զեկափարում է: Եւ ինչպէս նմանիլ նորան՝ որին չես ճանաչում: Ամենայն անկեղծ գնահատութիւն պայծառ տեսութեան և ազնիւ ոգևորութեան արդիւնք է. իսկ սովորապէս մարդիկ արհամարհելով և նրանց չնչին նշանակութիւն տալով՝ կուրանում է տեսութիւնը և սպանվում է ոգևորութիւնը, որով և նպատակը ապարդիւն է մնում:

IX. Բարոյագիտութեան ասպարիզում թէ յափշ-

տակութեան և թէ կանոնաորութեան (պահեցողութեան) սկզբունքներ կան: Սէրը և յարգանքը՝ որոց մասին խօսեցինք, առաջի կարգի սկզբունքներ են. իսկ ծուծիւն-լիւնը, որի մասին պիտի խօսինք, վերջին: Ծուծիւնութիւնն այնպիսի առաքինութիւն է, որի մասին երիտասարդները շատ քիչ հասկացողութիւն ունին և որի պակասութիւնը նոցա դուցէ և ներելի է: Բայց այնուամենայնիւ այս առաքինութիւնը հարկաւոր է և եթէ երիտասարդները չեն ցանկանում փորձուելուց առաջ վաղօրօք զգուշանալ՝ նոքա ստիպուած կը լինին ճանաչել դառն և վտանգաւոր փորձով: Անծուծիւնութիւնից զգուշացնելու խորհուրդը՝ տաք գլուխ երիտասարդին նոյնքան թեթեւ է երևում, որքան և անպատիւ. բայց տաք գլուխ երիտասարդը՝ որը ընդունակ է մի ակնթարթում յարձակուել թշնամու լարած բազմաթիւ տէգերի ու նիզակների վերայ, չի կարող զգուշութիւն: ասած բանը գնահատել արժանեօք, որը պատերազմի յաջող ելքի համար նոյնքան կարեւոր է, որքան և քաջութիւնը: Հին դարերի ամենալուրջ գործնական մտածող և մի և նոյն ժամանակ ընդարձակագոյն զիտութեան տէր Արիստոտէլը, որի անունը միայն երաշխաւոր է, թէ խելացի խրատ կարող է տալ, սահմանեց հետեւեալ օգտակար կանոնը կեանքի ծանր արուեստի համար. առաքինութիւնը կամ իմաստուն գործունէութիւնը երկու ծայրահեղութեանց մէջ է գտնվում: Նոքա, որոնք գեռ նոր են մտնում կեանքի ասպարէզը, թէ և սովորաբար շատ սէր ունին կրակոտ խօսքեր ասելու, բուն կրքեր ցոյց տալու, սանձարձակ ոյժեր ու ամեն տեսակ տարօրինակ գործքեր հանդէս հանելու՝ նոքա պէտք է հաւատացած լինին, որ քանի հասակն առնեն, այնքան աւելի կը սովորեն ամեն բանում չափաւոր լինել, և աւելի

ևս կը համոզուին այն ճշմարտութեան մէջ, թէ առողջ և ուժեղ մարդիկ նոքա չեն՝ որոնք թեթեամտաբար իրենց կրքերին են յանձնատուր լինում, այլ նոքա՝ որոնք խոհեմաբար սանձահարում են այդ կրքերը: Չափազանցութեան հասած կերուխումից յետոյ զգացած այն տկարութիւնը, որ զերմանացիք «կատուի թշուառութիւն» են կոչում, շատ լաւ ապացոյց է, թէ բնութիւնը անպատուած էր և բաւականութիւն է պահանջում: Անժուժկալութիւնը՝ ինքնասպանութիւն է ծնանում: Նա այն աներևոյթ հեղեղն է տան տակը որը վաղ թէ ուշ պէտք է քանդէ նորա հիւքը: Չափազանց պարապմունքներն էլ այդ կարգին պէտք է դասել: Շարունակ ու սաստիկ մրտաւոր զբաղմունքը թուլացնում է ուղեղը, խանգարում մարտոյութեանը և առհասարակ վատ է ներգործում մարմնի ամբողջ կազմութեան վերայ: Ուստի սննձեցէք ձեր եռանդը այս բանումն էլ քանի դեռ ժամանակ կայ: Անբնական միջոցների գործադրութիւնը անբնական հետեանքների էլ կը հասցնէ, և ճեղքած ամանը, ինչքան էլ որ չ'ամրացնէք, երբէք անարատ ամանի տեղը չի բանի: Իմաստութիւնը, գիտութիւնը՝ լաւ բան է. բայց լաւ չէ այսօր այնքան իմաստնաւ, որ վաղը էլ ոչինչ անելու չ'ունենաք: «Շատ իմաստուն մի՛ լինիր, որ անժամանակ չը մեռնիս»: Յիշեցէք ուրիշ այս խօսքերի ասողը:

X. Եթէ Մեծ-Բրիտանիան աշխարհիս ամենահարուստ երկիրն է, և այնքան հարուստ, որ միշտ խոհեմ ու խելացի Սիզնէյ Սմիտը \*) իրաւունք համարեց ասելու

\*) Սիզնէյ Սմիտը (1771—1849) երևելի երգեծարան ու քարոզիչ էր: Edinburg Review ամսագրի հիմնադրելը (1802 թ.)

թէ. «սա միակ երկիրն է, ուր աղքատութիւնը արատէ»: ապա ուրեմն շատ հարկաւոր է, որ այսպիսի երկրում կենսական ասպարէզը նոր մտնող ամենայն երիտասարդ պինդ դրօշմէր իւր սրտում բարոյական փիլիսոփայութեան այն հիմնաւոր սկզբունքը, թէ մարդուս իսկական արժանաւորութիւնը այն չէ, ինչ որ նա ունի, այլ այնէ, ինչ որ նա է: «Աստուծոյ արքայութիւնը ձեր ներսն է» և ոչ թէ դուրսը: Այս պատճառաւ զգուշացէք այն բարոյական ախտից, որով քիչ թէ շատ վարակուած է ամենայն առևտրական կամ արդիւնադործական հասարակութեան մթնոլորտը. որի շնորհով սովորութիւն է դառնում մարդու արժանաւորութիւնը աւելի նրա արտաքին հանգամանքների վիճակով չափելը քան նրա ներքին ազնուութեամբ: Թզուկը բարձր պատշգամբի վերայ ելնելով՝ ամբոխին վերելիցն է դիտում, և անկասկած իւր գիրքն է, որ նորան այս առաւելութիւնն է տալիս: Նոյնը կարելի է և այն հարստի մասին ասել, որը միայն հարուստ է. նա հասարակութեան մէջ որոշ դիրք է ստանում և սորանով շատ կարելի է նորա անունը M. P. յաւելուած տառերով զարդարուի. (Member of Parliament. Պարլամենտի Անդամ). բայց իջեցրէք այդպիսի պարօնին արհեստական բարձրութիւնից և մի լաւ նայեցէք նորա երեսին. դուք կը տեսնէք որ սա մարդու միայն դիակ է, որի հետ համեմատուել անգամ ամօթ է: Այս պատճառաւ անջինջ պահեցէք ձեր յիշողութեան մէջ այս բանը, որ հասարակական կեանքում համարեալ այնպիսի հարստից աւելի արհամարհելի մարդ չը կայ, որը միայն իր հարստութեամբ է պարծենում: Հէնց նորանով, որ այդքան բարձր է դասում արտաքին շքեղութիւնը, դա դաւաճանեց իր ցեղեղնազոյն բնաւորութեանը և կեղծելով մարդկային ար-

ժանաւորութեանց բեռները, մէկը միւսի տեղն է վաճառում: Ունեցէ՛ք միայն այնքան փող, որ ձեր դերձակին կարողանաք վճարել, իսկ եթէ կարելի է և այնքան էլ, որ կարողանաք կազդուրել ձեր մարտողութիւնը մի բաժակ լաւ գինով: Բայց երբէք չը ձգտիք հարստութիւն զիղելու: Սոկրատէսը, Պլատոնը, Արիստոտելը, Սուրբ առաքեալն Պօղոս (Առաջին թուղթ առ Տիմոթէոս. դ. 9) բոլորեքեան միաձայն պնդում են, որ արծաթսիրութիւնը՝ անազնիւ գործէ և ով որ արծաթն ամեն բանից բարձր է դասում, նա իւր անձը աւելի սակաւ է գնահատում: Ուրեմն թող ձեր միակ ապաւէնը լինի ձեր մտաւոր ու բարոյական արժանաւորութիւնը և դուք ժամանակով կը համոզուիք, որ ամբողջ երկրում չի գտնուիլ ո՛չ մի դուքս, ո՛չ մի միլիօնէր, որը որ և է բանում գերազանցէր ձեզնից:

XI. Ես ամենեին գիտաւորութիւն չ'ունիմ բոլոր առաքինութիւնները մի առ մի թուել. դորա համար զիմեցէք Արիստոտելին: Բայց չեմ կարող լռել բնաւորութեան մի յատկութեան մտայն, որը բարոյական մեծութեան էական տարրն է, և ամեն տեսակ յառաջադիմութեանց ճշմարիտ գրաւական այսինքն Հասարակականութիւնը: Ես երբէք չեմ տեսել փոքր ի շատ է գործունեայ մարդ, որին եթէ մի դժուար դործ վիճակուէր կատարելու, չը կարողանար ձեռնարկել ու յաջողութեամբ աւարտել: Բանաստեղծ Վօրգովօրտը իր «Ճանապարհորդական հետազոտութիւններ» մէջ պատմում է որ հէնց այն բոլորին, երբ պատրաստում էր բարձրանալ սարը, երկինքը ծածկուեց ամպերով. բայց և այնպէս ճանապարհը շարունակեց այն պատճառաւ, որ թէ և ակործելի է անձրևի տակը թռչուիլ, բայց բնաւորութեան համար վտանգաւոր է գիտաւորութիւնից յետ կանգնել միայն այն պատճառով, որ

մի անյարմարութիւն է գուշակվում: Եւ այս շատ իրաւացի նկատողութիւն է: Մենք այնպիսի աշխարհում չենք ապրում, ուր ներելի է չնչին բաների համար վհատուիլ: Արդէն նշանաւոր և էական դժուարութիւններ բաւակաւ նին կան, որոց հետ որ աւելի հարկաւոր է մարանչելը Բայց այդպիսի դժուարութեանց հետ մարանչելը՝ նշանակում է սպառնալ, իսկ դոցա յաղթելը նշանակում է փառասիրտ սպառնալ \*): Բարեկամներիցս մինը Բէն Վրուէչէն \*) բարձրանալիս, հասաւ այն տեղը, որը գագաթի տեղ էր ընդունել. բայց նա տեսաւ որ խկական գագաթը դէպ' արեւմուտք երկու անդիական մղոն հեռու է, և ճանապարհը շատ խորբուբորտ և քարքարոտ քարափ է, ուր յօգնած ոտերով անցնիլը չափազանց դժուար էր: Սակայն այսու հանդերձ գագաթն ևս սկսեց մարտխուրով ծածկուիլ, և արևի մայր մտնելուն միայն մի ժամ էր մնում: Նա խոհեմաբար վճռեց ցած իջնել կարճ ճանապարհով: Բայց ի՞նչ արաւ միւս առաւօտ: Նա նորից սկսեց բարձրանալ սարը, և նախաձաշիկը ամենաբարձր գագաթի վերայ կերաւ, որպէս զի, ինչպէս նա ասում էր, մեր երկրի այս ամենահրաշալի սարի անունը չօ զարթեցնէ իր հոգում ամօթի ու անյաջողութեան զգացմունքը: Հաւատացած եղէ՛ք, որ այդպիսի մարդը իւր ամենայն ձեռնարկութեանց մէջ միշտ և հանապազ յաջողութիւն կ'ունենայ: Երբէք դժուարութեանց առաջ կորի զլուխ չը կանգնէք՝ նա մանաւանդ եթէ նոր գործ էք ձեռնարկում:

\*) Գեօթէն ասում է. «Մարդ լինել՝ նշանակում է ակոյեան լինել»:

\*) Շօտլանդիայի լեառն է, որը երկու գագաթ ունի. մինը 1680, իսկ միւսը 1695 մետր բարձրութեամբ ծովի մակերևութից:

Aller anfang ist schwer՝ ամեն բանի սկիզբը դժուար է, ասում է գերմանական առածը. և որքան լուծելու խնդիրն աւելի արժանաւոր է, նոյնքան առաւել շատ է և դժուարութիւնը: Ասէմ գործը դժուար է: Եւ ճշմարիտ որ միայն դժուար գործերն արժէ կատարել, և նոքա կատարվում են վճռողական կամքով և հաստատուն ձեռքով: Գործունէութեան աշխարհում կամքը՝ ոյժէ, իսկ հաստատուն կամքը՝ յաղթանակն է, ի հարկէ, եթէ չափից դուրս անյաջող չեն հանգամանքները: Բայց և այդպիսի զիպուածներում շատ անգամ հաստատ կամքը յառաջագիմուծեանը ճանապարհ է գտնում անակնկալ կերպով: Կարգացէք Փրիզրիկոս—Մեծի կենսագրութիւնը, և դուք կը հասկանաք, թէ այս ի՞նչ է նշանակում: Իսկ ով որ առաջին անյաջողութիւնից վհատում է, նորան բաղտն էլ թողնում է:

Ի վերջոյ ես էլի մի քանի խորհուրդներ առաջ կը բերեմ, բացատրելու թէ ի՞նչ ճանապարհներով առաւել լաւ է բարոյական կատարելութեան հասնիլ:

XII. Նախ և առաջ ի հարկէ, պէտք է որոշ և հաստատուն համոզմունք ունենալ, թէ միայն մի բան է մարդկային կեանքին արժանաւորութիւն ու նշանակութիւն տուողը՝ այսինքն Բարոյական ոյժը և թէ այս ոյժը միայն գործունէութեամբ է ձեռք բերվում: Եթէ կարծում էք, որ այս բանում ձեզ շատ կ'օգնեն զրքերը, խորհրդածութիւնները, փիլիսոփայութիւններն ու ուսումնական վիճաբանութիւնները, չարաչար սխալվում էք: Իրաւ է, զրքերն ու խօսակցութիւնները կարող են ոգևորել և քաջալերել ձեզ. նոքա շատ կարելի է և ուղեցոյց լինին ձեզ համար, որ առաջին անգամ ասպարէզ դուրս գալիս չը շեղուիք ճանապարհից. բայց և այնպէս նոքա

մի քայլ անգամ յառաջ չեն տանիլ ձեզ: Կեանքի ողջ ճանապարհը ձեր սեփական ոտներով պիտի անցնէք՝ կարծապատեղ հարկաւոր է գործել: Ուղեցոյցները շատ օգտակար են, երբ և ուր էլ որ պատահիք նոցա. բայց քանի շուտ սովորիք ազատ մնալ և նոցա պէտքը չ'զգալ՝ այնքան լաւ է. որովհետեւ երկար չէք ման-դայ այն ճանապարհով, որ ուրիշները յարգարել են. շուտով ձեր առաջ կը բացուին մարտիւղողով ծածկուած ճահիճներ, ձորեր ու անապատներ, և վայ ձեզ. եթէ ձեր ճանապարհին սովոր էք խորհուրդ ստանալ միայն ուղեցոյցներից ու ցցուած ձողերից: Ժիշտ կողմնացոյցը ձեր հոգու մէջ պիտի ունենաք. այլապէս ձեր փրկութեան համար դուք ստիպուած կը լինիք առաջին հանդիպողին հաւատ ընծայել, որ գուցէ նմանապէս ձեզնից շատ քիչ չէ մոլորուել կեանքի մէջ: Ապա ուրեմն հաւաքեցէք ձեր բոլոր զօրութիւնը և անձամբ փորձեցէք այն մեծ ճշմարտութիւնը, թէ ինչպէս որ վազելը կարելի է միայն վազելով սովորել. թող կոտիլը՝ թուչկոտելով և մենամարտիլը՝ մենամարտութեամբ. այնպէս էլ Բարոյական ոյժը կարելի է սովորել միայն բարոյապէս գործելով միշտ և ամեն ժամանակ ուր որ պատահի: Եթէ շեղուիք այն ժամանակ, երբ առաջին անգամ պիտի փորձուի ձեր քաջութիւնը, աւելի թոյլ կը լինի երկրորդ փորձի ժամանակ. բայց եթէ հեռեւալ փորձութիւնները անպատրաստ տեսնեն ձեզ, այն ժամանակ առանց այլ և այլութեան կորստեան անդունդը կը զրորուիք: Լուրորդը հոսանքին զիմադրելու ոյժը նորա նով է ձեռք բերում, որ շտտ յաճախ մեծ ալիքների դէմն է գնում: Եթէ դուք միշտ ծանծաղուտ ջրումն էք լողանում, քիչ աւելի խորը ջրում լողանալիս, ձեր սիրտն անպատճառ կը դողայ: Մեղքի ու փրկութեան վերայ ու

նեցած ընդհանուր հասկացողութիւնները չեն զգնիլ ձեռք երանութեանը գիմելու: Ինչպէս որ ճանապարհորդելիս ցցուած ուղեցոյց ձողերը մի առ մի ձեր աչքից պիտի անհետանան, այլպէս դուք մի և նոյն անգը կանգնած կը լինիք: Հէնց այնպէս էլ բարոյական կեանքի մեծ ճանապարհի վերայից թշուառութիւնները մի առ մի պիտի անհետանան, եթէ ոչ դուք կորած էք:

XIII. Գերմանական երգիծարան Ժան-Պաուլը ասում է. թէ որպէս զի մարդ բարոյապէս չը վհատուի, ամենալաւ միջոցն է կեանքի ամենամուսայլ ըրուակներին՝ ամենափոսյուն ըրուակներն յիշել: Հէնց այդպէս օգտակար է սովորական կեանքի ստորաքարչ կռվում և շատ անգամ ապահանջալ մթնորոգում՝ միշտ սրտի մէջ վառ պահել մարդկային կեանքի բարձր իդէալն մաքրեցուցիչ տպաւորութիւնը, որ շատ անգամ այնպէս ջերմ ու զօրեղ կերպով արտայայտուել է: Սնահաւատ մարդիկ կրճքի վերայ յուռութներ (թախսման) են կրում: Իսկ դուք տպաւորեցէք սիրտը սուրբ խօսքերի ընտիր պաշարով և դորանով աւելի լաւ պաշտպանուած կը լինիք թշնամու յարձակումներից, քան նոյն ինքն ամեն կողմից թիկնապահներով պաշտպանած Չինաց Կայսրը: Շատ երեւելի մարդիկ ասել են այսպիսի խօսքեր՝ արեւելքում Կալիդազասից ու Բուդդայից սկսած, մինչև Պիլթազորասը, Պլատոնը, Արիստոտէլը ու Էպիկտէտը արեւմտքում: Բայց մանուսնդ ճշմարիտ անգին խրատներով լի է Ս. գիրքը, այսինքն Հին և Նոր Կտակարանը, և այս պատճառաւ կատարելագոյն արժանի է, որ անջինջ դրօշմուի մեր սրտերում: Իրաւ է, Աստուածաշունչը հաստ գիրք է, կամ աւելի ճիշտ ասել, սա ոչ թէ գիրք, այլ մի մեծ գրականութիւն է քիչ տարածութեան վերայ, այս պատճառաւ շատ կարելի է աւելի

լաւ բան արած չեմ լինի, քան մի քանի այնպիսի գրքեր կամ գլուխներ նշանակեմ, որոնք ամենայն մարդու համար առանձնապէս անգին են: Նախ և առաջ կը յիշեմ, ի հարկէ, Աերան վերայ քարոզութիւնը (Մաթ. Ե—Է). յետոյ Կորնթացոց Առաջին թղթի ԺԳ. գլուխը. ապա Յովհաննու Աւետարանը. Յակովբ առաքելի Կաթուղիկեաց թուղթը. Տիմոթէոսին ուղղած Առաջին և երկրորդ թղթերը. Հռոմայեցոց թղթի Բ. գլուխը. Նիկեացոց թղթի Ե. և Զ. գլուխները և Գաղատացոց թղթի մի և նոյն գլուխները: Հին Կտակարանում ամենօրեայ փորձը աստիճանաբար աւելի կը պարզի ձեզ Սողոմոնի Առակաց խորին իմաստութիւնը: Կեանքի մէջ առաջնորդ ունենալու համար այս գրքից աւելի լաւը չի կարելի գտնել. և ես յիշում եմ, թէ ինչպէս մեր նախկին կառավարիչ Ա. ի, որը շատ լաւ ծանօթ էր Շառանդիայի հետ խորին համոզմամբ պնդում էր, թէ մեր երկիրը, որ պարծենում է իր գործնական խելքով, պարտական է իւր կանխական ծանօթութեան այս գործնական իմաստութեանց ժողովածուի հետ, որը առաջ առանձին գրքերով էր հրատարակվում և ամեն մարդու ձեռքին գտնվում էր: Բարեպաշտ մտածողութեանց ժամերին, յայտնի է, որ ամենից համապատասխան են մեծ սաղմոսերգուի Սաղմոսները և նրանց միջից երիտասարդներին աւելի խորհուրդ կը տայի հետեւեալները կարգալ. Ա. Բ. ԺԲ. ԻԳ. ԼԱ. ԼԶ. ԽԸ. Ծ. ԾԲ. ԶԲ. ԶԳ. ԶԴ. և ԶԼԲ.: Եւ սոքա ոչ միայն պիտի կարգացուին, մինչ մեր հոգին ազգու և խորին բարեպաշտութեամբ զօրանայ, այլ և համապատասխան երաժշտութեանց հետ կցորդուած, երգուին, մինչև որ մեր շուրջը մաքուր և բարձր զգացման մթնոլորդ կազմուի: Ահա հէնց այս է սրտի այն կրկնակցը, որի մասին այնպէս ճարտար

խօսում է մեծ, Հին հեթանոս Պլատոնը իր «Հասարակապետութեան» մի քանի ընտիր հատուածներում:

XIV. Բայց ճշմարիտ արժանաւոր կեանք վարելու համար՝ հազիւ թէ այնքան նշանակութիւն ունենայ մի յիշողութիւն, որ լեք լինի վերև յայսնած կամ նոցա նման օգտաւէտ խրատներով, որքան մի երևակայութիւն, որ հերոսական օրինակներով է գարգարած: Ուրիշ խօսքերով բարի և մեծ դառնալու համար ուրիշ աւելի հաստատ միջոց չը կայ, քան կանխապէս ծանօթանալը բարի և մեծ մարդոց կեանքի հետ: Որքան իմ փորձառութիւնիցս յայտնի է, ո՛չ մէկ քարոզ այնպէս չէ ազդում մեզ վերայ, որքան մեծ մարդու օրինակը: Այնտեղ քաջութիւնը մեր աչքի առջև է կատարվում, և կատարվում է իրօք. մի և նոյն ժամանակ այնպիսի քաջութիւն ենք տեսնում, որի հնարաւորութիւնն անգամ չէինք երազել և որը բարձրաձայն ասում է մեզ. «Վնացէք և դուք այդպէս արէք»: Եւ ի՞նչ արգելք կայ անելու: Եւ հարկէ, ամեն մարդ հերոս չի կարող լինիլ, և միշտ հերոսական քաջութիւն անելու առիթ չի պատահիլ մեզ: Բայց եթէ դուք մի և նոյնը նոյնութեամբ չէք կարող կրկնել—գտնէ նրա նմանը կարող էք կատարել: Եթէ ձեզ ուրիշն պէս լայն ու ընդարձակ ասպարէզ չի տուած, բայց և այնպէս ձեր փոքր ասպարիզում էլ կարող էք նոյն տեսակ գովելի տոկունութիւն ու արիւթիւն ցոյց տալ: Մեծ մարդոց օրինակներից իւրաքանչիւր անհատ կարող է օգուտ քաղել, եթէ միայն կը ձգտի կատարելագործուիլ և ինչպէս հարկն է, հանգամանքներից օգտուիլ: Մեծ մոլորութիւն է, մարդոց մեծութիւնը չափել նոցա բռնած ասպարիզի ընդարձակութեամբ, որի վերայ նոքա գործում են. կամ ինչ փոքրով որ նորա հռչակուել են աշխարհումս: Երևելի Մօլոկէն,

պատերազմի նախընթաց օրը ղինուորական խորհրդի մէջ նախագահելով, որը մտադիր է ողջ արեւմտեան քաղաքականութիւնը այլապէս խմորել, գործում է մի և նոյն կենսական առօրեայ իմաստութեան կանոնով, որը որ նոյնպէս պէտք է գործադրէ որ և է աննշան գաւառական քաղաքի քաղաքապետը՝ և նոյնչափ ձարպիկութեամբ ու հմտութեամբ, երբ որ նա ո՛չ այնքան մեծ գաղափարով է զբաղուած, այլ զորօրինակ, երբ որ նա քաղաքի առողջապահական նոր հնարներ է խորհում, կամ նոր հարկերի ծրագիրն է պատրաստում, քաղաքի եկամուտները բազմացնելու համար: Այո՛, երբեմն բարոյական քաջագործութիւնը, որը այնքան չէ հռչակվում և որը անյայտութեան մէջ, ստորին շրջաններում է կատարվում, իւր աստիճանով ամէն բանից բարձր է լինում: Այս պատճառաւ թող ձեր մատաղ երևակայութիւնը որքան կարելի է կանխաւ բոլոր ազգերի ու ժամանակների հերոսների պատկերազարդ թանգարաններում ու փառքի տաճարներում պտտի. այն ժամանակ ձեր երևակայութիւնը միշտ կը գրթի ձեզ դէպի բարին ձգտիլ և այդպիսի «չատ վկաների» առաջ դուք կ'ամաչէք որ և է ցածութիւն գործել: Եթէ կ'ուզէք իմանալ թէ ի՞նչ է հասարակ, թող որ Կարլինականների և արմենիաների բաժին լինի հաւատոյ անպտուղ վիճարանութիւններ անելու, իսկ դուք կարդացէք և ուսումնասիրեցէք Ներայեցւոյ թղթի ԺԱ. զեղեցիկ զուխը, և դուք մշտապէս զերծ կը լինիք աստուածաբանական բառազննութեանց խորամանկ որոգայթներից: Այս հիանալի գլխում մեծ առաքեալը զրական օրինակների միջոցաւ խրատելու համառօտ եղանակն է ցոյց տալիս, որոնցով այնքան հարուստ է Ս. Գիրքը, իսկ մեր սովորական քարոզներն այնքան աղքատ: Երբ ես նայում եմ մեր երի-

տասարդների վերայ, որոնք գահաւորակներում փափկասիւ-  
րութեամբ բազմած լինելով՝ մեծամտութեամբ ծաղրում  
են մարդկութեան այն մտացածին թշուառ հրէշաւորների  
վերայ, որոնցով լին են Տէկկէրէյի և միւս անուանի վե-  
պասանների թերթերը, շատ անգամ ավստսում եմ, թէ  
ի՞նչ տեսակ մարդկային կեանք պէտք է դարգանայ կան-  
խաւ ծաղրել սովորելուց, կամ աւել յմեղմ ասենք՝ զուար-  
ձաբանութիւնից, մի այնպիսի հասակում, երբ որ, ինչպէս  
առաջ էլ տեսանք, լրջմտութիւնն ու անկեղծ զարմանքը՝  
միակ սերմերն են, որոնցից միայն կարող է ապագայում  
հոգոյ ազնուութիւն դարգանալ: Իսկ ինչ որ ինձ կը վերա-  
բերի, ես բացարձակ խոստովանում եմ, որ երբէք չը կա-  
րողացայ Տէկկէրէյից մի բան ուսանիլ: մինչև անգամ նորա  
ամենալաւ բնաւորութիւնները պակասաւոր և գզուելի են  
իւրեանց ծայրայեղ նկարագիրներով, և թէ և նոքա այն-  
քան անախորժ տպաւորութիւն չեն թողնում ընթերցողի  
վերայ, ինչքան որ նորա միւս վատ նկարագիրները, բայց  
և այնպէս նոքա էլ բնաւ գրաւիչ չեն: Յունաց ամենընտիր  
զբքերից մինը, որը երբեմն ամենքի ձեռքին էր, իսկ այժմ  
անշուշտ գուցէ մոռացուած է ամենքից՝ Պլուտարքոսն է:  
\*): Ահա՛ ձեզ, թէ երիտասարդութեան և թէ հասուն  
հասակի համար, զանազան կենդանի օրինակներով այն  
նիւթը, որից ճշմարիտ մարդկային գործունէութիւն է  
զարգանում:

Մեր պատմաբան—բննագատները չ'ունենալով այն

\*) «Ես մեծ բաւականութեամբ կարդում եմ Պլուտարքոսի ան-  
գլխեղէն Թարգմանութիւնը՝ ասում է Չօն Սալաւաթ Մելլը եր «Ինչո՞ւն-  
էնտարբութեան» մէջ:

նուրբ զգացողութիւնը դէպի ամեն ճշմարիտ մեծու-  
թիւնը և այն կենդանի կարեկցութիւնը դէպի ամեն  
մարդկային թուլութիւնը, որոնք այնպէս պայծառ փայ-  
լում են այս հին բիովտացոյ ընտիր պատկերազարդ  
թանգարանում, նոքա՝ ասում ենք՝ կորցնում են իրենց  
կրթողական նշանակութիւնը: Այս պատճառաւ երիտա-  
սարդները թող ձգտին մօտ ծանօթանալ ոչ թէ յիմարու-  
թեանց, պակասաւոր և հրէշաւոր բնաւորութեանց հետ,  
որոնցով լին են մտացածին վէպերը, այլ մարդկային քա-  
ջութեան իսկական մարմնոց ու արեան հետ, որը նկա-  
րադրուած է ընտիր կենսագրութեան երեսներում: Պէրիկէ-  
սթենացին, որը վեհանաճաբար հրամայում էր ծառային  
վերցնել աշտանակը և մինչև տուն հասցնել իրեն բիրտ  
անպատուղին, գերմանական արեղայ Լիւպիլը, որը Ս. Հո-  
գով վնասւորուած, վստահաբար մաքառում է իրեն սպառ-  
նող կայսրների ու կարդինալների փալանգի դէմ: Սակա-  
ւածանօթ Օքէրլին քահանան, որը հրաժարվում է մայ-  
րաքաղաքում մեծ պաշտօն ունենալուց և իր փոքրիկ  
վիճակը բարոյական ու Ֆիլիքական դրախտ է դարձնում:  
ահա՛ այն մեծ, անփոփոխ փաստերը, որոնք փշերի պէս,  
պիտի խոցէին երիտասարդութեան սիրտը: Փաստերին ոչ  
ոք չի կարող հակառակիլ ամենընտիր մտացածին պատ-  
մութիւնները, եթէ իրենց մէջ խորին բարոյական միտք  
չեն պարունակում, նման են այն փրփուրին, որ ծիածանի  
գոյներ է ջրացնում: մի բոլոր արդարև, սա հրաշալի է,  
բայց թող ամենաթող քամի փչէ և մի ակնթարթում  
չքայտալ:

XV. Մեծ մարդոց կենսագրութեանց փառաւոր  
հայելիից՝ աւելի ևս օգտակար է այդպիսի մարդոց կենդանի  
պարբերակներ, եթէ դուք այնքան երջանիկ էք, որ կարող

էք նոցա հետ անմիջապէս յարաբերութիւն ունենալը Ամենաընտիր զրքերը, մեր բնութիւնը զրգռելու համար միայն արհեստական մեքենաներ են. բայց նոքա մեզ վերայ անուղղակի և շատ թոյլ են ներգործում. մի և նոյն ժամանակ նոքա կարող են ձեր սեղանի վերայ չը գանուելը այլ մի հեռաւոր անկիւնում փոշու տակ թողուած, և ձեր սրտին այնքան մօտ չը լինին: Իսկ կենդանի մեծ մարդը՝ ձանապարհի ամենայն քայլին ձեզ հանդիպելով, Նէքտրականութիւն է առաջ բերում ձեր շուրջը, որից չէք կարող փախչել, եթէ դուք զբոլուած չէք զգածութիւնից ազնիւ գործերի համար: Կոյրը, ի հարկէ, չէ տեսնում մեռեալը չի զգում. և շատ անգամ պատահում են այնպիսի մարդիկ, որոնք շատ կարելի է, յարգելի են՝ բայց մինչև անգամ Փրկչի գայը, երևալը դոցա հոգում այս միտքը կը փայլեցնէր. «Ինչ գոյ ՚ի դմա»: Սակայն, նմութագրենք, որ դուք դպիրներէից ու փարիսեցիներէից չէք, այլ մի պատանի, որ կենսքի ասպարէզը նոր մտնում է պատկառելի սրտով և նուրբ զգածութեամբ, որպէս և վայելէ բարեկիրթ պատանեկութեան. այդ դիպուածում ճշմարիտ մեծ մարդու հետ անմիջապէս յարաբերութիւն ունենալը մեծ երջանկութիւն կը լինի մեզ համար: Եւ որքան աւելի մե՛ ձաւոր յարաբերութիւններ ունենաք, այնքան լաւ է. որովհետեւ ո՛չ միայն մեծ խելքով, այլ և մեծ բարոյականութեամբ զարդարուած մարդու հետ մօտիկ ծանօթութիւնը միջոց է տալիս և մեծ արժանաւորութիւններ ձանաչելու: Եթէ երիտասարդը թարմ է և վաղօրօք չէ բթացած, և եթէ նա կարող է զղալ, թէ ինչպէս իւր ամբողջ մարմնում ելէքտրականութեան պէս վազում է ջերմ մարդասիրութիւնը՝ երբ մերձ է և հաղորդակցվում է զոր օրինակ՝ Չալմերսի, Մէկլուրտի կամ Բուն-

զէնի \*) պէս մարդկանց հետ, — այսպիսի կենդանի տըպաւորութիւնը աւելի մեծ նշանակութիւն ունի նորա համար, քան հին յոյների ողջ իմաստութիւնը, գերմանացոց ողջ ուսումնականութիւնը և շօտլանդացոց ողջ խորադիմութիւնը: Այդպիսի կենդանացուցիչ ազդեցութիւնը տեսնելով՝ թող իմաստակները ինչքան էլ կ'ուզեն, ժպտան, իսկ փարիսեցիքը յօնքերը կ'ընտոտ են. բաւական է որ դուք զիտէք, թէ ո՛ւմնէք հաւատացել, և հաւատում էք՝ որովհետեւ աճում էք առողջ աճմամբ և ձեր երակները կենդանական հիւթ ունին, որովհետեւ դուք պատուաստած էք խաղողի որթի խկական բնի վերայ: Իսկ եթէ ձեզ վիճակուած չէ, որ անձամբ փորձէք մեծ բարոյական արեգակի կենդանարար ոյժը, գոնէ ձեզ շրջապատող ազդեցութեան կամայականութեանց զոհ չէք լինի: Եթէ դուք անբարոյական հասարակութեան ախտերից միշտ չէք կարող խուսափիլ, գոնէ կարողէք նրանցից հեռու մնալ: Շատ քիչ կը պատահի, որ կենսական հանգամանքները այնպէս անյաջող կազմուին, որ երիտասարդը միջոց չ'ունենայ իր համար ընկերներ ընտրելու: Իսկ ընկեր ընտրելիս, յիշեցէք որ բարոյական ախտը, Փիզիքական հիւանդութեանց պէս, իր ոյժի նշանաւոր մասը այն անձի թուլութիւնից է աւնում, որին որ կպչում է: Այս պատճառաւ, սրբութեամբ ուխտեցէք ձեզ, որ երբէք չէք մերձենալու այնպիսի մարդոց՝ որոնք ցանկանում են պարագութեան և անբարոյականութեան անդունդը զլորել ձեզ: Ել ո՛չ մի զուարճութիւն, էլ ո՛չ մի զգալի բաւական-

\*) Robert — Chalmers՝ անգլիական նշանաւոր մատենագիր և ժողովուրդական զբոսնի տարածող: Henry Dunning Macleod՝ անգլիական նշանաւոր տնտեսագետ:

նութիւն չի վարձրատրի ձեզ այն արատաւորութեան փոխարէն, որին ձեր բարոյական բնաւորութիւնը ենթարկվում է՝ եթէ դուք հաղորդակցվում էք մարդկային հասարակութեան ամենաստոր և զազրելի հրէշների հետ: Արատը՝ անտանելի է: Մենք կարող ենք, այո՛, մենք պարտական ենք ցաւել մեղաւորի վերայ, բայց չը պիտի խաղանք մեղքի հետ: Մտաբերեցէք Բօբէրտ Բօրսնի վիճակը \*): Եւր երգերով նա շատ լաւ կարողանում էր խրատել բայց նորա կեանքը մի թշուառ կատակ էր իւր խրատների դէմ և ակամայ յիշեցնում է մեզ Պլինիոսի երգիծական խօսքը՝ թէ. « Աշխարհքի ամենանառակ և ամենաթշուառ արարածը՝ մարդն է»: Զգուշացէք այս անբաղտ գուսանի օրինակին հետեւել, որը ի բնէ տաք արիւն և մեծ տաղանդ ունէր, որոնք ժամանակիցների աչքում էլի մի փոքր արդարացնում էին նորա դատաւարանի կեանքը: Թող ձեր շրջապատող շրջանը որչափ հնար է, ձեզնից բարձր լինի. բայց եթէ, դժբաղաբար, ստիպուած էք աւելի վատ հասարակութեան մէջ գործելու, ամեն ջանք գործ դրէք բարոյապէս բարձրացնել նրան, բայց այս վախճանի համար, ի հարկէ, նոյնքան հասկացողութիւն է հարկաւոր, որքան և սէր. այլապէս այն հասարակութիւնը ինքը չի դանդաղել իւր ստոր վիճակի մէջ քաշել ձեզ:

XV. «Թող մարդիկ շատ բան իրենց սեփական փորձառութեամբ ձեռք բերեն» ասաց ձերունի Վեօթէն. «բայց թող չը փորձեն ապրել միայն բաղտի բերմամբ». իսկ եթէ

\*) Robert—Burns (1759—1796) շոտլանդական ամենամեծ քնարերգակը, որը եր թեթեամիտ և անկազգ կեանք անցնելով Ֆէշել քապէս և բարոյապէս կորաւ:

դուք չէք ցանկանում ձեր օրերը դուր անցնել, պէտք է որոշեալ ժամանակներում ձեր գործողութեանց հաշիւը տաք ձեզ: Վաճառականները պարտքերից նորանով են ազատուում, որ առձեռն դրամը իսկոյն վճարում են, կամ եթէ այս անկարելի է, որոշեալ կարճ ժամանակամիջոցներում: Հէնց այդպէս էլ մենք պիտի վարուենք մեր բարոյական պարտաւորութեանց վերաբերութեամբ: Ծովային ամենընտիր քարտէսները և ամենաճիշտ կողմնացոյցները ոչինչ օգուտ չեն տալ այն մարդուն, որը չի սովորել զոցա կանոնաւոր գործածելու: Այս կողմից հին Պիւթագորացոց երևելի գործնականութիւնը ամենալաւ օրինակն է ներկայացնում մեզ:

«Թող քունը չը տարածուի աչքերի վերայ, մինչև երեց չը թուես քս օրուայ արարմուէրներդ: Ո՛ւր էին ուղղվում քայլերդ: Ի՞նչ աւելի օգտակար գործ կատարեցիր քեզ համար: Ո՞ր բարե գործը չը կատարեցիր: Եւ հաշիւ տեսնելուց յետոյ, որտե ցաւակցութեամբ ծնջիր չարութիւնն և ուրախացիր բարութեան»:

Ո՛չ որ, իմ կարծիքով, չի կարող այն բարձր կատարելութեան հասնիլ, որը մի երևելի աստուածաբան աւնուանում է. «աստուածային կեանք, մարդկային հոգումէջ» եթէ երբեմնապէս չունենայ առանձնանալու սովորութիւն և այս առանձնութիւնը գործ չ'ածէ ինքնաճանաչութեան և ինքնակատարելութեան նշանաւորագոյն նպատակի համար:» Զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք» ասում է անմահ սաղմոսերգուն:

«Ով եր հացը արցունքով չի կերել,  
Ով երբէք բարուրեց մինչև գերեզման»

Չի անցուցել անբուն գիշերներ.  
Նա ձեզ չի ճանաչում, երկնային ոչժեր:»

(ԳԵՐԹԷ)

Սոքա այն բանաստեղծի յայտնի խօսքերն են, որին դեռ ոչոք չէ մեղադրել թէ ցնորաբան է կամ կեղծամուր.  
«Թող արևը մայր չը մտնի, մինչդեռ դուք բարկացած էք»  
ասում է Պօղոս առաքելալը: Այս բոլոր վկայութիւնները բարոյական հաշուեստուգութեան համար նշանակած ժամերի օգուտն են բացատրում, որը դեռ շատ վաղուց պիւթագորեանք էին առաջարկում և որի համար և մեր ժամանակը բոլոր քրիստոնեայ երկրներում կիրակի օրն է սահմանած: Նփրայեցւոց Նաբաթը, սկզբում, անկասկած, Ֆիզիքական հանգստութեան համար էր սահմանած, և չի կարելի չ'ուրախանալ, որ այս առողջապահական տարրը քրիստոնէական «ձեռունական օրուայ» շարքն էլ մտաւ, որը բացառապէս սոսկ կրօնական նպատակների համար է սահմանած: Այդպիսի պարբերական հանգստութեան միջոցը՝ որը մարդուն ամենօրեայ ձանձրալի պարապմունքներից ազատում է, անխոհեմութեամբ չէ գործածում այն մարդը, եթէ այս հանգստութեան գոնէ մի մասը բարոյական ինքնափորձութեան ծանր աշխատանքին չէ նուիրում: Նատ անգամ օտարազգիք անխնայ կերպով կշտամբում են շտախդացւոց կիրակէ օրուայ «խիստ պահելը». բայց այս կշտամբողները աչքի առաջ պէտք է ունենան, որ շտախդացւոց ազգային բնաւորութեան յատկանիշները, այն է՝ լրջմտութիւնը, ողջմտութիւնը և առհասարակ դրականութիւնը ձեռք են բերուած գուցէ միայն այն պատճառով, որ այդ ժողովուրդը սավորութիւն է արել կիրակէն տօնել ամենայն սրբութեամբ և պիտակցութեամբ:

Անդադար աղմկալից և ունայնական կեանքը, որը Ջրանցքի միւս կողմը բնակուող մեր հարևաններին յատուկ է, դիւրութեամբ առաջացնում են անխոհեմ և թեթեւամիտ քայլեր, որ մինչև անգամ ամենածանրակշիւ հանգամանքներումն էլ փորձվում են անխտիր և անտարակոյս՝ այդ չէ ճշմարիտ մեծութեան զրաւականը: Եթէ մենք, շտախդացիքս, մեր աստուածապաշտութեան տալիս ենք մի փոքր մուայլ բնաւորութիւն այն հանգամանքով, որ կիրակէ օրերը չենք երգում, հաւանական է որ Ֆրանսիացիք շաբաթուայ երկրորդ օրը աւելի լաւ և արժանապէս կը պաշտէին, \*) եթէ առաջինը աւելի լուրջ կերպով անցուցանէին:

XVII. Ինքնափորձութեան նշանաւոր գործողութեան մասին խօսելիս, չի կարելի չը յիշել և Ալֆրէդը Մեր ուսումնական դարում, երբ ամենայն ինչ քննվում, մանրամասն անգամատվում և կարգաբանվում է, սովորութիւն է դառել իբր անհրեքելի պնդել, թէ զիտութիւնն այնպիսի ոյժ է, որին ամենայն ինչ ենթարկվում է: Բայց սկզբունքը, թէ. «գիտութիւնն ոյժն է» \*\*). ճշմարիտ է միայն այնտեղ, ուր որ իրօք զիտութիւնէ պահանջվում: Սակայն կայ մի աւելի բարձր բան, քան թէ զիտութիւնը. կան կէտանի ոյժեր: Իսկ բարոյական աշխարհում յառաջ շարժող ոյժը ի հարկէ զիտութիւնը չէ, այլ ձգտումն դէպի լեռուն և այս ձգտումը աղօթքով է թեւաւորվում: «Համբարձի զաչս իմ ի լիրինս, ուստի եկեացէ ինձ օգնութիւն» ասում է

\*) Յայտնի է, որ Ֆրանսիացիք երկուշաբթի օրերն էլ անգործ են անցուցանում:

\*\*) «Ipsa scientia potestas est» Bacon.

մարգարէն Նաւիթ: Եթէ մարդու մէջ չը կայ այս ձգտումը, նրա հոգին սողում է և չի կարող վեր ամբառնալ: Չեմ կարծում, ի հարկէ, որ մարդուն մէկը աղօթէր Նախախնամութեանը, որ նա, աղօթողի չնչին ցանկութիւնները կատարելու համար, գոնէ մի րոպէ փոխէր աշխարհիս օրէնքները: Սորա համար պէտք է չափից դուրս զբաղուած լինիլ սեփհական փոքրիկ անձնաւորութեամբ, և շատ քիչ ճանաչել Տիեզերքի մեծութիւնը: Մենք ոչ թէ նորա համար ենք աղօթում, որ Աստուածային Նախախնամութիւնը փոփոխուի, այլ նորա համար, որ մեր մարդկային կամքը սովորի հպատակել Աստուածային կամաց: Թէ որքան լսելի կը լինի մեր աղօթքը առանձին դիպուածներում, որոնց ոգիտէ թէ Աստուած ինչպէս է տնօրինել այդ մենք չենք կարող ասել, բայց մենք պէտք է հաւատացած լինենք, թէ որպէս զի մեր բարի ձգտումները համապատասխան լինին՝ ամենայն բանին կեանք պարզեող Նախապատճառի խորհրդին, — ամենից բնական և ճշմարիտ միջոցն այն է, որ անդադար հոգով հաղորդակցուինք այդ Նախապատճառի հետ, և որ սովորենք այնպէս որդիական խոնարհութեամբ երախտապարտ լինիլ, ինչպէս որ վայել է արարածին իւր Արարչի վերաբերութեամբ: Այս պատճառաւ, երիտասարդ, միշտ հաւատարիմ մնացէք ձեր այն զգացմունքին, թէ կախում ունիք ամենայն բարութեանց վերին Պարզեողից: Այս վարժութիւնը աւելի շուտ և աւելի լաւ կը պահպանէ ձեզ այն անմիտ ինքնահաւանութիւնից և այն յանդուզն ապերախտութիւնից, որոնց արմատը մեծ մասամբ չոր ու ցամաք, միակողմանի և սիրով չը ոգևորած գիտութեան մէջն է: Թող այն, ինչոր սովորենք իբր սրբազան արարողութիւն ամենայն օր սեղանի առաջ կատարել, կատա-

րենք նա և մեր կեանքի ամենայն սկզբնաւորութեանց առաջ՝ բայց ոչ թէ միայն ի ցոյցս մարդկան, այլ անկեղծ սրտով: Իսկ թի պէս քարը պատրաստ և պարտը ձեռքին պատերազմ մտէք, քան իրիտասարդ, բայց մաքառեցէք ոչ թէ չար, այլ արդար, բարի զործի համար: Ձեր ձեռքին ունեցած սուրը կամ գրիչը՝ մի՛ զործածէք բնաւ յանդուզն, ապարդիւն անձնապաշտ հոգով կամ անարժան փառք՝ ստանալու համար. և ինչպէս մեծ ուրախութեան՝ այնպէս էլ տխրութեան և յուսահատութեան րոպէներին միշտ պատրաստ եղէք բացազանջուր. «Օրհնիր ինձ, ո՛հ, օրհնիր և ինձ. Հայր իմ»:



Արքայապետության և Բարձրագույն Կրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Արքայապետության և Բարձրագույն Կրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Հանրակրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ թագավորության Գրքերի և Մանկագրության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Սրբազան պարտախոսության և Բարձրագույն Կրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Հանրակրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ թագավորության Գրքերի և Մանկագրության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

Սրբազան պարտախոսության և Բարձրագույն Կրթության նախարարության հրահանգով հրատարակված է հետևյալ ցանկը:

**ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ**

	Օրբ.		Օրբ.
ՋԱՆԱԼ ՕՂԼԻ		Պ. Ս. Աւագանց (Նուխ.) *)	1
		Պ. Խ. Տէր Յովհաննիսեանց	1
Օրբ. Վ. Տէր Դաւթեանց	1	Պ. Տ. Մուրաթեանց	1
Պ. Մ. Սարգիսեանց	1		
		ՍՂՆԱԽ	
		ԳՍԵՂ	
		Պ. Գ. Խիթարեանց	1
Արժ. Թ. քչն. Թումանեանց	1	Ս. ա. քչն. Տէր Ստեփանեանց	1
Պ. Ս. Տէր Զաքարեանց	2	Ա. էրէց Տէր Ստեփանեանց	1
		Ե. քչն. Տէր Աստուածատրեանց	1
		Պ. Յ. Սափարեանց	1
		Պ. Ա. Ղազարեանց	1
Արժ. Պ. քչն. Տէր Գրիգորեանց	1	Պ. Ն. Օնանեանց	1
Պ. Ա. Սարգսեանց	1	Պ. Ղ. Գոճեան	1
Պ. Մ. Նիկողայոսեան	1	Օրբ. Ե. Շահվերդեանց	1
		Պ. Ս. Տէր Մաթէոսեանց	1
		Պ. Աղա Փարէմուզեանց	1
		Պ. Կ. Փարեմուզեանց	1
Արժ. Ս. քչն. Տէր Սարգսեանց	1	Պ. Ն. Մելիք-Նուրբաբեանց	1
Պ. Մ. Աբրահամեան Շահինեանց	1	Պ. Յ. Լիսինեան	1
Պ. Ն. Թորոսեանց	1	Օրբ. Թ. Սափարեանց **)	1

ՀԱՅՈՑ ԳԵՍՈՒԳԵԱՌ

1

Արժ. Մ. քչ. Տէր Մովսիսեանց 1

Պ. Զ. Գէմլեւեանց \*) 3

\*) ՄԼՏ. Զաքարեայ Գէմլեւեանցը նուիրում է 1 օրինակ Փամբակու ՄԼՏ-Ղազարեանց Օրբերոց զպրոցի Գրադարանին:

\*\*) ՄԼՏ. օրբ. Թագուհի Սափարեանցը և պ. պ. Սարգիս Սարգսեան և Բագրատիճն Տէր Մաթէոսեան նուիրում են մէկ մէկ օրինակ Սղնախու Երկեսու զպրոցաց Գրադարանին:

	Օրէ.		Օրէ.
Պ. Ս. Սարգսեան	1	Պ. Գ. Զախմախչեանց	1
Պ. Բ. Տէր Մաթէոսեանց	1	Պ. Մ. Տէր Պէտրոսեանց	1
		Պ. Ս. Մովսէսեանց	1
		Պ. Երզնէ Զելանի	2
		Պ. Մ. Տալեանց	1
Պ. Ս. Մնացականեանց	1	Պ. Ս. Նալեանց	1
Պ. Յ. Սահակեանց	1	Պ. Ն. Փէշումալձեանց	1
Պ. Մ. Եպիսկոպոսեանց	1	Պ. Խ. Կնտեղցեանց	1
Պ. Մ. Նաբաթեանց	5	Պ. Յ. Բաբաջանեանց	1
Պ. Տէր Ներսէսեանց	1	Պ. Ե. Նալբանդեանց	1
		Պ. Ա. Տարեանց	1
		Պ. Մ. Մելիքեանց	1
		Պ. Խ. Երանոսեանց	1
Արժ. Յ. ա. քչն. Ատոմեանց	1	Պ. Գ. Մանուկեանց	1
Պ. Ա. Դաստաիեանց	1	Պ. Մ. Համբարձումեանց	1
Պ. Շ. Սերերբալեանց	1	Պ. Ա. Ժամակոչեանց	1
Պ. Ա. Յարութիւնեանց	1	Պ. Ա. Շաթերեանց	1
Պ. Յ. Ս. Մեղքումեանց	1	Պ. Տ. Տիգրանեանց	1
		Պ. Մ. Մամիկոնեանց	1
		Պ. Ա. Ղազարեանց	1
		Պ. Մ. Պօղարձեանց	1
Ա.Ղ.Է.ՔԱՆՆ.ԴՐԱ.ՊՈՂ		Պ. Մ. Մերզայեանց	1
Պ. Ա. Յովհաննիսեանց	15	Պ. Պ. Դոմէնիկեանց	1
Պ. Յ. Բաբայեանց	25	Պ. Վ. Ստեփանեանց	1
Պ. Հ. Ղուկասեանց	1	Պ. Մ. Մալխազեանց	1
Օր. Ե. Խալաթեան	1	Պ. Ն. Կարապետեանց	1
Օր. Ս. Խալաթեան	1	Պ. Գ. Պալասանեանց	1
Օր. Ե. Ալմոյեան	1	Պ. Ա. Բաղդասարեանց	1
Օր. Վ. Մերզայեան	1	Պ. Յ. Ստեփանեանց	1
Օր. Շ. Խասէակեանց	1	Պ. Յ. Քէշիշեանց	1
Օր. Թ. Սահաբաեանց	1	Պ. Յ. Կունժուլեանց	1
Պ. Յ. Տէր Սարգսեանց	1	Պ. Բ. Գաբրիէլեանց	1
Պ. Ա. Տէր Սարգսեան	1	Պ. Մ. Խումարեանց	1
Պ. Յ. Ստամբուլցեանց	1	Արժ. Պ. քչ. Մասնիշեանց	1
Պ. Յ. Տէր Դաւթեանց	1		

	Օրէ.		Օրէ.
Պ. Մ. Մուշեղեանց	2	Պ. Գ. Աղունեանց (Նուլեցի)	1
Պ. Հաջի-բաբ Բաղդամեանց	2	Պ. Յ. Զաքարեանց (Մեղրեցի)	1
Պ. Ա. Ալիբիլեանց	1	Պ. Յ. Տէր Զաքարեանց (Աղու)	1
Պ. Մ. Կարայիջեանց	1	Պ. Ա. Շահումարեանց (Շուշ)	1
Պ. Գ. Շամչեանց	1	Պ. Ա. Շահիկեանց	1
Պ. Մ. Ղարիբեանց	1	Պ. Գ. Տէր Գէորգեանց (Յղնե.)	1
Պ. Մ. Աղուլեանց	1	Պ. Ա. Փանեանց	1
Պ. Խ. Սիրականեանց	1	Պ. Խ. Մանուկեանց (Նուլեցի)	1
Պ. Գ. Տէր Պէտրոսեանց	1	Պ. Պ. Աւետիսեանց (Օրդու.)	1
Պ. Մ. Տէր Բարսեղեանց	1	Պ. Ա. Աւետիսեանց	1
Պ. Մ. Տէր Մկրտիչեանց	1	Պ. Օ. Սիմօնեանց (Աղուլեցի)	
Պ. Ա. Տէր Գրեգորեանց	1	Լ. Նորա որդին	3
Պ. Ղ. Ղազարեանց	1	Պ. Մ. Ոսկանեանց (Յղնեցի)	1
Պ. Վ. Տէր Պէտրոսեանց	1	Պ. Ա. Մովսիսեանց (Նուլեցի)	1
Պ. Գ. Ամասուշեանց	1	Պ. Ա. Մովսէսեանց	1
Պ. Յ. Խաչատրեանց	1	Պ. Մ. Իշխանեանց	1
Պ. Մ. Տէր Մարտիրոսեանց	1	Պ. Կ. Ղուկասեանց	1
Պ. Ա. Տէր Պողոսեանց	1	Պ. Գ. Դաշեանց (Ալբաբեցի.)	1
Գեղ. Գ. Վ. Սուրբէնեանց	5	Պ. Ա. Թովիշեանց (Աղուլեցի)	1
Պ. Վ. Շահխաթունեանց	5	Պ. Գ. Նաւասարդեանց (Նուլե.)	1
Արժ. Յ. ա. քչն Կոստանեանց	3	Պ. Կ. Յակոբեանց	1
Պ. Ա. Թաղանտոսեանց	2	Պ. Թ. Զարդարեանց	1
Արժ. Մ. քչն. Տէր Պօղոսեանց	2		
Պ. Կ. Զանկերիկեանց	2	ՍՍԱ.ԻՐԱ.ՊՈՂ	
Արժ. Մ. քչ. Տէր Պէտրոսեանց	1	Արժ. Բ. քչ. Բէկիզիլեանց	3
Օր. Տ. Մուշեղեանց	2	Արժ. Գ. քչ. Զաքարեանց	1
Պ. Մ. Աբաբաջեանց	1	Օր. Կ. Զաքարեանց	1
Պ. Կ. Առաքէլեանց	1	Պ. Կ. Գ. Կարախանեանց	1
Ս. Յ. Տէր Աստուածատրեան	1	Պ. Ա. Տէր Զաքարեանց	1
Օր. Ե. Սանոյեանց	1		
		Հին ՆԱԽԻՋԵԻԱՆ.	
		ՆՈՒԽԻ	
		Պ. Ա. Յրանցիլեանց (Տիւ.)	1
		Արժ. Մ. ա. քչն. Խասէակեանց	1

	Օրէ.		Օրէ.
Օր. Ե Աւետիքեանց	1	Պ. Գ. Սամուէլեանց	1
Պ. Յ. Մելիք-Բաշեանց	1	Մարիամ Սամուէլեանց	1
Պ. Ա. Տէր Մկրտչեանց	1	Գեր. Ն. Եպիսկոպոս	1
Պ. Մ. Մէլիքեանց	1	Գեր. Գ. Եպիսկոպոս	1
Պ. Յ. Տէր Եսայեանց	1	Պ. Մ. Սիմէօնեանց	1
Պ. Ս. Աբիեանց (Աբուլեցի)	1	Պ. Յ. Թումանեանց	1
Պ. Ս. Պողոսեանց	1	Պ. Գ. Ղազումեանց	1
Պ. Ս. Օրդուխանեանց	1		
Պ. Կ. Ազամեանց	1	ԲԱԳԻ	
Պ. Ս. Կ. Օհանեանց	1		
Պ. Ս. Մանուկեանց	1	Աւագ Գրեղորեանց	5
Պ. Մ. Ս. Ղարախանեանց	1		
Օր. Վ. Մէլիք-Շահնազարեանց	1	ՂԶԼԱՐ	
Պ. Բ. Մ. Բարախանեանց	1		
Պ. Խ. Ճահտեսի Բարասեանց	1	Տ. Թ. Կառկաճեանց	1
Պ. Ս. Տէր Սարգսեանց	1	Պ. Եղիշէ	1
Ս. քչն. Տէր Ստեփանոսեանց	1	Օր. Շերմազանեանց	1
Պ. Ն. Համբարձումեանց	1	Պ. Ա. Թանդոյեանց	1
Պ. Ա. Խօջայնաթեանց	1	Տ. Ս. Մամաջանեանց	1
		Մ. Մահտեսեանց	1
Ս. ԷՋՄԻԱՅԻՆ		Պ. Ն. Իզմիրեանց	1
		Տ. Մ. Էլարեանց	1
Պ. Մ. Սիմէօնեանց	1		
Ե. Սիմէօնեանց	1	ԹԻՖԼԻՉ	
Մ. Սիմէօնեանց	1		
Վ. Սիմէօնեանց	1	Պ. Յ. Տէր Յալսէփեանց	1
Գեր. Ս. Եպիսկոպոս	1	Պ. Մ. Կարախանեանց	1
Պ. Վ. Աբովեանց	2	Օր. Մերզոյեանց	1
Պ. Կ. Կոստանեանց	2	Տիկէն Մ. Խարաղեանց	1
Պ. Ա. Էլմասեանց	1	Պ. Ն. Շահբուղբեանց	1
Պ. Ս. Աբամէլիքեանց	1	Օր. Ն. Սիմոնարեանց	1
Պ. Ա. Ամատրեանց	1	Տ. Ա. Տէր Սարգսեանց	1
Պ. ԲԺ. Տէր Գրեղորեանց	1	Պ. Բէնդլեանց	1
Պ. Պ. Տէր Պէտրոսեանց	1	Պ. Գ. Տէր Յարութիւնեանց	1

« Ազգային գրադարան



NL0221993

45.121

